

«ՈՒԽԱ ԱՐԱՐԱՏԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ

# ՈՒԽԱ ԱՐԱՐԱՏԻ



Թիվ 1, ապրիլ, 2005

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼՈՒՄ  
ԱԶԳԱՀԱՎԱՔ ՀԱՅՐԵՆԻԲՈՒՄ

# ՎԵՐԱՆՈՐՈԳ ՈՒԽՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒՄ,  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՊՆԴՈՒՄ,  
ԱՇԳԱՇՎԱՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ուխտ Արարատի»

կազմակերպության հայտարարությունը

...էջ 1...

**Մեծ եղեռնի 90-րդ տարելիցը**

Մեծ եղեռն. իրողություն և դատապարտում

...էջ 2...

Մավր Դամիելյան

Միջազգային համաժողով

...էջ 3...

Արիս Ղազինյան

**Հայոց ցեղասպանություն. անդրադարձ**

Հարցազրույց Թեսսա Հոփմանի հետ

...էջ 4...

Հասմիկ Գուլակյան

**Ազգային-ազատագրական պայքար**

Ինքնապաշտպանական մարտերը Մեծ եղեռնի տարիներին

...էջ 7...

Հովհաննես Զատիկյան

**Մշակութային եղեռն**

Հայկական հուշարձանների ճակատագիրը հարևան երկրներում

...էջ 9...

Արմեն Հախնազարյան

Ապրիլյան իրադարձությունների ժամանակագրությունից

...էջ 12...

**Հայոց նորագույն պատմությունից**

Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը Երևանում

...էջ 13...

Նվարդ Բորյան

**Ազատագրական պայքար. նորագույն փուլ**

ԱՍԱԼԱ-ի պատմությունից

...էջ 17...

Տիգրան Փաշարեզյան

Արամ Բասմաջյանի նահատակության 20-րդ տարելիցը

...էջ 20...

Հասմիկ Գուլակյան

«Սա Հայաստան է և... վերջ»

...էջ 21...

Գագիկ Գինոսյան

**Տարածաշրջան**

Օսմ. կայսրության վերջին տասնամյակների պատմությունից

...էջ 25...

Էմմա Բեգիջանյան

**Հայոց ցեղասպանություն. տեսակետ**

«Երնիկ զտումը ցեղասպանություն է»

...էջ 28...

Հալիլ Բերքթայ

Ինչպիսին կլիներ Գ. Նժենի մերօրյա ելույթը

...էջ 30...

Զորի Զորոյան

**Մենք՝ օտար մամուլում**

Արաբերեն իրատարակություններ՝ հայկական նյութերով

...էջ 31...

Լևոն Չուլարյան

**Նոր իրատարակություններ**

ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ իրատարակությունները

...էջ 34...

ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ  
«ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ»  
կազմակերպության  
պարբերական

Տպաքանակ՝ 1500  
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՌՅՈՒՐՈՒ

Համարի թողարկման  
պատասխանառու՝  
Գևորգ Յազդյան

Ստորագրվել է  
տպագրության՝  
4. 05. 2005

Խնճագրության հասցեն՝  
375023, Երևան-23,  
Ազարանգեղոսի փող., 2

OUKHT ARARATI -  
Official periodical of  
“Oukht Ararati”  
organisation

EDITORIAL BOARD

Responsible of the issue:  
Gevorg Yazedjyan

Address: 375023,  
Yerevan-23,  
Agatangehosi str. 2

«ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ»  
ամսագրից նյութեր  
արտատպելիս աղբյուր  
չհեեւ և հեղինակի անունը  
չնշեւը բարոյական է».

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻ

(ՀԱՅԵՐԵՆ ՀԱՊԱՎՈՒՄՈՎ՝ ՀԱՀԳՔ, ՕՏԱՐ՝ ԱՍԱԼԱ)

# ԴԻԴԻ ԵՐԵՐԵՇԻ

ՆԱԽԿԻՆ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏԱՍԱՐՏԻԿՆԵՐԻ

ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

30 տարի առաջ՝ 1975 թ. հունվարի 20-ին ՀԱՅԳԲ-ն ծննեց ուղղորդելու հայոց ազգային-ազատագրական պայքարը նոր ժամանակներում, և մենք գինվորագրվեցինք նրան: Նա փորձեց պատասխաններ գտնել հայության հուզող հին ու նոր հարցադրուներին: Մեծ եղենից անցել էր 60 տարի, իսկ մարդկային խիճը, չնչին բացառություններով, լրում էր: Հայոց Հայրենիք՝ բուրքերի գրաված տարածքներն սպասում էին իրենց իսկական տերերին, Հայոց Արևելից կողմանց և Զավախիք հայությունը՝ միանալու խորհրդային Հայաստանին: Սփյուռքի հայությունը, ավանդական կուսակցությունների հոչակած ինքնանպատակ հայապահանության բաղաքականության բաղաքականության հետևանքով, օրի օրի խրվում էր ծուլման ճահիճում: ՀԱՅԳԲ-ն հանգեց ինքնանպահ եղանական բարակացության բռնագրավված հայկական հողերի ազատագրության ճանապարհ մեկն է՝ զինյալ ազգային-ազատագրական պայքարը, իսկ այդ ճանապարհը հարկավոր է կտրել համախմբված, հեռու ամեն տեսակի տարածայնություններից, որովհետև հայության հայրեն գոյատևման միակ երաշխիքը Հայոց Հայրենիքուն հանամնելուն է:

ՀԱՅԳԲ-ի սկզբնավորման ժամանակ հայկական համրապետությունը խորհրդային Միության կազմում էր և չուներ համահայկական խնդիրներով գրադպելու հնարավորություն: Այսօր պատկերն այլ է: Մեկ տասնամյակից ավելի է ունենք միջազգայնորեն ճանաչված սեփական պետականություն՝ անկախություն հռչակած Հայաստանի Հանրապետությունը, Հայրենիքի ազատագրված տարածքներ, հաղթանակած բանակ: Այդուհետեղ, բացի Հայոց Արևելից կողմանց տարածքների մի մասից,

Հայոց Հայրենիքի մեծագույն մասը դեռևս բռնագրավված է, հայրենադարձության փոխարեն շարունակվում են կործանարար արտագաղթն ու «սպիտակ» եղեռնը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը օտարների համար վերածվել է աշխարհաքաղաքական շահերի մանրադրամի, իսկ հայերի մի զգալի զանգվածի համար էլ այն հավասարեցվել է Հայկական հարցի «լուծման» ինքնախարեկանքի:

Հայությունն իր բոլոր հատվածներով հայրենաբնակ և սփյուռքված հայություն ու հայոց ազգային պետություն, պարտավոր են հետապնդել Արցախյան հարցի լուծումը և պահպանել ու էլ ավելի ամրապնդել հայկական երկու համրապետությունների տարածքային ամրողականությունն ու գերիշխանությունը: Բոլորս պարտավոր ենք հետապնդել նաև Հայկական հարցի լուծումը, որը, ըստ մեզ, նշանակում է հետևյալ եռամիասնությունը:

1. Հայրենիքի Հայկական լեռնաշխարհի գրավյալ բոլոր տարածքների վերատիրությունը,

2. Այդ տարածքներուն բացառապես հայկական գերիշխանության հաստատումը,

3. Ազգահավաքը Հայրենիքում:

Հայկական հարցի լուծման հետապնդումը հնարավոր է համազգային ջանքերով հայոց ազգային պետության գլխավորությամբ:

Կոչ ենք անուն հայկական բոլոր կազմակերպություններին և, ընդհանրապես, աշխարհով մեկ սփյուռքած հայությանը՝ համախմբվելու Հայոց միակ Հայրենիքի գաղափարի և Հայոց ազգային պետականության իրողության շուրջ:

ՀԱՅԳԲ-ի 30-ամյակի, Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի, մաշտոցյան գրեթի գյուտի 1600 և

հայոց առաջին ռազմական հաղթանակի թելի դեմ Հայկի ու հայկյանների ազատամարտի 4500-ամյակների այս տարում, մենք՝ այս նորաստեղծ կազմակերպության անդամներս, խոստանում ենք շարունակել մեր պայքարը նոր պայմաններում, ուստի և պարտավորվում ենք՝

1. Ամենուրեք քարոզել և շարունակել սեփական օրինակով ամրապնդել հայոց միակ Հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի, նրա ամբողջական ազատագրության և սիյուռքահայության՝ Հայոց Հայրենիք վերադարձով ազգահավաքի գաղափարները:

2. Հնարավորինս սատարել մեր պետությանը, նրա միջոցով տեր կանգնել մեր ազգային իրավունքներին և ապահովել հայ անհատին վայել կենսակերպն ու դրա հարատևումը հայոց բնօրրանում:

3. Հայ ազատամարտիկին վայել վարքագծով ու կենսակերպով օրինակ ծառայել եկող սերունդներին:

Մեր հանդես ենք գալիս միայն մեր անունից և բույլ չենք տա, որ շահարկեն նորագույն զինյալ ազատագրական պայքարի նահատակների, նախկին քաղաքանարդարների և ազատամարտիկների հիշատակը, վաստակն ու գործը:

Տարենք անց կողք-կողքի գալով ու միավորվելով, մենք՝ Արարատի ուստանակերպներ, մեկ անգամ ևս վերահաստատում ենք Ազգին ու Հայրենիքին անմնացորդ նվիրվելու մեր երրումը՝ «սրբազն խննթերի» ու կատական ուխտով:

Երևան, 24-ը ապրիլի, 2005 թ.  
**«Ուխտ Արարատի» Հայաստանի ազատագրության հայ գաղտմի բանակի նախկին քաղաքանարդարների և ազատամարտիկների միություն հասրակական կազմակերպություն**

«Ուխտ Արարատի» ամսագիրը շարունակելու է վերջին տարիներին Երևանում լույս տեսած, սակայն ինչ-ինչ հանգամանքների մերումով դադարեցված «Վասն հայության» և «Ծրջադարձ» պարմերականների ավանդակություններն ու գաղափարական ուղղվածությունը:

Մեր ամսագրի նույնականացնելու համար կազմակերպության հիմնադրամը կազմակերպությունը՝ 2005 թ. ապրիլի 24-ի հայտարարության մեջ:

Խնբագրություն



- Ինչպիսին է Թուրքիայի հասարակական կարծիքը Չայոց ցեղասպանությունից 90 տարի անց: Այս մասին իր ուսումնասիրությունների արդյունքում հրապարակեց սոցիոլոգ **Գևորգ Պողոսյանը**: Թուրքիայի 34 և ՀՀ 21 քաղաքաներում հարցումներից պարզվել է, որ թուրքերը հայերի մասին ավելի քիչ բան գիտեն, քան հակառակը: Նրանց կարծիքով ՀՀ բնակչության թիվը յոթուր միլիոն է, և մեր հանրապետությունը ելք ունի դեպի Աև, Կասպից և Միջերկրական ծովեր: Յարցվածների 54% տոկոսի կարծիքով՝ հայերը քրիստոնյան են, 22% տոկոսի կարծիքով՝ հուդայական: Յուրաքանչյուր հինգերորդ թուրք գիտե, որ ցեղասպանություն է տեղի ունեցել: Առավել առաջադեմ, հատկապես կրթական բարձր մակարդակ ունեցող թուրքերը հոգեբանորեն պատրաստ են ցեղասպանության ճանաչմանը:

- Միջազգային իրավական նորմերով արդյո՞ք դատապարտելի է թուրքերի կատարած ցեղասպանությունը՝ Վկայակոչելով բազմաթիվ օրենդրական ակտեր՝ ՀՀ Սահմանադրության դատարանի փոխնախագահ, իրավագիտ դոկտոր **Վարդիմիր Յովհաննիշյանը** նշեց, որ այս հարցի պատասխանը դրական է: Չնայած մեծ տերությունները չկանխեցին հայերի ցեղասպանությունը, սակայն դեռևս Սկրի հաշտության պայմանագրի նախապատրաստումից առաջ միջազգայնացվեց թուրքերի պատասխանատվության անհրաժեշտության հարցը: Քենց իրենք՝ թուրքերը դատեցին ցեղասպանության համազարքությունին:

- Հայերի և այլ ազգերի բռնի մահ-  
մեղականացումը պետական քաղա-  
քականություն էր Թուրքիայում, որն  
իրականացվել է դարեր շարունակ:  
ԵՊԴ հայոց պատմության ամբիոնի  
վարիչ, պատմ. գիտ. դոկտոր **Բարկեն**  
**Դարությունաճր** նշեց, որ միայն 1915-  
1916 թթ. առնվազն 250 հազարից ավել-  
լի կին ու երեխա բռնի մահմեղակա-  
նացվել են: Նրանք այսօր էլ իրենց ըն-  
տանիքներում քրիստոնյա են, իսկ դր-  
սում ներկայանում են որպես մահմե-  
դականներ: Ներկայումն ննան հայերի  
թիվը Թուրքիայում 400 հազարից ավել-  
լի է: Կաղուց արդեն ժամանակն է ՀՀ-

ում ունենալ ռադիո-հեռուստատեսային կայաններ՝ նրանց համար թուրքերն և քրիերներ հատուկ հաղորդումներ հեռարձակելու համար, որպեսզի կարողանանք նրանց մեջ աստիճանաբար արթնացնել ազգային զգացումներ, նրանց վերադարձնել ազգային արմատներին:

- Թուրքերը վկայակոչում են, որ 1948 թ. հետամբերի 9-ի կոնվենցիան հետադարձ ուժ չունի, բայց ինչպէ՞ս եղավ, որ այն տարածվեց դրանից առաջ Երկրորդ համաշխարհային պատերազմում հրագործված հրեաների ցեղասպանության վրա, - ասաց պատմ. գիտ. դրվագը **Ստեփան Ստեփանյանը**: - Եվ ապա՝ այդ կոնվենցիայից քանի տարի անը՝ 1968 թ. նոյեմբերի 28-ին, ընդունվեց մի նոր կոնվենցիա, ուր նշված էր, որ ցեղասպանության հանցագործությունը վաղենություն չունի: Ժամանակն է, որ անցնենք պայքարի երկրորդ փուլին՝ ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պահանջից անցնենք նրա հետևանք-ների վերացման գործընթացին:

- Սելինարանելով 1920-1990 թթ. խորհրդային իշխանությունների վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման նկատմամբ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր Աշոտ Մելքոնյանը հանգամանորեն ներկայացրեց ՀՀ ղեկավարների քաղաքականությունը՝ անկախության հռչակումից հետո, երբ թվում էր, թե Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը կդառնա արտաքին քաղաքականության բաղադրամաս։ Բայց այդպես չեղավ։ 1990 թ. օգոստոսին, երբ քննարկվում էր Հայաստանի Անկախության հռչակագիրը, բուռն վեճեր առաջացան Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցի շուրջ։ 1995 թ. ապրիլին ՀՀ առաջին նախագահն իր ծառում Հայոց ցեղասպանությունը որպես զուտ զգացական խնդիր։ «Այս մոտեցումները վիճելի են և գիտականորեն սխալ, - ասաց բանախոսը։ - Այդ քաղաքականությունը շարունակվեց մինչև 1998 թ., որից հետո հանրապետության նախագահի մակարդակով հարցը հնչեցվեց ՄԱԿ-ում, այնուհետև՝ Ստամբուլում։ Այս հարցում պետական քաղաքականությունը շրջադարձ կա-

Ապրիլի 18-19-ը ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սրահում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Յայոց ցեղասպանության 90-րդ տարելի իշխան: Չորս տասնյակից ավելի գեկուցումներում ներկայացվեցին Թուրքիայի նվազողական քաղաքականությունը (սկսած դեռևս 11-րդ դարից), հայերի և մյուս ազգային փորձամասնությունների՝ պետական մակարդակով իրագործված ցեղասպանությունը:

Գիտաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահի, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Նրապարակվեցին Ամենայն Դաշտային Կարողիկոս Գարեգին Բ-ի և ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանի ուղերձները, ելույթ ունեցակ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

տարեց. մի շարք պետություններ ճանաչեցին Հայոց գեղասպանությունը:

Ըստ Ա. Սելզոնյանի՝ այդ մարտավարությունը պետք է շարունակվի, և Ելավելի ուժեղացվի ճնշումը Թուրքիայի վրա:

\* \* \*

Գիտաժողովի երկօրյա միստերից հետո հրավիրվեց «Վլոր սեղան», որի մասնակիցները նշեցին ցեղասպանության ճանաչման պայքարի հետագա ուղիները: «Վլոր սեղանը» վարեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրին, պատմ. գիտ. դոկտոր **Նիկոլայ Դովիհանիսյանը**:

- Իննուն տարի խոսում ենք ցեղասպանության ծանաչման ու դատապարտման մասին: Որբա՞ն կարելի է նույն ձևով շարունակել, - ասաց գիտնականը: - Դիմա թուրքերը կնտածեն թող որբան կարող են՝ խոսեն, հարցը որքան հնանա, այնքան կպոռացվի: Այլև նշանակություն չունի, թե որքան աղբյուրային նյութեր ենք կուտակել, օտար լեզուներով որքան գրեթե ենք հրատարակել: Եթե անզամ այդ ամենը

թարգմանենք և հրատարակենք աշխարհի բոլոր լեզուներով, դրանով հարցը չի լուծվի: Թուրքիան չի ուզում ճանաչել ցեղասպանության իրողությունը ոչ նրա համար, որ արխիվային ինչ-որ նյութերի պակաս կա: Դա պատճառաբաներս պետք է սրանից եղարակացություններ ամենք, նոր ուղիներ որոնենք մեր հետագա ուսումնասիրությունների դաշտն ընդլայնելու համար: Օրինակ՝ պարզվում է, որ աշխարհում շատ ուժեր դնում են այն հարցը, թե ընդունված հանրահայտ կոնվենցիաները որքանո՞վ են կիրառելի Դայոց ցեղասպանության ճանաչման համար: Թուրքերն այս հարցում մեզանից առաջ են անցել՝ վկայակոչելով՝ այդ կոնվենցիաները հետաքարձ ուժ չունեն: Պետք է պարզենք՝ ի՞նչ է նշանակում ճանաչել ցեղասպանությունը... Չեն ԺՄուռն, ունենք ներքբերումներ, բայց դրանք իրենց սպառել են, արված աշխատանքը բացատրական է, որը գիտական առումով բավարար չէ: Պետք է Դայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարը բարձրացնել նոր նակարդակի: Ինչպես:


Պատրաստեց Մավր Դանիելյանը

Հայոց Ցեղասպանության 90-րդ տարե-լիցին նվիրված միջոցառումների շարքում առանձնահատուկ էր ապրիլի 20-21-ը Երևանում տեղի ունեցած «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» միջազգային համաժողովը: Պետական հանձնաժողովի հիվանու ներքո անցկացված միջոցառումը կազմակերպել էր ՀՀ ԳԱ նախարարությունը: Նախապես ազդարարված էր համաժողովի գլխավոր նպատակը՝ «Մեկ անգամ ևս փորձել հասկանալ ցեղասպանության բնույթը, ուսումնասիրել ցեղասպանության ակունքները, գտնել բանաձևեր՝ այն կանխելու և հակագդելու համար»: Այլ կերպ ասած՝ միջոցառումն ի սկզբանե նպատակ չուներ որոնել կամ արձանագրել բուն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման քաղաքան ուղիներ և առավելապես կրում էր գիտաժողովի բնույթը: Ուստի փոքր ինչ կանխակալ մոտեցման առկայության դեպքում լիովին հնարավոր է դաշնում միջոցառումը դիտարկել ԱՍՍ Պետքարտուղարության՝ մեզ հրամցրած պաշտոնաթեզի համատեքստում, այն է Հայոց ցեղասպանության խնդիրը գիտական է, քաղաքական ուսումնասիրությունների առարկա չէ: Սա, ի դեպ, քավական լուրջ հանգամանք է, որը կարծես վրիպել է համաժողովի աշխատանքները լայնորեն լուսաբանող լրատվամիջոցների ուշադրությունից: Համեմայնդեպս՝ չի արժանացել համարժեք ներկայացման...»

Այս տեսակետի օգտին է վկայում նաև Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության և պատմության պրոֆեսոր, տիբրահեռակ Ռոնալդ Սյունուն հիված պաշտոնական հրավերի փաստը: Համաժողովին մասնակցում էին հայ-թուրքական հաշտեցման և «անաշար երկխոսության» վաշինգտոնյան ռազմավարության ջատագովներ՝ Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Շովհաննիսյանը և ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի նախկին գլխավոր խորհրդական, Միջիգանի համալսարանի հայոց արդի պատմության ամբիոնի վարիչ ժիրայր Լիպարիտյանը: Վերջինս, ի դեպ, նույնիսկ նախագահում էր նիստերից մեկում: Բերված փաստերը թերևս անուղղակիրեն, սակայն ամրողացնում են վերը նշված թեզի նասին հնչեցված տեսակետու: Ավելին, միջոցառման մասնակիցների քաղաքական ճամբարը ներկայացնող Խուան Սենտեզը՝ ԱՄԿ-ի գլխավոր քարտուղար՝ Ցեղասպանությունների կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականը, իր ելույթում նույնիսկ հարկ չհամարեց Հայոց եղեռնը որակել ցեղասպանություն: «Իմ պաշտոնի նկարագիրը թույլ չի տալիս որևէ գնահատական տալ տեղի ունեցած դեպքերին, - հայտարարեց նա: - Իմ հիմնական գործը ցեղասպանությունների կանխարգելումն է: Այն, ինչ տեղի ունեցավ ձեր ազգի հետ 1915-1923 թթ., որակում եմ ողբերգական դեպքեր, որոնց մասին հիշողությունը մեզ օգնում է մեր կանխարգելման աշխատանքներում: Ասվածը չի նշանակում, թե խուսափում եմ որևէ կոնկրետ բարից, բայց, որպես ԱՄԿ-ի պաշտոնյա, պետք է արտահայտեմ իմ կազմակերպության կարծիքը»:

Որքան անկեղծ, նույնքան և ցիմիկ այս խոստովանությունը, կարծում ենք, մեկնաբանությունների կարիք չունի...»

Մյուս կողմից՝ «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» համաժողովը, որպես արդեն սոսկ գիտական միջոցառում, մեկ անգամ ևս կարողացավ բացահայտել հայրենական ցեղասպանագիտության ոլորտում առկա խոցերը և ըստ այդմ նախանշել ոլորտի զար-



գացման հեռանկարային ուղիները: Այս յուրատեսակ ահազանգ էր՝ ուղղված մեր մասնագետներին, քանզի շատերը տակավին անկարող են ամրագրել համաշխարհային քաղաքականության հրօմանքում պատվող նրբությունները՝ նրանց ընտելացնելով ազգային զգացողությանը: Մասնավորապես, ՀՀ ԳԱ արևելագիտության հնատիտուտի Թուրքիայի բաժնի վարիչը Ռուբեն Սաֆրանստյանը (անշուշտ, մեր լավագույն գիտնականներից մեկը), խոստովանում է, որ ինքը նույնիսկ ծանր չէ ԱՄՆ-ի ներկայիս նախագահ Ջորջ Բուշի՝ «Թուրքիան ժողովրդավարության 150-ամյա ավանդույթներ ունեցող երկիր է» հայտարարությանը: «Կարծում են, որ նան լուրերը չեն համապատասխանում իրականությանը», - նշեց նա ապրիլի 19-ին ՀՀ ԳԱ հրավերած գիտաժողովում (Զորջ Բուշի «ստամբուլյան» այս հայտնի հայտարարությունը ժամանակին լայն արձագանք է գտել նաև հայրենական ԶԼՄ-ներում): Հայ մասնագետների ոչ միշտ ճկուն լինելու խնդիրը, որպես անհապաղ առողջացման ենթակա երևույթ, այսպիսով մնում է ազգային օրակարգում: Ինչև...

Աշխատանքային երկու օրերի ընթացքում ներկաների դատին հանձնվեց շուրջ երեք տասնյակ գեկույց: Յատկանշական է, որ բանախումների գերակշռող մասը ներկայացնում էր ընդամենը չորս երկիր՝ ԱՄՆ, Թուրքիա, Խորայի և ՀՅ: Կարծում ենք, որ այս հանգամանքը, ինչպես նաև առաջին երեք պետական կազմավորումների ռազմավարական դաշնակից լինելու փաստը, արժանի են հասուլ ուշադրության (օրևուների, արաբների, ֆրանսիացիների և այլոց բացակայությունը հաստատում է այս համաժողովի՝ ամերիկա-հրեական օրինություն ունենալու ենթադրությունը - խմբ.):

«Անձանք ինձ պատասխանատու չեմ գգում 1915 թվականին տեղի ունեցածի համար և չեմ կարծում, թե մի սերնդի նեղերի համար պիտի պատժվեն մյուս սերունդները, - նշեց իր ելույթում Ստամբուլի «Բիլգի» համալսարանի պրոֆեսոր Մուրատ Բելգեն: - Այդուհանդեռ, ես մի պետության քաղաքացի եմ, որտեղ դա տեղի է ունեցել, և որտեղ ժմտման քաղաքականությունը շարունակվում է: Այդ հիմաստով ես պատասխանատու եմ»:

«Քանի ներ Խորայելում գործում է ներկայիս կուալիցիոն համակարգը, նա կշարունակի իր արագմատիկ քաղաքականությունը՝ տեղի տալով Թուրքիայի ճնշումներին, - ընդգծեց իր ելույթում Հոլոքոստի նահատակների և հերոսների հիշատակի հանձնաժողովի գիտական խորհրդական եհուդա Բաուերը: - Ես մի ճշնարսություն ասեմ եթե ԱՄՆ կառավարությունը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, դրանից 30 վայրկյան անց այն կճանաչի Խորայելը»:

«Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր» համաժողովի մասնակիցների թվում էր նաև Լեհաստանի նախկին նախագահ, Խաղաղության Նորելյան մրցանակակիր Լեհ Վալենտին, որն իր ելույթն սկսեց այսպես. «Եթե մեզանից որևէ մեկը նորանա այդ հանցագործությունը և դրա պատճառահատ տառապանքները, թող Աստված մոռանա մեր մասին»:

Բայց մի՞թե հիշողությունն իր մեջ չպետք է կրի նաև առարկայական իմաստ, մասնավանդ, եթե խոսքն այն միակ ազգի մասին է, որ ստիպված է կառուցել սեփական պետականությունը իր պատճառահատ հաստվածում...

**Արև Ղազինյան**

- Գիտությունը, գրա-  
հրատարակչական գործը  
և հասարակական գոր-  
ծունեությունը Զեզ հա-  
մար այնքան են սերտա-  
ծել, որ դարձել են այլևս  
անբաժանելի: Ինչպես ս  
կսպեց Զեր ծանոթությու-  
նը Դայոց ցեղասպանու-  
թյան պատմությամբ:

- Դա արդեն 30-ամյա պատմություն ունի: 1973 թ. Բեռլինի համալսարան-Ներից մեկը խնդրեց ինձ դասախոսությունների միշտաքաղաքացիությունը մասին: Այն ժամանակ գոյություն ուներ բազմազգ սովետական գրականությունը: Տասը երեկոյի ընթացքում Ելույթներ ունեցած հորիդային Միության առանձին հաճրապետությունների մասին, իսկ Անդրկովկասից ընտրեցի Յայաստանը: Սակայն, զբաղվելով Յայաստանի պատմության և գրականության ընդհանուր ուսումնասիրությամբ, նկատեցի, որ թե՛ պատմության, թե՛ գրականության մեջ անընդհատ ներկա է Յայոց ցեղասպանության թեման: Միաժամանակ ինձ համար պարզ դարձավ, որ ցեղասպանության թեմայի այդ արտահայտությանը հաջարդությունը կապ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

## ԱՆԴՐԱԴԱՐՁ



## ԹԵՍԱՎ ՀՈՒՄԱՆ.

## «ԿԱՐՑՈՒՄ ԵՄ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԶՊԵՏՔ Է

## ԷԺԱՆ ԳՈՒՐՍ ԳՎ ԻՐ ԱՆՑՅԱԼԻՑ»

2003 р. սեպտեմբերին Երևան էր ժամանել գերմանացի փոխնախարար, հայաստակական գործիչ, հրավարակախոս, «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների պաշտպանության ընկերություն» միջազգային իրավապայտապան Լազմաներապուրյան (Վուսնիկս ազգերի համագործակցության) նախագահության անդամ և համակարգործ խարի ղեկավար, Բեռլինի՝ Հայուսառանի լրատվության և փաստագրության կենտրոնի համանախազարդ թեսառանաբան Հովհաննես:

Սեպտեմբերի 24-ին Ազգային գրադարանն նուան պարզեստեց հայ ատաշին տպագրիչ Հայոց Սեղասպատի անվան մերժարվ՝ հայանական գրծութեալիքն և հայ ժողովրդին մասուցած ծառադրյալների համար: Այս օրենքն էլ մեր գործադրութիւնին Հայմանին եկաւ:

թուրքական պետական անվտանգության ժառանգությունների տեսակետները՝ արտաքին և ներքին քաղաքականության մեջ։ Դա ժողովրդի ցեղասպանության հարցը մինչև այսօր թուրքական թէ գիտության, թէ հրապարակախոսության մեջ տարու է։ Այն թուրք քաղաքացիները, ովքեր հանարձակվել են որևէ տեղ խոսել Հայոց ցեղասպանության մասին, քրեական հետապնդման են ենթարկվել։ Եթե թուրքական հրապարակախոսության և պատմագիտության մեջ խոսվում է ցեղասպանության մասին, այն որպես կանոն ստանում է «այսպէս կոչված» որակումը։ Դա վերաբերվում է ոչ միայն Հայոց ցեղասպանությանը, այլև 1912-22 թթ. Օսմանյան կայսրության տարածքում այլ ազգերի՝ հույների, արամեացիների և ասորիների նկատմամբ կատարված հանցագործություններին։ Դուք հավանաբար գիտեք, որ այս տարվա (2003 թ. - Յ. Գ.) ապրիլի 13-ին Թուրքիայի կրթության նախարարի հրահանգով դպրոցականները պետք է շարադրություններ գրեին, որոնցում պետք է ժմտեին ցեղասպանությունը՝ վերոհիշյալ բոլոր ժողովուրդների նկատմամբ։ 2000-2001 թթ. փորձեցինք հանրագիր (պետիցիա) մուցնել Գերմանիայի խորհրդարան՝ նվիրված Հայոց ցեղասպանության հարցին։ Ին գործընկեր ժիրայր Քոչարյանի հետ այս աշխատանքային խմբի համակարգողն է։ Մեզ հաջողվեց այն դարձնել միջատական երկողնանի հարաբերությունների թեմա՝ Գերմանիայի և Թուրքիայի միջև։ Իրեւ որոշակի արդյունք՝ գերմանացի պետական քարտուղարը իր թուրք գործընկերոց հետ քննարկել է այս հանրագիր հարցը։ 16 հազար ստորագրություն է դր-

Վել այդ փաստաթղթի տակ: Այս պայմաններում թուրքական լրատվամիջոցներն իմ դեմ արշավ սկսեցին, ինձ որակեցին իրու գերմանական գաղտնի գործակալության գլխավոր գործակալ, որ իր իմ հասուլ կ հանձնարարությունն էր Թուրքիայի ապակայունացումը: Կարծում եմ՝ սա մեկ նպատակ էր հետապնդում՝ թուրք գիտնականներին և իմ գործընկերներին վախճեցնել և զերծ պահել ինձ հետ գործակցելուց: Ես դատավարություն սկսեցի թուրքական լրատվական մեջ կոնցեռների դեմ: Այն վիրավորանքները, որոնք հրապարակվում էին «Հուրիեր» թերթում, ոչ միայն վիրավորական էին, այլև վճառակար՝ մասնագիտական առումնու: Ես նարդու հրավունքների պաշտպան եմ և ոչ թե գերմանական գաղտնի ծառայության գործակալ:

**- Դուք իիշատակեցիք Սողոմոն Թեհիրյանի ա-նու- ծը: Այդ դատավարությանը 1921 թ. Գերմանիան, փաստորեն, ծանաչեց Հայոց ցեղասպանությունը: Սակայն դա պաշտոնապես չի վավերացվել: Չեր կարծիքով՝ ինչո՞ւ Գերմանիան մինչ այժմ չի ծանաչել այդ հանցագործությունները:**

- Թալեար փաշայի դատավարությունը հայերը մի քիչ միակողմանի են ներկայացնում՝ իրու արդարության հաղթանակ: 1980-ական թթ. հայտնաբերել և հրապարակել են այս դատավարության նախաքննության մասին նյութեր: Պարզ էր, որ այն ժամանակ գերմանական պետությունը և ռուսական արդարադատությունը փորձել են անպայման ազդեցություն ունենալ այս դատավարության վրա: Գերմանական կողմը շահագրգուված էր, որ այն հնարավորինս արագ ընթանաւ տկի ոչ թե 3 օր, այլ ավարտվի 1,5 օրում և երկրորդ՝ որպեսզի հնարավորինս քիչ քաղաքական դրդապատճառներ քննարկվեն: Սողոմոն Թեհիրյանի դատապաշտպանները չեն կարող այնքան վկաներ բերել դատարան, որքան իրենք կցանկանային կամ կարողանային: Ավելի մեծ տեղ տրվեց հոգեբանական վիճակի նասին կարծիքներին: Թեհիրյանի արարքը փորձեցին ներկայացնել իրու անձի հոգեվիճակի ազդեցությանը կատարված արարքը: Անեն դեպքում, առաջին անգամ ցեղասպանության նյութը դատավարության հարց դարձավ Եվլոպայում: Մինչ այդ 1919 թ. Թուրքայում փորձ էր արվել դատավճիռ կայացնել նրանց նկատմամբ, ովքեր իրազրտել են ցեղասպանությունը: Ինչպես գիտեք, կայացվել են որոշ դատավճիռներ: Սակայն ցեղասպանության քաղաքական պատասխանատունները կարողացան հեռանալ երկրից, նաև՝ գերմանացների օգնությամբ: Թուրքան երկու անգամ դիմել է Գերմանիային, որպեսզի Թալեար փաշային հետ ուղարկեն: Բայց երիտասարդ գերմանական պետությունը մերժել է այդ խնդրանքը այն հիմնավորմամբ, որ Թալեարն իրենց լավ դաշնակիցն է:

Այն, որ մենք երրորդ հանրապետությունում ցեղասպանությունը չենք ճանաչում, կարելի է անվանել ցեղասպանության պատմականացում: Մեզ մոտ անձնական խոսակցությունների ժամանակ չեն ժխտում, որ ցեղասպանությունը եղել է, սակայն ասում են՝ դա խորհրդարանի քննարկման թենա չէ, բունդեսթագը չպետք է քաղաքի պատմական թենաներով: Երկրորդ՝ նրանք փորձում են այս խնդրան ներկայացնել իրու երկու պետությունների՝ Թուրքիայի և Հայաստանի միջև եղած երկրության գործ: Երրորդ՝ այն ամենը, ինչ կարող է անել Գերմանիան, դա պարզապես թուրք-հայկական երկխոսությունը խթանելն է: Իհարկե, այս փաստարկումների ժամանակ անտեսվում է, որ հայոց պետությունը չպետք է նույնացվի հայ ժողովրդի հետ, որովհետև հայերի մեջ նաև ապրում է արտասահմանում, իսկ Հայոց ցեղասպանության հարցը համահայկական հարց է: Եվ այստեղ խոր ունեն ասելու թե՛ Սփյուռքը, թե՛ Լեռնային Ղարաբաղը, թե՛ Հայաստանը: Սա է քննարկման այն փուլը, որում այսօր գտնվում ենք Գերմանիայում:

**- Իսկ ինչպես եք վերաբերվում այն մեղադրանքին,**

**որ հասցեագրվում է Արածին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցներին՝ Ավստրո-Շունգարիային և Գերմանիային՝ Հայոց ցեղասպանությամբ մասմակից լինելու համար:**

- Ավստրո-Շունգարիան այլևս գոյություն չունի. Ավստրիան նրա իրավահաջորդն է, ինչպես և մենք ենք կայզերական գերմանիայի իրավահաջորդը: Ավստրիայի մասին ոչինչ չեն կարող ասել: Ինչ վերաբերում է Գերմանիային, ասեն, որ մենք աշխատում ենք մարդու իրավունքների հետ կապված բոլոր հարցերը մշակել, իհմնավորել և հասկանալ: Գերմանացիների մեղակցության մասին կան տարբեր տեսակետներ: Որքան ես գիտեն, մինչև իհմա չի հաջողվել ապացուցել, որ Գերմանիան հայերի ոչնչացման քաղաքականության մեջ կարող այնքան անմիջական մասնակիցն է եղել: Մեր առաջադրանքն է ապացուցել, որ Գերմանիան առաջին իսկ վայրկյաններից շատ լավ տեղյակ է եղել այդ բոլոր գործողություններին: Մեր դաշնակից և Թուրքիայի բոլոր գավառներում ունենալոք հյուպատուսարաններ: Եվ հյուպատուսարանները, և դեսպանատները գեկուցել են կենտրոններ՝ կ Պոլիսին: Պոլիս, իսկ այնտեղից տեղյակությունները հայուղին է Պոլիսա քաղաքի հերոսամարտը: 1915 թ. հյուտեմբերին գերմանացի գինվորականն է դեկապարել հայկական քաղամասի պաշարումը: Այդ նույն ռազմական գործիքը՝ Վոլֆ Սկիլը, դեկապարել է նաև Մուսա լեռան պաշարումը: Առանձին հարց է հազարավոր հայ տղամարդկանց տաժանակրության քշելը: Թուրքերն այդ մարդկանց տրամադրել են գերմանացիներին իրու ծրի ծրի աշխատություն, իսկ աշխատանքից հետո բոլորին ոչնչացրել: Այսօր Գերմանիայում Վարում են երկրորդ համաշխարհային պատերազմի տաժանակրություններին հասուցելու քաղաքականություն: Կարելի է ենթադրել, որ Առաջին համաշխարհայինի ընթացքում տաժանակի աշխատանքների տարված հայերի հետնորդները գուցե կարողանան նման դատավարություններ սկսել: Կարծում եմ՝ Գերմանիան էժան չափուի դուրս գա իր անցյալից: Ինչպես արդեն ասացի, մենք առանձնահատուկ դիրքորոշում ունենք հայերի և թուրքերի պատմության հարցում:

**- Դուք Վուանգված ազգերի համագործակցություն միջազգային իրավապաշտպան կազմակերպության անդամ եք և շնորհակալ գործ եք կատարում: Ըստ իս՝ այդ ազգերի շարքում այն պատուիհասը, որ բաժին հասավ հայ ժողովրդին, ինչի հետևանքով նա գրկվեց իր հայրենիքից, միջազգայնորեն ոչ միայն բարոյական, այլ փաստարդաբային ծանաշման կարիք ունի: Հայ ժողովուրդը պահանջատեր է: Այդ ժողովուրդների շարքում նրան դասել մի տեսակ ասես փոխում է հայության կարգավիճակը: Ես, իհարկե, չեմ ուզում նսեմացնել այս կամ այն ժողովրդի դժբախտությունը: Պարզապես հայոց ողբերգությունն աննախաղեա էր ցեղասպանությունների՝ 20-րդ դարում մարդկության դեմ կատարված հանցագործությունների շղթայում՝ որպես հարյուրամյակի առաջին ամենասարսափելի ոժագործություն՝ իր ամենաա-**



## **ԱԵՐԼԱԿԱՅԵԼԻ ԴՐԱՆԿՈՐՈՒՄՆԵՐՈՎ:**

- Այս, հայերի ցեղասպանության առանձնահատկությունն այն է, որ փաստն արկա է, բայց մերժվում է: 90 տարի է՝ անընդհատ լսում ենք այդ մերժման մասին: Ինչպես գիտեք, 1980-ական թթ. սկսեցի խոսել ցեղասպանության՝ իրեւ առանձին ոլորտի ուսումնասիրության մասին: Եթեասպանության ուսումնասիրողներն ասում են, որ հանցագործության վերջին փուլն այդ ոճիրի հերթումն է: Ընդհանուր հաշվով 3,5 մլն մարդու՝ հայերի, հույների, ասորիների և մյուսների նկատմամբ կատարված ոճրագործությունը շարունակվում է, ըստ եռության, այս հերքումնով: Թուրքերի հերքումը նշանակում է երկու բան: Նախ՝ հարցականի տակ է դրվում զոհը: Թուրքերն ասում են՝ հայերը կամ խենք են (ինչ-որ բաներ են հնարում), կամ չարամիտ. Թուրքիային ներկայացնում են նեղադրանք, որը գոյություն չունի: Կարծում են՝ այս պատճառով ամեն մի հայի համար սա անտանելի հոգեկան թեր է. ժողովուրդն իրեն շատ լրված է զգում: Եվ այն, ինչին ուզում ենք հասնել ոչ հայերս այս գործընթացում, նպատակ ունի հաղթահարել այս հոգեբանական վիրավորանք:

- ՚ի՞նչ եք կարծում՝ կիայտնվի՞ մի թուղթ Կոնրադ Ալեքսանդր, որ ծնկի գա ու բարձրածայն ներդություն խնդրի հայ ժողովրդից: Ձեր կարծիքով՝ Թուրքիան երբևէ կճանաչի՞ Հայոց ցեղասպանությունը: Դրա հետևանքուվ ՚ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան աշխարհում:

- Ոչ թե Աղեղնատերը, այլ Վիլի Բրամդոն է ծնկի հջել գետսոյում՝ առանձնաբաղում՝ Վարշավայում և խոսել այդ մասին:

- Կոմրադ Արենառևերը ծնկի է իջել Երուսաղեմում Արցունքի պատի մոտ...

- Սեր քաղաքական գործիչներն այդ քայլը արել են ոչ կանավոր, այլ ստիպողաբար, որովհետև Գերմանիան երկրորդ համաշխարհայինում քարեբախտաբար պարտվել է, և մեր դաշնակիցները, ի թիվս այլոց, մեզնից նաև պահանջել են, որպեսզի մենք առճակատվենք բոլոր այդ հանցագործությունների հետ։ Առաջին համաշխարհայինի հաղթողները այդ բանը չեն պահանջել պարտված Թուրքիայից։ Սա նշանակում է՝ Թուրքիան ներքին կայունացման և ժողովրդավարացման գործընթացում թերացել է, հանգանանք, որը խանգարել է նրանց առճակատվելու պատմական այդ խնդիրների հետ։ Ինչպես գիտեք, 1987 թ. Եվրամիությանն անդամակցելու համար Եվրախորհրդարանը Թուրքիայից որպես նախապայման պահանջել է ճանաչել Հայոց ցեղասպանությունը։ ԱՄՆ-ում, տարբեր մակարդակներում, նաև՝ խորհրդարանական,

1960-ական թթ. սկսած անընդհատ փորձեր են արվել ճանաչել տալ Դայոց ցեղասպանությունը: Առաջնաձին ճանաչել ճանաչել են այն, իսկ Ներկայացուցիչների պալատն արդեն մի քանի անգամ որոշումներ է կայացրել ցեղասպանության ճանաչման մասին: Եթե հաջողվի, որ նաև Սենատը որոշում կայացնի, ապա կարծում եմ, որ դա նախապայման կլինի, որպեսզի Թուրքիան հետևի այդ քայլին: Իսկ ինչ Վելրաբերում է Թուրքիայի՝ Եվրամիության անդամագրվելու հարցին, մենք տեսնում ենք, որ Եվրոպայի հիմնական տարրերականումը էրիկական է: Եվրոպան աշխարհագրական վայր չէ: Մենք, օրինակ, գերմաներեն խոսում ենք Եվրոպական արժեքների, համայնքի մասին: Նշանակում է՝ մենք՝ Եվրոպացիներս բաժանում ենք որոշակի էրիկական, բարոյական սկզբունքներ: Եվրոպացի լինելը նաև նշանակում է՝ պատրաստ լինել մտածել մեր սեփական անցյալի մասին և քննադատական եզրակացություններ անել: Եվ եթե Թուրքիան ուզում է Եվրոպա մտնել, նա պետք է սովորի նաև այս իմաստով Եվրոպական լինել: Իհարկե, գուցե բուրք ներկայացնեցները ծիշտ են ասում՝ Եվրոպացիներդ նոյնապես շատ քան ունեք անելու: Ֆրանսիացիները պետք է խոսեն Ալֆրիում իրենց կատարած հանցագործությունների մասին: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան զաղութա-

Անցյալ տարվա (2002թ. - թ. գ.) հունվարին Եվրախորհրդարանը մի որոշում է կայացրել, համաձայն որի պետք է զբաղվեն Անդրկովկասյան տարածաշրջանի կայունացնան հարցերով։ Այս առումով Թուրքիային կոչ է արվել լուծել երկու խնդիր՝ վերացնել ՀՀ շրջափակումը և ճանաչել Հայոց ցեղասպանությունը։ Տեղասպանության ճանաչումը Թուրքիայի համար ոչ միայն ներքաղաքական նշանակություն ունի, այլև արտաքին քաղաքական։ Սակայն խորհրդարանական որոշումները մի բան են, իսկ ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը՝ մեկ ուրիշ բան։

- 20-րդ դարում ողբան շատ խոսվեց մարդու և ազգերի իրավունքների մասին, այնքան ավելի հաճախացան ցեղասպանությունները: 1948 թ. ՍՍԿ-ն ընդունեց ցեղասպանության մասին Դոչքագիր, սակայն ցեղասպանություններն աշխարհում ոչ միայն չեն դադարում, այլև հանցագործությունները շարունակվում են մնալ անպատճեց: Ի՞նչ է սա նշանակում: Գուցե ՍՍԿ-ն իր հանձնառությունը չի կատարում...

- Սեղ բավական շատ ժամանակ պետք եղավ, մինչև կարողացանք այնպիսի մարմին ստեղծել, որը նշտապես զբաղվի ցեղասպանությունների դատապարտման հարցով: Սահմանակազորությունը: 1915 թ. կատարվեց Դայոց ցեղասպանությունը: 1930-ական թթ. սկզբին Ազգերի լիգայի անդամ Լեհաստանի հրեա Ռաֆայել Լեմկինը փորձեց ընդունել տալ օրենք՝ ազգերի՝ ցեղասպանություններից պաշտպանվելու մասին: Եվրոպայի որոշ հրեաներ հասկանում էին, թե ինչ վստանգ գոյություն ունի Դայոց ցեղասպանության շճանաչման հարցում: Սակայն Ազգերի լիգան թույլ էր, և Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած հրեաների ցեղասպանությունը շատ ավելի մեծածավալ էր:

1948թ. միայն ՄԱԿ-ը, իբրև Ազգերի լիգայի իրավահաջորդ, ընդունեց Ռաֆայել Լեմկինի այն ժամանակ առաջ քաշած օրինագիծը, սակայն դա «անտաճան» օրենք էր: Իսկապես բավական երկար տևեց՝ գործել 20-րդ դարի վերջը, մինչև մենք կարողացանք ստեղծել մշտական գործող դատական ատյանը: Յետարքիր է, որ շատ կարևոր պետություններ սկսեցին դիմադրել այս հաստատությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ը: Տեսնենք՝ այդ ատյանը գործնականում կարողանան: Կանխել ցեղապահնությունները: Երկրորդը, որը մեզ անհրաժեշտ է, վաղ ճանաչնան և զգուշացնան հաստատությունն է: Ցեղապահնությունների համեմատական ուսումնասիրությունը մեզ կարծես հնարավորություն է տվել հասկանալ, թե ՞որ, սոցիալ-տնտեսական հնչ իրավիճակներում են սրվում այդ իրադարձությունները, որոնք վերածում են ոճարագործությունների: Մենք արդեն գիտենք, որ պատրազմներն, օրինակ, աննիջականորեն կարող են հանգեցնել նման գործողությունների: Պատերազմների ժամանակ կառավարվում են արտակարգ իրավիճակների դրության մասին օրենքներով: Այս իրավիճակներում հատկապես ազգային փորձանանությունները ենթարկվում են ամենամեծ վտանգների: Վտանգի երկրորդ փուլը տրանսֆորմացիայի (փոփոխություն - Հ. Գ.) շրջափուլերն են: Պատահական չէ, որ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել Թուրքիայի պատմության համար այնպի-

սի մի ժամանակաշրջանում, երբ Օսմանյան կայսրությունը պետք է փոխարինվեր երիտրութքական կառավարությամբ, երբ բուրք ազգայնականությունը, այսպես ասած, ցեղասպանական գծեր ձեռք բերեց:

- **Բայց քենալականներն էլ, փաստորեն, շարունակեցին օսմանցիների նույն քաղաքականությունը: Տիկին Շնչման, ցանկալի էր ինամալ նաև Զեր ուսումնասիրությունների մասին: Գիտենք, որ Դուք գրադվել եք և շարունակում եք գրադվել գրահրատարակությամբ և Գերմանիայի գրադարաններում փրկել եք Հայոց ցեղասպանությանը վերաբերող այնպիսի գրքեր, որոնք իսկապես շատ արժեքավոր են:**

- Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում հայերի մասին ընդհանրապես մոռացել էին: Իսկ այդ մասին եղած գրքերը, իրապարակումները գրադարաններուն գոյություն ունեն իրեն զուտ գրականություն: Այսպես թե այնպես այդ գրքերը ժամանակին լույս էին տեսել փոքր տպաքանակով: Եվ որոշ գրքեր, օրինակ, Թալեաթ փաշայի դատավարության մասին, Վերահրատարակեցինք: Եվ ոչ միայն Կոտանգված ազգերի համագործակցությունը, այլ առանձին մասնավոր հրատարակիչներ, ինչպես վերջերս Բրումենում՝ Ծվեյցարիայում՝ Լեփսիուսի հետնորդներից մեկը, վերահրատարակումներ և նոր հրապարակումներ նախաձեռնեցին: Գրքերի բնօրինակները մեր գրադարաններից անհետանում են: Մեր ուսումնասիրությունները Բեռլինի գրադարանում ցույց են տվել, որ այս թեմայի շուրջ ամենավաղ հրատարակությունն այլևս չկա: Անհետանում են նաև քարտարարանների քարտերը: Կարելի է ենթադրել, թե ովքեր են կանգնած այս գործողության ետևում: Ին իսկ՝ համալսարանին նվիրած մի գրքի վրա մի «քորորդված» ընթերցող տիտղոսաթերին անզերեն գրել էր. «Սպանեք բոլոր հայերին»: Դրա համար անչափ կարևոր է, ինչպես Դուք եք ասում, տառացիորեն փրկել այս գրքերը: Այժմ ես գրադված եմ նախորդ տարվա համաժողովի նյութերի հրատարակմանը: Դա մի թեմա է, որտեղ մենք փորձում ենք հայերի ցեղասպանության հարցը դիտել ընդհանրապես երիտրութքական և թեմալական քաղաքանության շրջանակում: Այդ երկու պետություններն էլ վարում էին թուրքացնան քաղաքականություն: Թուրքիայի Հանրապետությունը մինչև այժմ շարունակում է այդ քաղաքականությունը: Այդ պատճառով մեր այսօրվա ուսումնասիրությունը նվիրված է այս համատեքստին: Երկրորդ՝ առաջիկայում 2005 թվականն է՝ դեռևս հերքվող ցեղասպանության 90-րդ տարեկանը, մենք փորձում ենք գիրք հրատարակել՝ ներկայացնելու Հայոց ցեղասպանության պատկերը: Սա կարծես նոր թեմա է. անհրաժեշտ է հավաքված լուսանկարներն ու պատկերները նույնականացնել կատարվածի հետ: Մենք ունենք լուսանկարչական փաստաթղթեր, որոնք Արդուլ Համիդի՝ 1890-ական թ. և Ադամայի՝ 1909 թ. կոտորածների վավերագրեր են: Ունենք նույնիսկ լուսանկարներ, որոնք կապ չունեն հայերի կոտորածների հետ: Կան նաև այնպիսիք, որոնք չենք ճանաչում:

- **Տիկին Շնչման, շնորհակալություն՝ Զեր հայանապատ գործունեության համար: Դուք բարի և ազնիվ գործ եք կատարում հանդես գալով ի պաշտպանություն անհրաված ժողովուրդների իրավունքների: Ցանկանում ենք Զեր քաջ առողջություն, տոկունություն, անկոտրում կամք ու եռանդ՝ Զեր սկսած պայքարը հաղթական ավարտի հասցնելու համար:**

- Ծնորհակալություն, իրավունք ու պատճենականություն Հայոց ցեղասպանության հարցը քննարկման թեմա չի լինի:

### Հասմիկ Գուլակյան

Գերմաններից թարգմանեց Նելլի Սոլոմոնյանը



## ԽՆՔԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Մարդկային ուժերից վեր է մի ժողովրդի պատմությունն ապանել, մի ժողովրդի Հոգևոր հայրենիքը նվաճել»:

«Փոքր ազգերը պարտապարբեն ավելի հայրենասեր պիտի լինեն, քան մեծերը, մենք՝ ավելի, քան բոլորը»:

### Գարեգին Նժերի

Կարծիք կա, որ իր Օսմանյան կայսրության համենական օրինապահ լինելու դեպքում կխոսափեինք ցեղասպանությունից: Բայց մի՞թե հնարավոր էր հարցուրամյակներով թուրքական լիդ տակ տարապող ժողովրդից չեղորդություն պահանջել: Առայժմ հայտնի չէ գեր մեկ փաստ, որ թուրքական տիրապետության տակ հայտնակած որևէ ժողովուրդ իրեն երանիկ համարեր և իր ապագան՝ անվտանգ ու հուսալի՝ այդ կայսրությունում, և որ ազատարածության մարա զիտակցությունը մարեր թուրքահապատակության երանկությունիցից...

Այստեղ՝ այդ հողի վրա կամ պիտի ապրեր թնիկ հայր, կամ նրա բնօրրանը նվաճած եկվիր թուրքը: Ժուրգերը սա լավ էին հասկացել: Տարօրինակ է, որ մենք սա չհասկացնեն 1890-ական թթ. կոտորածներից, նաև Ալբանիայի 1909 թ. ջարդերից հետո, որը, Վահագմ Տարյանի թնդղմանը, ամենաբարարադրուսական էր ամբողջ ցեղասպանության թնրացրում:

Աններեկի է, որ հայուրյունը պարտվեց իր հողի վրա: Պարտվեց ոչ թե զենքը ձեռքին՝ հերոսարար, ինքնապաշտպանական մարտերում, այլ կրավորարար: Ո՞վ է մեղավոր, որ 1908-ին թուրքական սահմանադրության օրերին, իրեն հեղափոխական հղակած կուսակցության հայազգի ղեկավարները զինաբարափում էին հայուրյակային խմբերը և, «զինված» քաղաքական անհեռատեսությամբ, աշխարհաբարարացիության և համամարդկային ցնորդներով տարված՝ երիտրուքերի հետ կողը կողը տեղ գրադեցնում մաստնական՝ «Օսմանյան Սեծ Արևելի» օրյակներում և տիեզերական եղբայրություն տենչում: Այդ իրադրության մեջ 1914 թ. ՀՅԴ Կարիքի ժողովը քավարարվեց միայն «օրինապահության» որոշումով՝ բրացնելով ինքնապահապանան մեր թուրքացած թնագործ:

### «Ուխտ Արարատի»



Երիտասարդ հայուհի, որ գենրով է պաշտպանել իր պատիվն ու որդուն

Հայոց ցեղասպանությունը պետական քաղաքականության վերածվեց 13-րդ դարից, իսկ բուն ցեղասպանությունն սկսվել էր 11-րդ դարից, երբ Փոքր Ասիա ներխուժեցին թուրք սելջուկները: Սկզբնական շրջանում նրանք զբաղված էին զանգվածային ոչնչացմամբ և չունեին նվաճված տարածքներում հիմնավորվելու նպատակ, իսկ հետագայում, երբ սպառվեցին նրանց ուժերը, տիրապետող դարձավ բռնազավքած շրջաններում բնակվելու, նոր վարան ստեղծելու գաղափարը, քանզի այլև ցանկալի չէր Վերադարձը Ալքայ:

Սելջուկներին հաջորդած «օսմանցի թուրքեր» հորջորջվող ցեղախմբերը, որ 1299 թ. ստեղծել էին իրենց պետությունը, Բյուզանդիայի հանգավոր անտարբերության պատճառով գրավեցին Անատոլիան, իսկ 1453 թ. մայիսի 29-ին՝ Կ.Պոլիսը: Ստեղծվեց քոչվորական նոր կայսրություն: Թուրքերը, վճռական հակահարված ստանալով Եվրոպյան, 17-րդ դարի վերջին վերադարձան Փոքր Ասիա և սկսեցին գրաված տարածքների վերանվաճման դաժան գործընթացը: Այն, որ թուրքական քաղաքականությունն ուղղված էր բռնազավքած շրջաններն օսմանացնելուն, միանշանակ էր, գաղափարը՝ հաստատուն, որովհետև իշխում էր «սրով նվաճված վաթանը սրով պահպանելու» կարգախոսը:

Հայկական լեռնաշխարհում հայտնվելուց հետո օսմանցիներն իրար հաջորդող արշավանքներ ձեռնարկեցին հայոց հայրենիքին վերջնականացես բռնատիրելու նպատակով: Այսպէս՝ 1478 թ. այն գլխավորեց Լալա Մուստաֆա փաշան, 1643 թ.՝ Զաֆար փաշան, 1662 թ.՝ Մոլլա Վանը, 1723 թ.՝ Ահմեդ փաշան: Արյունքում, հատկապես Կարինի նահանգի գավառներից շատերը, կրոնափոխվեցին, հայությունը կոտորվեց կամ զանգվածաբար բռնագաղթվեց:

Հայոց շարունակական ցեղասպանության գագաթնակետը 1915 թ. էր: Օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից՝ Երիտրուրքերը որոշեցին իրագործել իրենց ոճրագործ ծրագիրը՝ արևմտահայության ոչնչացումը: Ավելի ազատ ու անարգել գործելու նպատակով 1914 թ. օգոստոսի 2-ին և 3-ին զորահավաք անվան տակ բանակ զորակոչվեցին 20-45, ապա՝ 16-60 տարեկան հայ տղանարդիկ: Չուրջ մեկ միլիոն: Պաշտպանունակությունից գրկելով արևմտահայությանը՝ յաթաղանը պատեցին անպաշտպան կանաց, Երեխաների, ծերերի գլխին:

Իրենց արյունալի ծրագիրն իրականացնելու նպատակով, միջազգային հասարակական կարծիք ստեղծելու նոտարությամբ, թուրք ոճրագործները տարածեցին այն տեսակետը, թե իբր ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար տեղական բնակչությունը ժամանակավորապես հեռացվում է ռազմական գործողությունների մեջ ընդգրկված շրջաններից: Սակայն Եվրոպական դեսպաններն ու հյուպատոսները, որ քաջատեղյակ էին իրադրությանը, երբեք փորձ չարեցին հարցնել, թե ինչո՞ւ էր «ապահովում» միմիայն հայերի՝ անվտանգությունը:

Երբ սփռվեցին ահասարսութ լուրերը, այնտեղ, որտեղ թուրք մարդակերները դեռևս չէին կարողացել կամ չէին հասցրել տեղահանել հայ ազգաբնակչությանը, կազմակերպվեց ինքնապաշտպանություն:

Առաջինը դիմադրության փայլուն օրինակ ցոյց տվեցին Կանի նահանգում՝ Շատախում, Հայոց ձորում, Գավաշում, Թիմարում: Կանի հերոսամարտը շարունակվեց 1915 թ. ապրիլի 5-ից մինչև մայիսի 6-ը: Այն գլխավորում էր Արամ Մանուկյանը: Այգեստան և Քաղաքամեծ քաղամասերը վերածվեցին անարիկ անրողների: Արյունարբու Ձևեր բնոյեց, հակահարված ստանալով, փախավանից: Մայիսի 6-ին Խեցոյի գլխավորությամբ քաղաք մտան Դրոյի կամավորական ջոկատի հեծյալ մարտիկները: Մեկ օր անց գեներալ Նիկոլակի ռուսական զորքերը հասան Կան: Մայիսի 7-ին Արամ Մանուկյանը նշանակվեց Վասպուրականի նահանգապետ: 1915 թ. հուլիսի 2-ին, երբ ռուսական զորքերը նահանջեցին Կանից, Ա.Մանուկյանը կազմակերպեց 200 հազար հայերի զաղթը դեպի Արևելյան Յայաստան: Թեև ճանապարհին նրանք Ենթարկվեցին հարձակումների ու զրկանքների, բայց և այնպես փրկվեցին յաթաղանից:

1915 թ. հունիսի վերջերին Յակոր Կոտոյանի գլխավորությամբ ինքնապաշտպանություն կազմակերպվեց Մուշում: Թուրքական կանոնավոր զորամահավորումներին հայերը դիմադրեցին մի քանի օր, բայց թշնամուն հաջողվեց մտնել Մուշ և իրականացնել հաշվեհարդարը:

1915 թ. մարտ-օգոստոսին շարունակվեց Սասունի հերոսամարտը: Թուրքական 30 հազարանոց բանակին, սակայն, չհաջողվեց գրոհով մտնել Սասուն: Յայերը ոչ միայն հակահարված էին տալիս, այլև տիրացան երեք թնդանոթի: Բայց ուժերն անհավասար էին, և բարբարոսներին հաջողվեց օգոստոսի 3-ին ներխուժել գավառ ու բնաջնջել հայությանը:

1915 թ. հունիս-հուլիս ամիսներին Ղուկաս Տեղվերյանի գլխավորությամբ ինքնապաշտպանության ելավ ժողովրդական հերոս Անդրանիկի հայրենի քաղաքը՝ Շապին-Գարահիսարը: Զինվորական խորհրդի որոշմամբ՝ 500 խաղաղ բնակչությունն ու գինված ազատամարտիկներն ամրացան մոտակա բերդում, իսկ հունիսի 29-ի գիշերը դուրս գալով բերդից՝ ճեղքեցին պաշարման շղթան ու ազատվեցին կոտորածից:

1915 թ. հունիս-հուլիս վերջից մինչև սեպտեմբերի 10-ը շարունակվեց Մուսա լեռան հերոսամարտը, որը գլխավորում էր Վերապատվելի Տիգրան Անդրեասյանը, Յարեր Խսկենդերյանը և Եսայի Յաղությանը: Սեպտեմբերի 10-ին նրանց պատահաբար օգնության հասան ֆրանսիական «Գիշեն» հածանավը և անգլիական մի նավ, և 4058 հայ տեղափոխվեց Եգիպտական Պորտ-Սահի քաղաքը:

1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ինքնապաշտպանական մարտեր էր նկում Ուրֆան՝ Մկրտիչ Յոթենքայրայանի գլխավորությամբ: Թուրքական կանոնավոր բանակին, գերմանացի սպայի դեկավարությամբ, հաջողվեց գրավել քաղաքը և 15 հազար կին ու երեխա քշել Միջագետքի մահվան ճանքարները...

Երրոսամարտեր տեղի ունեցան նաև Արտամետուն (1915 թ. ապրիլ), Յաճնուն (1920 թ. մարտ-հոկտեմբեր), Այնթափուն (1920 թ. ապրիլ-1921 թ. փետրվար) և այլուր:

Զարդարաբների դեմ հայտնի և անհայտ հերոսամարտերը մեկ անգամ ևս գալիս են հաստատելու Սկրտիչ Խորհմանի (Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1892-1907 թթ.) «Երկաթ շերեփի» գաղափարի արդարացիությունը, քաղաքական մտածողության անուրանալի բարձրակետ, որը սեփական ուժերով, գինված պայքարով ազատագրության հասնելու ճանապարհին էր:

Ինքնապաշտպանական դյուցանամարտերը, դառնալով ազատաբաղդության խորհրդանշից, հիմքեր ստեղծեցին 1918 թ. մայիսյան հաղթական հերոսամարտերով հայոց պետականության վերականգնման համար:

**Յովհաննես Զատիկյան  
Պատմ. գիտ. թեկնածու**

# ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԲԱԿԱՏԱԳԻՐԸ

## ՀՀ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՄԵՐՈՒՄ

Ցեղասպանությունն էր նիկական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական, այլև նրա ազգային ու հոգևոր մշակույթի ոչնչացումն է:

Թուրքիայում և Ադրբեյջանում տասնամյակներ ի վեր շարունակվող համատարած ոչնչացման կամ յուրացման պետական քաղաքականությամբ հետևամբով ամփերադարձ կորսույան են մատուցել համամարդկային արժեք ունեցող հայկական պատմական հազարավոր հուշարձանները: Ցավոր, վերջին տարիներին հայկական պատմամշակութային կորողները Վրաստանի տարածքում և Ենթարկվում են աննախադեպ ավերման կամ յուրացման: Ուշագրավ է, որ ջարդարարության առավել ենթակա են հատկապես այն հուշարձանները, որոնք փաստում են հայերի ներկայությունն իրենց պատմական հայրենիքում: Ոչնչացվող հուշարձանների շարքում առաջին տեղում են քրիստոնեական մշակույթի ակնհայտ դրսորումները՝ հայերեն արձանագրությունները ու խաչքարերը, ապա՝ վանքերն ու եկեղեցիները, մինչդեռ հայկական կամուլցներն ու բերդերը, աղբյուրներն ու բնակելի կամ հասարակական կառույցները գրեթե նույնությամբ պահպանվել են, քանի որ, թուրքերի և վրացիների կարծիքով, դրանք յուրացնելով ու աշխարհին թուրքական կամ վրացական ներկայացնելը դժվար գործ չէ:

Վերջին տարիներին Ադրբեյջանի Յանրապետության վարչական տարածքի մեջ մտնող Նախիջևանի հնքնավար Յանրապետության (ՆԻԴ) Զուլա քաղաքի դարավոր գերեզմանատան ավելի քան չորս հազար ամկրկնելի խաչքար միտումնավոր ոչնչացվեց:

Իրանի Խալամական Յանրապետությունում (ԻԻԴ) հայկական հուշարձանները պետական հոգածության ներքո են: Վերջին տարիներին Երևանում, հայ և իրանցի մասնագետների համագործակցությամբ, վերականգնվել է պարսկական (Կապույտ) մզկիթը (XVII դար), սկսվել է Շուշիի մզկիթի վերականգնումը:

Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՆՈՒ-ի անդամ և Եվրոպական ընտանիքին անդամակցել ճգնող պետությունը՝ Թուրքիան, դեռևս շարունակում է հերքել Յայոց ցեղասպանությունը և աշխատում հայկական հուշարձանների ոչնչացմամբ քողարկել հայ ժողովրդի ու հայկական պետության գոյությունը Յայոց բնօրրանի՝ իր բռնագրաված տարածքում:

Յայկական մշակույթը համաշխարհային քաղաքակրության մաս է կազմում, իսկ հայկական պատմաճարտարապետական կոթողների պահպանումը միջազգային հասարակության խնդիրներից է:

### ԹՈՒՐՔԻԱ

Ա ն ա ր կ ե լ ի  
փաստերը վկայում  
են, որ Յայոց ցեղաս-  
պանությունը ծրագր-  
ված գործողություն  
էր: Այդ տարիներին



թուրքական կառավա-  
րությունը ճգնում էր  
ոչնչացնել նաև հայ-  
կական քաղաքակր-  
ության հետքերը: Օս-  
մանյան կայսրության  
ներքին գործերի նա-

խարարության հանձնարարությամբ կոստանդնուպոլ-  
սի Յայոց պատրիարքարանը 1912-13 թթ. կազմել էր կայսրության տարածքի հայկական գործող վանքերի և եկեղեցիների ցուցակը: Յամաճայն Մաղաքին արքե-  
պիսկոպոս Օրմանյանի կազմած վիճակագրության՝ 1912 թ. Արևմտյան Յայաստանում գործող հայկական վանքերի և եկեղեցիների թիվը հասնում էր 2200-ի: Այս կառույցներից շուրջ 2150-ը եղենին տարիներին թա-  
լանվել ու հրկիզվել է: Այդ գործողությունների կան-  
խանտածված ծևն ու չափերը հաստատում են հայ մշա-  
կույթի ծրագրված եղենը:

Յանրապետական Թուրքիան չի ընդունել և շարու-  
նակում է ժխտել Յայոց ցեղասպանության փաստը: Դա  
պետական քաղաքականություն է: Այդ նպատակով  
ստեղծված և կառավարության օժանդակությունը վա-

յելոր հատուկ կազմակերպություններն գրադաւում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող բազմա-  
թիվ գրքերի հրատարակությամբ և տարածմամբ: Թուրք-  
երին են վերագրվում հայերի հոգևոր և մշակութային արժեքները, միտումնավոր ոչնչացվում են հուշարձան-  
ները, խորական վերաբերնունք են արժանանում հայկական կրթական հաստատությունները...

Ծրագրված հարձակումը հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա ունի երկու գլխավոր նպատակ՝

ա) ապացուցել, որ Արևմտյան Յայաստանը երբեք հայերի բնօրրանը չի եղել,

բ) Թուրքիայում հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել:

1928 թ. Թուրքիայում սկսվել է հայկական տեղա-  
նուններն անվանափոխելու գործընթացը: Թուրքական  
կառավարությունը հաճախ մի քանի անգամ փոփոխել  
է բնակավայրերի, գետերի և լեռների անվանումները: Օրինակ՝ Վասպուրականի Մոկս ավանը դարձել է Մյուլյուս, ապա՝ Բախչիսարայ և Ջուսենիյե, Բերդաղը՝ Դինենջե, Անձավը՝ Գյորուշլու, Սևանը՝ Օրթաջա, Արե-  
նը՝ Գյոլդուզլու, Կիլիկիայի Յաճնը՝ Ալի Սայիիբելի: Աղ-  
թամարն ու Անին հայկական միակ հնություններն են,  
որոնք հիշատակվում են գրուաշրջիկների ուղեցույց-  
ներում, այն էլ թուրքացված ձևով՝ առանց նշելու  
դրանց հայկական ծագումը: Աղթամարը դարձել է Ակ-  
դամար (սպիտակ երակ), Անին՝ Անը (հուշ), Արարատ լե-  
ռը՝ Աղրըղադ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ 1915-  
ից հետո կանգուն մնացած 913 շինություններից 464-ը  
լինվին ոչնչացվել եր, 252-ը՝ վերացվել վիլատակների,  
իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ուներ: Յայ-  
կառակ Թուրքիայում պատմական հուշարձանների պահ-  
պանության ու վերականգնման օրենքի գոյության՝

մինչև վերջերս ոչ մի հուշարձան չի վերականգնվել: Ներկայումս, նենգափիշնան ծրագիր հրականացնելով, սկսվել են Անիի պարիսպների «վերականգնման» աշխատանքները: Յայկական ճարտարապետական հուշարձանները հետևողականորեն պայթեցնում են, զինավարժությունների թիրախ ընտրում, դրանց սրբատաշ քարերը դարձնում շինանյութ, իսկ դեռ կանգուն մնացածները ծառայեցնում որպես գոմ, պահեստ, նույնիսկ՝ բանտ, որոշ դեպքերում նաև վերածում նզկիթի կամ էլ հայտարարում «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

Թուրքական իշխանությունները հայկական եկեղեցների ավերումը հաճախ պատճառաբանում են այս գոտում տեղի ունեցող երկրաշարժերով: Սակայն ինչպես են երկրաշարժերը ընտրություն կատարում՝ չափերով սելջուկյան և ոչ մի հուշարձան...

Տարիներ շարունակ Թուրքիայի լրատվամիջոցները տարածում են, թե իբր հարուստ հայերը, նախքան երկրից «հեռանալը», իրենց ոսկիները քաքցրել են այն քարերի տակ, որոնց վրա առկա են «անհավատների» գրություններ կամ խաչի քանդակ: Ուսիի գտնելու մարմարով տարված ժողովուրդը քանդում է այն ամենը, ինչը հայկականություն է հուշում...

1965 թ. Թերբան ջրաճարի կառուցումն սպառնում էր մի շարք պատճական հուշարձանների գոյությանը: Առանձնապես կարևոր էին երկու մզկիթ և երեք եկեղեցի. Վերջիններից մեկում կային X դարի եզակի որմնանկարներ: Սզկիթները քար առ քար տեղափոխվեցին նոր վայր, իսկ հայկական եկեղեցիները բացարձակապես անուշադրության մատնվեցին:

Ավերվել կամ յուրացվել են՝ Տեղորի եկեղեցին (V դար), Ծինի գյուղի նույնանուն եկեղեցին (VII դար, վերածվել է մզկիթի), Բարդուղիմեոս Առաքյալի, Ս. Կարապետի և Վարագա վանքերը (1998 թ. վերջինիս քարերով կառուցվել է մզկիթ), Ս. Մակարի վանքը (Կիպրոսի բռնագրաված տարածքում), Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին (Վերածվել է մզկիթի) և այլն: Խծկոնքի վանքի 5 եկեղեցիներից (X-XII դդ.) ներկայում «կանգուն» է միայն Ս. Սարգիս եկեղեցին:

## ԱՊՐԵԶԱՍ



Զուղայի խաչքարերը՝ նախկինում

Աղբեջանը հայ մշակույթի բազմարնույթը ու բազմադարյան կորողները հողի երեսից շնչելու և հետքերն անհետացնելու համար ջանք ու եռանդ չի խնայել: Տարեցտարի ավերվող հուշարձանների թիվն ավելի է մեծացել, իսկ աշխարհագրական ընդգրկումը՝ ընդարձակվել: Զերծ չեն մնացել նաև հայաբնակ տարածքների պատճական հուշարձանները, ինչպես, օրինակ, ԼՂՀ-ի, Յուլիսային Արցախի և Կուրի ծահակնական հայաբնակ շրջանների շատ հնությունները: Առավելապես տուժել են Յուլիսային Արցախի (մասնավորապես՝ Գետարելի և Դաշքեսանի շրջանները) և ներկայիս ԼՂՀ-ին հարակից (այժմ՝ ազատագրված) շրջանների հուշարձանները:

Յայկական հուշարձանները պետական մակարդակով քանդելու գործընթացը ոչ պատահականորեն գու-

գաղիպեց դրանք «աղվանական» հայտարարելու ճանապարհով «յուրացնելու գործընթացին»:

1988 թ. վերջերից պատմական հուշարձանների ոչնչացման գործընթացն աննախադեպ չափեր ընդունեց: Օգտվելով պատերազմական իրավիճակից՝ ադրբեյջանցիները հայոց եկեղեցիներն սկսեցին կործանել ոչ թե պայթեցումներով, ինչպես գլխավորապես անուն էին մինչ այդ, այլ թնդանոթային ու տանկային համազարկերով, որոնց մեջ տրամաչափի արկերի պայքուններին չին կարող դիմակայել անգամ ամրակուր պատերը: Այսպես, օրինակ, մի ակնբարդում փլատակների վերածվեց միանգամայն կանգուն ու անվնաս եղնասարի վանքը՝ Գետաշեն գյուղի մոտ (1991 թ., մայիս):

Ծար գյուղի հարավարեւյան եզրին 1950-1960-ական թթ. կառուցված դպրոցի պատերի մեջ ագուցվել են խսպառ ավերված պատճական ու խիստ ընդարձակ, XIII-XVIII դարերով թվագրվող գերեզմանատնից տեղափոխված ու որպես շինաքար կոտրտանքի վերածված խաչքարերը, տապանաքարերն ու հայերեն վիմագրերը (շուրջ 133 բեկոր):

Ավերված հայկական հուշարձաններից են Ծար գյուղի U. Սարգիս (1274 թ.) և Մայր եկեղեցիները (XIII դ.), Գետամիջի վանքը (1301 թ.), Քարվաճարի շրջանի Եղեգնուտ (Պամշլի) գյուղի մերձակա եկեղեցին (XII-XIII դդ.), Աղդայա գյուղի գերեզմանոցի բոլոր խաչքարերը (XII-XIII դդ.), Քաշաբաղի (նախկին՝ Լաշին) շրջանի Առաքելոց (Արոխուլո) և Մովսիսաշեն (Քյուրդ-Յաջի) գյուղերի միջև XIII դ. կառուցված եկեղեցին, նոյն շրջանի Յարաք (Ներքին Փարաջան) գյուղի գերեզմանոցը (XII-XX դդ.), Կովսակամից (նախկինում՝ Զանգելան) հյուսիս՝ «Օհանա եղցին», Զերրափիլի շրջանի Յին Թուրմաս գյուղի (XII-XIII դդ.) և Վանքասարի եկեղեցիները (VI-VII դդ.), Գետարելի շրջանի Ղալաքյանդ գյուղի 12 եկեղեցիներից (IX-XI դդ.) 11-ը, Յուլիսային Արցախի Բանան գյուղի մերձակա և Յնձահալ գյուղի եկեղեցիները (համապատասխանաբար IX-XI և XVI-XVII դդ.), Կիրանց և Վերին Քարհատ գյուղի եկեղեցիները, LՂՀ Շուշիի շրջանի Պարին Պիծ և Շամախու շրջանի Սեյսարու Ս. Աստվածածին վանքերը և այլն:

## ԱՊՐԵԶԱՍ - ՆԱԽԻՁԵՎԱՆ

Պատմական Յայշատանի Շահապոնք, Երնջակ և Գողբն գավառներն այսօր Աղբեջանի Յանրապետության ՆԻՀ տարածքում են:

Ուշ միջնադարում Երնջակ գավառի կենտրոնը Զուղան էր (աղբը՝ Զուլֆա), որը գտնվում էր Արաքս գետի ձախ ափին՝ ներկայում ինչ ու ՆԻՀ սահմանագծին:

VII դարում Զուղան համրաճանաչ բնակավայր էր, որը X-XIII դարերում վերածվեց քաղաքի, իսկ XV-XVII դդ.՝ առևտրական նշանավոր կենտրոնի:

Չափ Արքաք, Պարսկաստանում արեւատուն ու առևտրություն զարգացնելու նպատակով, Զուղայի հայ բնակչությանը 1605 թ. բռնագաղթեցրեց Պարսկաստան (կործանեց քաղաքը՝ կանգուն թողնելով միայն գերեզմանատունը):



Զուղայի խաչքարերը՝ այսօր

Զուղայի 18 եկեղեցիների, հոյակերտ կամրջի, քարավանատների, ծածկած շուկայի, քաղաքային և բնակելի շինությունների ավերակները, ամբողջովին ավերված գերեզմանատան խաչքարերը նրա փառավոր անցյալի լուր, բայց խոսուն վկաներն են:

Զուղայի գերեզմանատունը տարածվում է ավերված քաղաքի արևմտյան կողմում՝ միմյանցից փորիկ ձորակներով բաժանված բլակների վրա: Գերեզմանաբարերը մշակնան կատարելությանք բաժանվում են երեք խմբի՝ 9-14 դդ., 14-16 դդ., 16-րդ դարից մինչև 1605 թ.: Դրանք իրենց բազմազանությամբ, զարդարականությունով և պատկերաքանդակներով խաչքարային արվեստի անկրկնելի նմուշներ են:

Յարկ ենք համարում իշխեցնել, որ Զուղայի տեղահանությունից հետո՝ 1648 թ., գերեզմանոցում արձանագրվել են շուրջ 10000, 1903-04 թթ.՝ 5000 խաչքար և մի քանի հազար տապանաքար, իսկ 1971-1973 թթ.՝ շուրջ 4200 խաչքար:

Խորհրդային տարիներին Ադրբեյջանի կազմում հայտնված գերեզմանատունը ոչ միայն չի արժանացել հուշարձանների պահպանության վարչության ուշադրությանը, այլև շինարարական նպատակով մերձակա զյուղերի բուրքերը խաչքարեր կոտրատում և վերածում էին միաշափ խորանարդների:

1998 թ. նոյեմբերին Իրանի սահմանից ականատեսները վկայում էին, թե ինչպես էին ադրբեյջանցիները բուլղողերներով քանդում և տեղահանում գերեզմանաբարերը, տեղը հարթեցնում, քարերն էլ գնացքով տեղափոխում...

Այս բարբարոսությունը տևեց շուրջ երեք շաբաթ: Ոչնչացվեց գերեզմանատան գեղաքանդակ խաչքարերի գրեթե երեսուն տոկոսը: Գերեզմանաքարերի տեղափոխումը երկարգծով փաստում է, որ այս ամենը կատարվել է Նախիջևանի իշխանությունների հրահանգով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ին և համաշխարհային այլ կազմակերպությունների հղած բողոքները կասեցրին մշակութային այս ջարդը, որին զոհ գնաց շուրջ 800 խաչքար: Սակայն բարբարոսությունը շարունակվում է, և մեզ հասած ստոյագ տեղեկությունները հաստատում են, որ Նախիջևանում միտունավոր կործանել են ավելի քան 250 հայկական վանքեր, ինչպես, օրինակ, Աստապատի Կարմիր և Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքերը և այլն:

ճարտարապետական այս կոթողների ոչնչացումը սպառնալիք է համաշխարհային քաղաքակրթության պատմությանը, քանզի դրանք համամարդկային արժեք են՝ անկախ աշխարհագրական վայրից և ազգային պատկանելությունից:

## ՎՐԱՍՏԱՆ



Թբիլիսիի հայոց Նորաշեն եկեղեցին

Վրաստանի տարածքում պահպանված հայ մշակույթի հազարավոր հուշարձաններ երեւէ բարվոք վիճակում չեն եղել: Դրանց մի գգալի մասը (շուրջ 80 եկեղեցի) ավերվել է դեռևս ստալինյան բռնապետության օրոք, ինչպես, օրինակ, վիրահայոց առաջնորդանիստ Յարանց վանքի:

համալիրը, Խոջիվանքի Ս. Աստվածածին եկեղեցին ու գերեզմանատունը և այլն:

Խորհրդային կարգերի վկայումից հետո անկախացած Վրաստանի պետական և հոգևոր այրերի անհանդուրժողական քաղաքականությունը հայկական հուշարձանների նկատմամբ փոխվել է միայն այն առումով, որ եթե այն ժամանակ դրանք պարզապես ոչնչացվում էին, այժմ այլափոխվելով յուրացվում են:

«Վերականգնման» անվան տակ շուրջ երեք տասնյակ վրացականացված եկեղեցիների և այլ կառուցների որմերից, ինչպես նաև խաչքարերից ու տապանաքարերից քերված կամ զնված հայերեն արձանագրությունների թիվն արդեն անցել է 300-ից:

Եթե Վրաստանի մի շարք վայրերում, այլ ազգերի նման, հայերը եկվոր են, ապա հարավային շրջաններում նրանք բնիկ են, ապրում են իրենց Յայունիքում:

1980-ական թթ. վերջերից առ այսօր Վրաստանու ոչնչացված կամ յուրացված հուշարձաններից են՝ Խոջիվանքի գերեզմանատունը (որի տեղում այժմ կառուցվում է վրաց առաջնորդանիստ նոր եկեղեցին), Կուսանաց Ս. Ստեփանոս, Բերդեհեմի Ս. Աստվածածին, Զորաբաշի Ս. Գևորգ, Շամքորեցոց Կարմիր Ավտարան, Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցիները և այլն:

Յայկական եկեղեցիները յուրացվել, հայագիր արձանագրությունները ոչնչացվել են նաև Սուլրամ, Նախշիրգորա, Շահնապատ, Լիս, Սղմախ, Թելավ, Վելիսիցիներ և այլ քաղաքներում ու գյուղերում:

## ԻՐԱԾ

Իրանի հյուսիսարևմուտքում՝ Արևելյան և Վրամտյան Աստվածական նահանգներում են գտնվում Պատմական Յայաստանի Պարսկահայք նահանգի մի քանի գավառները (Քեր, Զարևանդ, Արտազ, Պարսպատունիք), որտեղ դարեր շարունակ հայեր են ապրել ու ստեղծել ճարտարապետական կոթողներ:



Սուլր Թաղեի վաճքը

Իհշ Վրամտյան Աստվածական նահանգում է Ս. Թաղեոս առաջքայի վաճքը, ուր տարիներ շարունակ իրականացվում են վերականգնութական աշխատանքներ, իսկ 2001 թ. սեպտեմբերից Իհշ կառավարության առաջքայի վաճքը, ի թիվս այլ հուշարձանների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորության տակ է: Մինչեւ Ս. Բարդուղիմեոս վաճքը, որն այսօր թուրքիայի արևելքում է, պայթեցվել է 1962 թ.:

ԱՊՐԻԼՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

 Կալիփոռնիայի Ֆրեզն  
քաղաքից քայլարշավ է տեղի  
ունեցել մինչև Սակրամենտո  
(մարտի 28 - ապրիլի 16-ը):  
Քայլուրավոր հայեր և այլազ-  
գիներ, 350 կմ ճանապարհն անցնելով  
19 օրում, իրենց երախտագիտու-  
թյունն են հայտնել երկրի այն օրենս-  
դիր մարմիններին, ովքեր պաշտոնա-  
պես ճանաչել են Քայլուրավորու-  
թյունը (ԱՄ 52 նահանգից 36-ը ճանա-  
չել է):

8. Տեղասպանության ճանաչման օգտին արտահայտվող կոնգրեսական-ների թիվը անցել է 100-ից:

★ Ապրիլի 7-ին Երուսաղեմի «Կան Լեեր» ինստիտուտում հրավիրվել է սիմպոզիում՝ «Տեղասպանությունը 20-րդ դարում. 90 տարի Հայոց ցեղասպանությունից անց» խորագրով՝ անգլերեն, ֆրանսերեն և եբրայերեն լեզուներով:

☞ Ապրիլի 8-ին Օտտավայի (Կանադա) համալսարանում տեղի ունեցած մեջ միջոցառումից հետո ցուցարկվել է բրիտանացի ճանաչված կինոռեժիսոր Մայք Քոնըրսի «Սորացված ցեղասպանություն» փաստագրական կինոնկարը: Ներկա է եղել նաև Կանադայում Թուրքիայի դեսպանության խորհրդական:

➤ Ապրիլի 8-ին Բոյուսելի (Բելգիա)

«ՂԵ ԶԵՐԻՔ» կենտրոնում տեղի է ունեցել Հայաստանի պատմությանը և մշակույթին նվիրված երեկո, բացիկ է Հայաստանը ներկայացնող ցուցահանուես:

■ Ապրիլի 10-ին Վարչավայի Ս. Յովհաննես Մկրտիչ արքունիք տաճարում մատուցվել է Սուրբ պատարագ, իսկ ապրիլի 22-ին Վարչավայի Բարեկամության տաճը տեղի է ունեցել հուշ-երեկո:

☞ Ապրիլի 13-ին Ֆրանսուիի Լորան Ժուրդանի մեկ ժամանոց «Հայոց գեղասպանություն» վավերագրական կիոննեկարո հեռարձակվել է Եվրոպական առաջատար ARTE հեռուստաալիքով։ Այն առաջին անգամ ցուցադրվել է Փարիզի Կենտրոնական «Էրուս» լինորազոնում՝ մարտի 30-ին։

ալ՝ վրաբարակութեա, ամպայ 90-ին։  
➤ Ապրիլի 13-ին ՌԴ Պետդումայի  
նախագահ Բորիս Գրիգորիվի և ՀՀ Աժ  
նախագահ Արքուր Քաղաքացարյանի  
մասնակցությամբ ՌԴ Դաշնության  
խորհրդի շենքում բացվել է 1915 թ.  
Հայոց ցեղասպանության 90-րդ տա-  
րեկանի հիմքուն ու առաջնորդական

Դեղուած ավագանությունը:

- ◆ Ապրիլի 18-ին Բելգրայի Սեսամից շենքում, մի խումբ սենատորների հախածեռնությամբ, տեղի է ունեցել կոմիտերանու՝ «ճանաչում» ապագան կառուցելու համար» խորագրով։
- ◆ Բելգրայի խորհրդարանն ընդու

Digitized by srujanika@gmail.com

ԱԵԼ է օրինագիծ, համաձայն որի՝ Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը ժխտող անձինք կարող են բանտարկվել կամ ենթարկվել վարչական խոշոր դրուժի:

★ Ապրիլի 18-ին Պիրեայի համալսարանում (Հունաստան) տեղի է ունեցել «կլր սեղան»՝ «Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը և Հայոց ցեղասպանությունը» խորագրով։ Ցուցադրությունը են Եղեռնին նվիրված կինոնկարներ։

★ Ապրիլի 18-ին ՀՅ ԳԱԱ-ում մեկնարկել է «Սեծ Եղեռն. իրողություն և դատապարտում» խորագրով միջազգային Երևոստա օնուաժորություն:

❖ Ապրիլի 19-ին Եթաստանի խորհրդարանը Սեյմը, ճանաչել է Հա-

յոց Եղեասապանությունը:

➤ Ապրիլի 19-ին Բրազիլիայի Սան Պաուլուի «Ազգային համալիր» գործարար և մշակութային կենտրոնում բացվել է Յայոց Մեծ Եղեռնի մասին պատմող ցուցահանդես:

◆ Ապրիլի 19-ին եստոնիայի խորհրդարանում ընթերցվել է Թուրքիային ուղղված Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչը: Խսկ ապրիլի 24-ին մատուցվել է պատարագ՝ Եղեռնի զոհերի հիշատակին:

 27

24-ր սպիտի հ. 2005. Ծիծեականական: Պալքառը շաբունակություն է...



11

Արևելյան Կտրպատական նահանգում՝ Նախիջևանին սահմանակից տարածքում է Ս. Ստեփանոս Նախավկայի (Դարպահմբի) վանքը, որը ևս նորոգվում է պետության հիվանավորությամբ:

Անաշառ և բարյացակամ կեցվածքի օրինակ է Մակու քաղաքի հարավում գտնվող Ծործորի Ս. Աստվածածին վանքի (XII դար) վերականգնումը: Բարուն ջրամբարի կառուցումը վտանգում էր Եկեղեցու գոյությունը: Եկեղեցին մանրամասն չափագրվեց, համարակալվեցին բոլոր քարերը և վերակառուցեցին լճից բարձր, ապահով մի վայրում վերականգնելով վաղուց կործանված թմբուկն ու գմբեթը:

ԻԻ՞ այլ շրջաններում, ուր ևս եղել են և այսօր էլ կան հայ համայնքներ, կամգուն են և գործում են բա-

մարիվ հայկական եկեղեցիները: Դրա ցայտում օրինակն են Խսախամի Նոր Զուղա քաղաքանասի 15 հայկական եկեղեցիները, որոնք ունեն պատմամշակութային բարձր արժեք:

Հայոց ցեղասպանությունից հետո Հայաստանի տարածքի մեծագույն մասը բաժանվեց հարևան Երկրների միջև, որտեղ այսօր նշտումնավոր և ծրագրված ոչնչացվում էն հայկական հոլշարժանները՝ վերացնելու հազարամյակներ շարունակ այդտեղ ապրած հայ ժողովորդի հետքը: Իրանը միակ բազառությունն է:

## Արմեն Դախնազարյան Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության տնօրեն

◀ Նայաց Խորագույն պատմություն ▶

## ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵՎԻՑԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

**«Առաջինուրյան ամենամեծ սիրանիները կատարվել են Հայրենիքի հանդեկ ունեցած սիրուց»**

Ժամանակակից ժամանակակից ժամանակակից



**Սարդիկ գնում են այս անցավոր աշխարհից, հասարակարգերը՝ փոխվում, իսկ պատմությունը, ծգրտության ձգտելով, վերաշարադրվում է նորով:** Սակայն պատմության հոլովույթում միշտ էլ մնում և հիշատակվում են Անուններ, ովքեր ոգեղենացնում են պատմության չոր ու ցամաք ընթացքը:

Վաղուց արդեն անհրաժեշտ է իմանալ, թե խորհրդային իշխանության օրոք, եթե բացարձակապես մերժված և անընդունելի էր որևէ ազգային գաղափարախոսություն, ինչպես 1965 թ. Հայաստանում ոչ միայն նշվեց Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցը, այլև 1965-67 թթ. կառուցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը ոգեկոչող գուսակ, բայց բազմախոսուն հուշահամալիրը:

1965 թ. Հայաստանի Կոմիլսի Կենտկոմի առաջին քարտուղարն էր Յակով Զարոբյանը, լուսավոր ու պայծառ մի Հայ, որի ներդրումն ու դերակատարությունն անուրանալի է սովետական պայմաններում քաղաքական խիզախություն ցուցաբերելու, համարձակորեն ազգային խնդիրներ առաջ քաշելու, դրանք համազգային միջոցառումների վերածելու և դրանցով սովետահայ մտածելակերպն արմատապես վերափոխելու, հայի նոր հոգեկերտվածք ձևավորելու գործում:

3. Զարոբյանը ծնվել է 1908 թ., Հայաստանի Արդվին քաղաքում: 1914 թ. ընտանիքով, Եղեռնից մազապուրք, ոտքով հասել են Ռուսով: Չափ չանցած՝ մահացել են հայրը և երկու եղբայրները: 1925 թ. տեղափոխվել է Խարկով, 1941-ին՝ Օմսկ, ստացել բարձրագույն կրթություն, 1949 թ. գործուղվել Հայաստան: Աշխատել է ՀԿԿ Կենտկոմում՝ բաժնի վարչէ, ՀԿԿ Երևանի քաղկոմի Երկրորդ քարտուղար, ՀՍՍՀ պետական անվտանգության կոմիտե (ՊԱԿ) նախագահի տեղակալ, ՀԿԿ ԿԿ Երկրորդ քարտուղար, ՀՍՍՀ Մինհատրների սովետի նախագահի առաջին տեղակալ, 1960 թ. դեկտեմբերի 28-ից 1966 թ. փետրվարի 5-ը՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար:

Վերջին պաշտոնն ստանձնելիս՝ 3. Զարոբյանը գրեթե չգիտեր մայրենի լեզուն (որն արդեն իսկ արճատացող «ավանդույթի» համաձայն՝ ամենակին էլ պարտադիր չէր այդ ժամանակներում), բայց այնքան բարձր էր նրա՝ Հայի քաղաքացիական նկարագիրը, որ ուսանելով (այժմ՝ բան, գիտ, դոկտոր, պրոֆեսոր) Հովհաննես Բարսեղյանի մոտ, կարծ ժամանակում կատարելապես տիրապետում է հայերենին: Հայրենիքի ու ժողովրդի ճակատագրով ապրելը դարձնում է նրա կյանքի նպատակը:

Պաշտոնավարման առաջին իսկ օրերից ձեռնամուխ է լինում ազգային ծրագրերի իրականացման: Նախ՝ ՀԿԿ

ԿԿ կառուցում ստեղծում է Արտասահմանյան կապերի ենթարամին: Բայց դա չէր բավարարում Հայաստան-Սփյուռք կապերին նոր որակ հաղորդել նպատակադրած գործին: Եվ սկսեցին իրար հաջորդել այդ կապերի ամրապնդմանն ուղղված միջոցառումները: Նա ՍՍԿԿ Կենտկոմ է դիմում վերականգնելու 1948 թ. ընդիհատված զանգվածային հայենադարձությունը (ոչ սովետական երկրներից - խմբ.), խնդրում սփյուռքահայ պարբերականների բաժանորդագրության և սփյուռքահայ անվանի գրողների երկերի, սփյուռքահայ դպրոցների համար արևմտահայերենով դասագրքերի տպագրության թույլտվություն և այլն:

1964 թ. ապրիլի 10-ին ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությունը որոշում է ընդունում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե ստեղծելու մասին: Այն կազմավորվում է մայիսի 26-ին, նախագահ է նշանակվում պատմաբան Վարդգես Համազասայայնը (Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 84, գործ 191-192, թղթեր 2-3): Մեկ տարի անց լույս է տեսնում Կոմիտեի «Հայրենիքի ծայն» պաշտոնաթերթը (տպագրանակը՝ 7 հազար), որը 90-ական թթ. վերացվեց՝ Սփյուռքահայության հետ մշակույթի կապի կոմիտեի հետ:

Գործընկերներն ու արխիվային վավերագրերը հավաստում են, որ, ըստ էության, 1961-ից սկսած Յ. Զարոբյանը լրջորեն նախապատրաստվել է Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցն արժանավայել նշելուն: Հունիսի 3-ին Յ. Զարոբյանը Մոսկվա է դիմում՝ Գրիգոր Զոհրապի 100-ամյակը նշելու խնդրանքով. «1915 թ. հայկական կոտորածի օրերին, հայ մտավորականության հիմասքանչ ներկայացնեցիների հետ Գ. Զոհրապը բանտարկվել և բուրքական յենիշերների կողմից գազանաբար սպանվել է» (ՀԱԱ, ֆ. 1, գ. 41, գ. 85, թ. 84):

Յետաքրքիր է, որ, Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցը նշելու նպատակով, 1964 թ. օգոստոսին Ամենայն Հայոց կարողիկոս Վազգեն Ա-ն իր կոնդակն է հղում համայն հայ հավատացյալ ժողովորդին («Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5), իսկ մեկ ամս անց նամակով դիմում աշխարհի քույր Եկեղեցիների հոգևոր պետերին, Հռոմի Պապին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին («Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9):

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գրիշա Մարտիրոսյանը, որ այդ ժամանակ աշխատել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ազիտացիայի բաժնում (ՊԱԲ), պատմում է, թե ինչպես 1964 թ. փետրվարին գաղափարախոսական բաժնի հերթական խորհրդակցության ժամանակ, եթե Զարոբյանն սկսել է համաձակ խոսել ազգային քաղաքական հարցերի մասին, ոգևորված նրա ելույթից՝ ծայն է խնդրել ՊԱԲ Վարդգես Մոսկվա կիրակոսյանը և բարձրացրել մեկ տարի հետո Հայոց Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցը նշելու հարցը: Թեմայի շուրջ արտահայտվել են նաև ուրիշները: «Անշուշտ, զարմանքի մեջ էին Կենտկոմի ապարատում

աշխատող ադրբեջանցիները: Շատ հաճգիստ էր և ելույթ ունեցողներին ռեպիկներով օգնող խոսքեր էր ասում «Զարդարյանը», - իշխում է Գ. Մարտիրոսյանը («Հայաստանի կոմունիստ», N 15 (322), 21-28 ապրիլի, 2000 թ.): Ոգեշնչված Զարդարյանի աջակցությունից՝ ՊԱԲ վարիչ Ստեփան Վարդանյանը խսդրում է բոլյատրել ազգային հերոս Անդրամիկի 100-ամյակի կապակցությամբ թերթերում հոդվածներ տպագրել և հեռուստատեսային ու ռադիոհաղորդումներ պատրաստել: Քաղլուստան խորհրդատու Սեմյոն Պապյանը համարձակորեն առաջ է քաշում Դարաբարդի և Սախիչևամի հարցերը, Կենտկոմի միջազգային սեկտորի վարիչ Վանիկ Սարգսյանը խսում է Եղեռնի մասին լեհ գրող Գեմբարսկու նամակների հանրապետությունում տպագրության մասին: Նշվում է նաև Հայաստանի բուրգանուն բնակավայրերը անվանափոխելու մասին և այլն:

Զարդարյանը գոհացուցիչ պատասխաններ է տալիս ժամանակի համար «սուլը» թվացող հարցերին: «Բոլորս հասկացանք, որ Զարդարյանի համար մեծ հոգս էր ԽՄԿԿ Կենտկոմի, հատկապես գաղափարական գծով «սև կարդինալ» Սուլովին ու միշտ «ոչ» ածական անունով կոչվող արտաքին գործերի նախարար Գրոմիկոյին համոզելը», - պատմում է Գ. Մարտիրոսյանը (նույն տեղում):

Այնուհետև հոդվածագիրը իշխում է, թե խորհրդակցությունից անմիջապես հետո իր սեմյակում Զոն Կիրակոսյանն ինչպես է բացում «խաղաքարտերը» և խոստվանում, որ Զարդարյանի հանձնարարությամբ երկար ամիսներ է իրենք «քաքուն նյութեր են պատրաստում ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու համար»: Կարծ ժամանակահատվածում Յ. Զարդարյանի պահանջած գրությունները պատրաստվում և անաղմուկ ուղարկվում են Կենտրոն: Պատմական փաստերով, հարուստ մի նամակ, որով իմնավորվում են Եղեռնի, սփյուռքի, հայոնադարձության փաստերը, և Եղեռնի տարելիցը նշելու քաղաքական և գաղափարական նշանակությունը: Նամակում խնդրում է նաև հուշահամալիր կառուցելու բույլտվությունը:

Իրար հաջորդող նամակներից բացի՝ Յ. Զարդարյանը ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Անտոն Քոչինյանի հետ բազմից այցելուն է Մոսկվա և ամեն շանք թափում վերադասին իրականությունը ներկայացնելու, նրանց համար դիմադրությունը կոտրելու, անհրաժեշտ թույլտվություններն ստանալու: Հայտնի է, որ ՍՍՀՍ թիվ 1 գաղափարախոս Միխայիլ Սուլովյն ընդգծված հայտուց էր: Նրա մասին մի անգամ Յ. Զարդարյանը Սերո Խանզարյանին ասել է. «Արգահատելի տիպ է...., իշխի՞ր, նա հայերիս կատաղի թշնամին է: Այո, Սուլովյն է կործանել Ղարաբաղյան հարցը: Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու որոշման նախագիծը նա լուցկով վառել է ու մոխիրը փչել» (Ս. Խանզարյան, «Դաշնակցություն», հուլիս, N 14-15, 1992): Ենտաքրքիր է, որ Բրեժենիկին ամենից հեշտն է եղել համոզելը, և նա «նույնիսկ հուզվել է ներկայացրած ալբոմների որոշ նկարներ տեսնելով» (նույն տեղում):

Յ. Զարդարյանն ստիպված է լինում Մոսկվայի առաջ «Խորանանկել». այնպես է ներկայացնում, որ հայ ժողովուրդը, իբր իշխելով իր տիսուր անցյալը, ցանկանում է նշել իր վերածնունդը:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը նախատեսված էր կառուցել իբրև «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զոհված հայերի և հայ ժողովրդի վերածննդի հուշարձան»: Իսկ Հայաստանում հայտարարում էր. «Եղեռնը մենք պետք է նշենք ազգովի. դա մեր ազգային ցավն է: Դրանք մեր նյութական, բարոյական, ազգային կորուստներն են, մեր հողային կորուստները: Այդ մասին պետք է իմանան բոլորը՝ և մեր ներկա սերունդները. և մարդկությունն ընդհանրապես: Սենք ոչ մի ժողովրդի նկատմամբ թշնամանք չունենք: Օսմանյան իշխանությունների կազմակերպած հայերի Եղեռնը եթե մեր կողմից տրվի մոռացության, ապա մենք կարժանանանք սերունդների դատապարտմանը» («Հայաստանի կոմունիստ», N 15, (322), 21-28 ապրիլի, 2000 թ.):

Պատմում է Յ. Զարդարյանի օգնական Յենրիկ Լիլյանը. «Զարդարյանը շատ էր ուզում, որ կենտրոնական մամուլը նյութեր տպագրի ցեղասպանության 50-րդ տարեկանի կապակցությամբ: Նրան մեծ դժվարությամբ հաջողվում է պայմանավորվել, որ «Պրավդան» գետեղի ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի հոդվածը» («Խորհրդային Հայաստան», 30. 03. 1990): Եվ իշխում է, թե իմ հայության մասին Զարդարյանն անընդհատ հարցրել է, թե Ե՞ր է ստացվելու «Պրավդա»-ն: Իսկ հետո ծեռքն առնելով՝ հուզված, անհամբեր բացել է... և անմիջապես նոյալվել. «....Երկրորդ էջում իրապարակված էր մի հոդված՝ «Եղեռնը ծանրագույն հանցագործություն է մարդկության հանդեպ» վերնագրով և. Ս. Ներսիսյանից բացի, ուներ համահեղինակ՝ իրավ. գիտ. դոկտոր Ն. Ուշակով: Եվ ի՞նչ էր գրված այդ հոդվածում: Ամեն ինչ ցեղասպանության մասին, բայց՝ առհասարակ (Վիետնամ, ԱՄՆ, Անգոլա, Մոզամբիկ, Գվինեա... և այլն): Իսկ հայերի Եղեռնի մասին՝ ընդհամենք մեկ-երկու ոչ մեծ պարբերություն» (նույն տեղում):



Երևան, Եղեռնի անվան հրապարակ, 24-ը ապրիլի, 1965 թ.

Մեր ժողովրդի հավաքական իշխողության մեջ ամրագրված է 1965 թ. ապրիլի 24-ը... Յենրիկ Լիլյանը պատմում է, թե ինչպես այդ օրը «Կենտկոմի շենքը իշեցնում էր խարարված մեղվափեթակ: Վաղ առավոտից ինձ զանգահարեց բարձրագույն ու միջնակարգ կորության այն ժամանակված մինիստր Գևորգ Հայրյանը և հապարութեն» գեկուցեց:

- Հայտնիք Առաջինին, որ պարապմունքները բուհերում նորմալ են ընթանում, և առհասարակ ուսանողական ավանում հանդարտություն է...

Մինիստրը զգիտեր, որ ուսանողների և սովորողների հոժ խմբերը, պարապմունքները դադարեցրած, լցվել են Եղեռնի հրապարակ ու աղմկալի միտինգ կազմակերպելով» («Խորհրդային Հայաստան», 30. 03. 1990):

Ըստ արխիվային փաստաթղթերի (ՀԱԱ, ֆ. 1, գ. 45, գ. 20, թթ. 28-35)՝ 1965 թ. ապրիլի 24-ի առավոտյան ժամը

10:00-ին ժողովրդի հոգում բռնցքված միասնական ցասումն ու ընդգույնը փողոց են հանուն հազարավոր մարդկանց: Տասնյակ հազարավոր սևազգեստ երիտասարդներ հավաքվում են Լենինի անվան հրապարակում ձեռքներին պատառներ՝ «2 000 000» (Եղեռնի զոհերի թիվը), «Արդարացի լուծեք հայկական հարցը», «Ազատեք 7 հայրենասերներին» և այլն, ինչպես նաև՝ Դ. Վարուժանի և Կոմիտասի մեծադիր դիմանկարները: Ի դեպ, այդ օրը նման հսկայածավալ ցույցեր են կազմակերպվում նաև հանրապետության և մայրաքաղաքի բոլոր շրջանների բոլոր կենտրոնական հրապարակներում:

... Երևանի գլխավոր հրապարակում բազմությունը հետզիւտե ստվարանում է: Թռուցիկներ են տարածվում, որոնցից մեկի բովանդակությունը հետևյալն էր.

### **«ՍՄԿԿ Կենսդիմում ՍՄՀՄ Մինիստրների խորհուրդ ՍՄՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն»**

1965 թ. ապրիլի 24-ին Եր-ան քաղաքում գեղի ունեցած բազմահազարանոց միտինգը, նշելով ս-կուրուրածի 50-ամյակը, որոշեց խնդրել սովետական ղեկավարությանը՝ վերացնել պազային հարցում անհապի պաշտամունքի դարձարանու գործությունները - արդարացիորեն լուծել հայ ժողովրդի պահանջները.

Հայկական հանրապետությանը հանձնել Ղարաբաղը, Նախիջ-անը - Խորհրդային Միության պատմականորեն հայաբնակ մյուս հողերը:

Ներգաղթած հայերին գեղավորել Նախիջ-անում, քանի որ բնակչության խստությունը հանրապետությունում հասել է կրի-դիկական մակարդակի:

Ազատել յոթ հայրենասերներին:

Արագայնել հայերի ներգաղթը:

Հայ ժողովուրդը պարբարակամություն է հայրենում դիմանալու ներգաղթածների հետ կապված բոլոր գենակի դժվարություններին:

Միտինգի մասնակիցները ՀՍՍՀ մինիստրների խորհրդին խնդրում են վերոհիշ-յալ քանաձ-ը ներկայացնել ՍՄՀՄ կառավարությանը:

### **ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ**

Միտինգը պարասխանի է սպասում Հայաստանի կառավարության ղեկավար ընկեր Քոչինյանից: Միտինգի մասնակիցները չեն ցրվի, մինչ-որ դրական պարասխան չափանան:

Ցուցարարների հայրենասիրական պոռթկումը հավասարակշռելու նպատակով Լենինի անվան հրապարակում նրանց առջև ելույթ են ունենում Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Բաղրամյանը, գրող Սերո Խանզադյանը, ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Անտոն Քոչինյանը՝ կոչ անելով բոլորին չխանգարել հասարակական կարգը: Մարդկանց հոժ բազմությունը շարժվում է դեպի Պոլիտեխնիկական ինստիտուտ ու Երևանի պետական համալսարան, ապա՝ Կոմիտասի անվան պանթեոն, հարգանքի տուրք մատուցում Եղեռնի զոհ դարձած մեծ երգահանին և շարունակում խաղաղ երթը դեպի



Բեյրութի մարզավան, 24-ը ապրիլի, 1965 թ.

Նկարը տրամադրել է Վարագոյատ Դարությունանը (արտաստպել է «Ազգ» օրաթերթի և թ. ապրիլի 23-ի համարից)

Սպանդարյանի անվան հրապարակ՝ միանալու այնտեղ հավաքվածներին: Այնուհետև բոլորը հարյուր հազարավոր մարդիկ, շարժվում են դեպի Թատերական հրապարակ, որտեղ ժամը 19:00-ին նշանակված էր սգո հանդիսավոր նիստ՝ «Երևանի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը»:

Ըստ Զարոբյանի մտերիմների՝ նա ուղղակի ցուցում էր տվել՝ ճշշում զգործադրել ոչ մի ցուցարարի նկատմամբ: ՊԱԿ-ի աշխատակիցներն ու ոստիկանները քաղաքացիական հագուստով էին և անզեն: Անօրինակ բան Սովետական Միությունում, աննախադեպ երևույթ. հարյուր հազարավոր մարդիկ դրւու են ենել փողոց՝ խաղաղ, բայց չարտոնված ցուցից: Նույն օրը նման բազմամարդ ցուցեր են տեղի ունենում նաև Սփյուռքում, որոնց մեջ հատկապես նշանակալից էր բյուրավոր լիբանանահայերի հավաքը Բեյրութի մարզավանում: Մեծ սգի՝ վրեժով ու պայքարով ոգեկոչումը համագօգային միասնության դրսւորման փայլուն առիթ է դառնում:

...ժամը 19:00-ին հանրապետության ողջ դեկավարությունը, Յ. Զարոբյանի գլխավորությամբ, օպերային թատրոնի դահլիճում էր: Ներկա էին գիտության, արվեստի ականավոր գործիչներ, գրողներ: Օթյակում էր Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Առաջինը: Ելույթ են ունենում ՀՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը, Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, ակադեմիկոս Լևոն Շովկիաննիսյանը: Դատապարտելով Եղեռնն ու դրա ստոր մեթոդները՝ նրանք պատում են նաև հայերի ինքնապաշտպանական մարտերի, անձնազինությունների և հատկապես կոտորածների նկատմամբ եվրոպական մեծ պետությունների հանդրտողական վերաբերումների մասին, որը և հնարավորություն է տվել թուրքական կառավարությանը՝ իրագործելու հայ ժողովրդի բնաշնչման իր արյունաբրու քաղաքականությունը: «Գենոցիդի համար չկա՞ և չի կարող լինել որևէ իրավական արդարացում կամ որևէ հայցային վաղեմություն», - հայտարարում է Ն. Հարությունյանը:

Ինչպես ճշում է Հայաստանի ազգային արխիվի փոխտնօրեն, պատմաբան Ավագ Հարությունյանը, ուա «...ողջ ԽՍՀՄ-ում առաջին ոչ խորհրդային միջոցառումն էր՝ այն էլ զուտ ազգային թեմայով» («Հայոց ցեղասպանության 50-ամյակը և խորհրդային Հայաստանը», փաստաթերթի և նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 13):

Երբ ժողովրդի ժողովածու բազմությունը հավաքվում է Թատերական հրապարակում, մի խումբ երիտասարդներ փորձում են մուտք գործել շենքի դահլիճ: Հատուկ ծառայությունները կանխատեսել էին նման ցան-

կուրժունը և «խնամքով» նախապատրաստվել... Նույն օրը՝ ուշ երեկոյան, ցավով ու նաև իրեն հատուկ կատակով 3. Զարոբյանն ասում է. «Ժողովուրդը հող է ուզում, իսկ մենք կեղտաջուր ցանեցինք նրա վրա» («Հայաստանի կողմունիստ», N 15 (322), 21-28 ապրիլի, 2000 թ.):

ԴԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ Եղիշե Ասծատրյանը պատմում է, թե ինչպես են ցուցարարները ներխուժում դահլիճ, գրավում ամբիոնը: Մինչ այդ նախագահությունում նստած ղեկավարները, կանչագալով գործողությունների ընթացքը, հեռանում են հարևանների շնորհած և մտածում ինչ անել: Բայտալ Մուրադյանին հանձնարարվում է հանդես գալ ժողովրդին հանգստացնող կոչով: Բայց «տաքացած» հանրությունն աղմկում է պահանջնելով պատասխանել կառավարությանը ներկայացրած հանրագորի հարցերին: Որոշվում է, որ ժողովրդի առջև հանդես գա Վագգեն Ա կարողիկոսը: Ցավոք, նրա խոսքը ևս և ի գորու չի լինում ազդել թմբիրից արթնացած, խարարված հիշողությունը վերականգնած, ազգային շնչառությունը բացած ժողովրդի վրա...»:

«Այդ օրը, ի պատիվ մեր հայրենասեր ղեկավարների, նաև՝ ՊԱԿ-ի նախագահ, գեներալ Բաղմանյանի, ոչ մի մարդ չկալանավորվեց: Բադամյանցն ինքը ժողովրդի մեջ նստավ, նույնիսկ ռետին խողովակներով հարվածեցին նրան, բայց նա ոչ մեկի ձեռք չտվեց, ոչ ոք բանտ չնստեց»,- պատմում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրին, պատմ. գիտ. դոկտոր Լավենստի Բարսեղյանը: Իսկ Յ. Լիլյոյանը հիշում է, թե ինչպես անկարգությունները ճնշելու նպատակով ինչ-որ մեկը գոչում է. «Պետք է զո՞ր մոցները: Եվ հայացքներն ուղղում են երևանի՝ այն ժամանակվա կայազորի հրամանատար Դավիթ Դրագունսկուն: «Ես այդպիսի զորք չունեմ... Առանց պաշտպանության նախարարի հրամանի ես զորք չեմ մոցնի...», - ռետում է նաև ընդիանրապես հեռանում շենքից:

Ավելի ուշ մի առիթով Դ. Դրագունսկին խոստովանում է, որ ինքն այդ օրը թեև զանգվածային գրոհների ենթարկվեց, բայց տեղի չտվեց պահանջին:

Նույն օրը՝ ամբողջ գիշեր, ԴԿԿ Կենտկոմում գրություն է պատրաստվում՝ ուղարկելու համար Մոսկվա: Գործընկերները պատմում են, որ Յ. Զարոբյանն ինքը, որ Եղեռնը վերապած մարդ էր և չսահացած վերը ուներ, կարողանում է ուժ գտնել իր մեջ և հայտնի պատմաբանների, պետական գործիչների, մտավորականների հետ մեկտեղ այնպիսի մի հիմնավոր փաստաթուղթ ստեղծել, որով հանողում է Մոսկվային, որ այդ օրը հայ ժողովուրդն ընդամենը փորձել է իր միլիոնավոր զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցել: Նա կարողանում է Կենտրոնին այնքան ճիշտ ներկայացնել մեր ժողովրդի հոլոցերը, որ ոչ միայն հանողում է նրանց այդ ցույցերի անհրաժեշտությունը, այլև հորդորում երևանում, երկու տարվա ընթացքում կառուցել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի կորողը: Ցավոք, բացմանը, նաև որպես երկրի ղեկավար, արդեն չի կարողանում մասնակցել, քանի որ ամսներ անց ազատվում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից՝ «այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ»: Զարոբյանը նշանակվում է ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարի տեղակալ և պաշտոնավարում մինչև 1980 թ.: Պատմում են, որ նա շատ ծանր է տանում իր՝ Երևանից հեռանալը, թեև նրան երբեք չի լրում սերը Հայրենիքի նկատմամբ, որի հետ կապված էր որդիական շերմությամբ:

1980 թ. Մոսկվայում կյանքին հրաժեշտ տված Մեծ

հայորդին այսօր հանգչում է Երևանի քաղաքային պանթեոնում՝ Մայր հողում՝ նրանից այլևս չբաժանվելու, նրան միահյուսվելու երազուն փափազով...

Երբ թերթում ենք այդ ցույցերին աննիշապես հաջորդած՝ ԴԿԿ Կենտկոմի նախագահության հրավիրած ապրիլի 25-ի, 26-ի, 27-ի նիստերի արձանագրությունները, ուղակի ապշում ենք. շուրջ 40 էջանոց որոշման մեջ, որպես ցույցերի կազմակերպիչ և ոչ մի մարդու անուն չի հիշատակվում (մի բան, որ շտապ պահանջում էր Մոսկվան): Եվ միակ մարդը, որի մասին խոսվում է այդ փաստաթուղթ՝ դարձյալ առանց անունն ու ազգանունը տալու, ներքին գործերի նախարարն է, որն իբրև թե հասարակական կարգը լավ չի կարողացել պահպանել:

«Կարելի է ասել, որ ավելի շուտ Զարոբյանն ինքը զնաց անձնագոհության՝ նախավորություն չտալով որևէ մեկին նաշկը փրկելու համար զոհել մյուսներին, - ասում է Լ. Բարսեղյանը: - Նա բարեկիրթ և Մեծ Յա էր և մինչև վերջ մնաց իր բարձրության վրա: Նա երբեք չդավաճանեց իր ընկերներին, թեև գործընկերներից շատերը նրան դավաճանեցին՝ պաշտոնի հասնելու համար: Նա մնաց միշտ մաքուր, անեղջ, անաղարտ, Մարդ, որ իր անձնական օրինակով վարակեց շատերին»:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հավերժացման համալիրի համար Պետշինը 1965 թ. փետրվարին հայտարարում է նախագծերի մորույք: Ապրիլի 24-ից հետո նիսյան Ծիծեռնակաբերդի բարձունքում սկսվում է ճարտարապետներ Արքուր Թարխանյանի և Սաշուր Քալաշյանի («Եռաբլուր» պանթեոնի՝ ՀԱՀԳԲ-ի նահատակների հուշակորոնի նախագծի հեղինակը - խմբ.) նախագծով հուշահամալիրի կառուցումը: Պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունենում 1967 թ. նոյեմբերի 29-ին՝ Սովետական Հայաստանի 47-րդ տարեդարձի օրը:

Իսկ ինչպես է մեր ժողովուրդը երախտահատույց եղել այդ ազգային գործչին: Նոր սերունդը, ավելին՝ այսօրվա պետական այրերը գիտե՞ն նրան: Ինչ-որ բան արգել է նրա անունն ու հիշատակը մեր հայրենիքում հավերժացնելու համար... Ցավոք, գրեթե ոչ: Ընդամենը մի աննշան, փոքրիկ փողոց է կրում նրա անունը (նախկին Պլեխանովի փողոցը՝ ԱՄՆ դեսպանատան ետնամասում): Նույնիսկ հուշատախտակ չկա նրա ապրած տան պատին: Ի թիվս Երևանի քաղաքային պանթեոնում հանգչող ազգային այլ գործիչների՝ նրա գերեզմանը ևս պետական հոգածությունից դուրս է... Միմիքարվենք, որ գոնե Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը պատրաստվում է, նրա հիշատակին, Ծիծեռնակաբերդում ընկուզենի տնկել...

**Ինչո՞ւ է բարձունքը կոչվում՝ Ծիծեռնակաբերդ:** Ըստ ավանդության՝ այնտեղ էր հայոց սիրո աստվածություն՝ Աստղիկի տաճարը, որի տանիքում ապրու ծիծեռնակները լուր էին տանում նրա սիրեցյալին՝ Վահագն աստծուն: Այստեղից էլ՝ Ծիծեռնակաբերդ անվանումը:

## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐ. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՒԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԸ (ASALA)

## ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ

### ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐԻ ԾՆՈՒՆԴ

Չնայած ՀՀ իշխանությունների անտարբերությանը՝ մենք՝ հայերս, միշտ պիտի իշխնք ու խնկարկենք Յակով Զարդորյանի իշխատակը՝ որպես Մեծ Սարդու և Մեծ Յայրենասերի: Ու թե նա չափեց Ծիծեռնակաբերդի հուշակոթողի անշեղ կրակը վառելու երջանկությունը, բայց նրա Ոգեղեն ներկայությունը միշտ մեզ հետ է, իսկ նրա անբասիր անվան ջահը՝ միշտ անմար...

#### Նվարդ Բորյան

1965 թվականը և Սփյուռքում, և Խորհրդային Յայատանում ժողովրդական մեջ հուզումների, մտումների և խոհերի տարի էր: Վերլուծությունների և վերագնահատումների արդյունքում պարզվեց, որ անցած 50 տարվա ընթացքում հայ ժողովրդի բոլոր հատվածների, այդ թվում պետության ջանքերը, Յայոց արդար դատի լուծումը գտնելու նպատակը, որոշակի արդյունքներ չեն տվել: Ակնվեց լուծման տեղափակի փնտրությունը: Խորհրդային Յայատանում ստեղծվեց ընդհատակյա Ազգային միացյալ կուսակցությունը, որը հրատարակեց «Երկունք» և «Փարոս» թերթերը, իսկ «Յանուն Յայրենիքի» կազմակերպությունը փորձ արեց հրատարակել նույնանուն պարբերականը: Յիմնվեցին կամ իրենց գործունեությունն ակտիվացրին հայրենասիրական ուրիշ խմբավորումներ ևս: Լիբանանում սկսեցին հրատարակել «Անեկան» և «Երիտասարդ հայ» պարբերականները: Այդ փորձերը և Յայրենիքում, և Սփյուռքում ուժեղ դիմադրության հանդիպեցին և ծախողվեցին, սակայն կարողացան ցանել պայքարի սերմերը...

Մեծ դեր խաղաց նաև կարինցի Գուրգեն Յանիկյանի անձնական օրինակը: 1973 թ. Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա քաղաքի հյուրանոցներից մեկում արդեն տարիքն առաջ հայորդին, նկարներ վաճառելու պատրվակով, իր սենյակ հրավիրեց տեղի թուրք հյուպատոսին ու վերջինս օգնականին և գնդակահրեց նրան: Նա հանձնվեց ամերիկյան իշխանություններին հայտարարելով, որ իր արարքի նպատակն է աշխարհի ուշադրությունը իրավիրել անարդարացնեն մոռացված և դեռևս անլուծելի մնացած Յայկական հարցին: Իր կրակոցներով նա ազդարարեց, իր իսկ բարերով սասած՝ «հայ անհատին պատերազմը թուրքին դեմ»:

Յետագա դեպքերը երկար սպասեցնել չտվեցին: 1975 թվականի հունվարի 20-ին մի ռումբ պայքեց Եկե-

ղեցիների համաշխարհային խորհրդի՝ Բեյրութի գրասենյակի մոտ: Գործողության պատասխանատվությունն ստանձնեց «Գուրգեն Յանիկյան զինվորական խմբակը», իսկ երբ նոյն տարվա ամռանը, մեկ շաբաթվա ընթացքում, գնդակահրպեցին Վիեննայի և Փարիզի թուրք դեսպանները, Յայատանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ՀԱՅԳԲ / ASALA) ազդարարեց իր գոյության մասին: 1975 թ. հունվարի 20-ը հայտարարվեց ՀԱՅԳԲ-ի ծննդյան օր: Այնուհետև աշխարհով մեկ հրար հաջորդեցին գնդական արձակումները՝ թուրք դիվանագետների ու թուրքական պետությունը ներկայացնող հաստատությունների դեմ: Ակսվել էր նորագույն զինյալ ազատագրական պայքարը՝ Յայկական հարցի լուծման նպատակով:

Բանտում, հետևելով դրսի իրադարձություններին, Գուրգեն Յանիկյանը հայտարարեց. «Իմ մոտեցումը Յայ դատի առնչությամբ նոյնն է, ինչ որ անցյալում էր: Խոսքով ոչ ոքի ազատություն կամ երկիր չի տրվի: Բայց ի՞նչ կարող են ամեն բանտից: Ես միայն կարող եմ ուրախանալ, երբ լրագրերում կարդում եմ, որ ստեղծվել է մի բռունքը, որ կոչվում է Յայատանի ազատագրության հայ գաղտնի բանակ: Այս բռունքը է այսօր գրոծ կատարողը, և իմ միակ հույսը դրա վրա է»:

1980 թվականին սփյուռքահայությունն առաջին անգամ ճանաչեց պայքարող իր զավակներից երկուսին: Յոկտեմբերի 3-ին, ժամկի հյուրանոցներից մեկում, իր պատրաստած ռումբի հանկարծակի պայքունի հետևանքով ծանր վիրավորվեց ՀԱՅԳԲ հիմնադիրներից Ալեք Ենիգոնշյանը (ՅՅԴ անդամ), թերեւ մարմնական վճառվածքներ ստացավ Սյուզի Մահսերեցյանը (ՌԱԿ անդամ): Այս միասնությունը, որ աննախադեպ էր սփյուռքում, այդուհետ օրինաչափություն դարձավ ՀԱՅԳԲ-ում վկայելով կազմակերպության զաղափարական և քաղաքական հաստինությունը, Յայկական հարցի լուծման պայքարը համաժողովրդականի վերածելու նրա նպատակամղվածությունը:

Ալեքն ու Սյուզին ձերբակալվեցին և կանգնեցին շվեյցարական դատարանի առաջ: Նոր ժամանակներում դա առաջին քաղաքական դատավարությունն էր, որի ընթացքում տեսողությունից և ծախս ձեռքից (մինչև դաստակակը) զրկված Ալեքն օրինակելի տոկունություն ցուցա-



**բերեց:** Կուռ էր նրա խոսքը դատարանում, տրամաբանված՝ Երիտասարդ մարտիկը բացատրեց, որ Հայկական հարցին խաղաղ միջոցներով լուծում գտնելու ջանքերն ապարդյուն են անցել: Մնացել էր ծայրահետ միջոցը՝ զինյալ պայքարը, որին նոր սերունդը ստիպված գնաց: Նա շեշտեց, որ մեղադրյալի արողին պետք է նստած լինեին բուրքական պետության ներկայացուցիչները, այն պետության, որը շարունակում է մերժել Հայոց ցեղասպանությունը, մեր ժողովրդի անանցանելի իրավունքները, որը չի ճանաչում օսմանյան կառավարության հանցագործությունները, խուսափում է քավել նրա մեղքը, վերացնել ցեղասպանության հետևանքները: Դատարանի որոշմանը երկու երիտասարդներն էլ ազատ արձակվեցին դատարանի դահլիճից: Դա առաջին հաղթանակներից էր:

1980 թ. հոկտեմբերի ճակատագրական այդ օրերին հրատարակվեց ՀԱՐԳԲ «Հայաստան» պաշտոնաթերթի առաջին համարը՝ թիվ 0:

Մինչ այդ ամիսներ առաջ արդեն հիմնադրվել էր Հայկական ժողովրդային շարժում (ՀԺԸ) կազմակերպությունը, որի նպատակն էր օգնել ազատագրական պայքարին ու տարածել նրա գաղափարները: ՀԺԸ-ն Արենքում հրատարակեց իր պաշտոնաթերթը՝ «Ժողովրդային պայքար» խորագրով և լույս ընծայեց պաշտոնական կամ համակիր այլ պարբերություններում՝ «Ազատ հայր» Կանադայում և ԱՄՆ-ում, «Խոր սերունդ»՝ ԱՄՆ-ում, «Հայ պայքարը»՝ Ֆրանսիայում, «Կայծերը»՝ Անգլիայում, «Վաճը», «Սուշը», «Կարինը», «Երկարե շերեփը» և «Սփյուռքը»՝ Լիբանանում, «Հայուլը»՝ Կիպրոսում, «Արաքսը» և «Ապրիլը»՝ Իրանում, «Արցախը»՝ Հնդկաստանում և այլն:

ՀԱՐԳԲ-ի պայքարը նոր թափ ստացավ 1981 թվականին: Սկիզբ առան որակական նոր գործողություններ, որոնցից էին՝ Փարիզի քուրքական հյուպատոսարանի գրավման, Անկարայի «Էսենբրոդ» օդանավակայայանի, Ստամբուլի ծածկած շուկայի անձնասպանական ռազմական գործողությունները, ինչպես նաև Փարիզի «Օռլի» օդանավակայանի Թուրքական պվիառլիների գրասենյակի ռմբահարումը:

1981 թվականի հուլիսին Թեհրանում, թուրքական դեսպանատան վրա հարձակում նախապատրաստելիս, Իրանի իշխանությունները ձերբակալեցին երկու հայ երիտասարդների՝ Եղիա Քեշիշյանին ու Զավեն Արեթյանին: Երիտասարդ մարտիկների ազատ արձակման համար հնարավորինս ամեն ինչ արվեց, սակայն այն պահին, երբ թվում էր՝ հաջողությունը մոտ է, սեպտեմբերի 17-ին գումար բանտում նրանց գնդակահարության բորբ...»

1981 թ. սեպտեմբերի 24-ին Փարիզի թուրքական հյուպատոսարանի գրավումը, որը կրում էր «Վաճ» խորհրդանշական անվանումը, իրագործեց ՀԱՐԳԲ-ի «Եղիա Քեշիշյան անձնասպանական խմբակը»: Խնդիր կազմում էին մարտիկներ՝ Վազգեն Սիսյանը, Հակոբ Զուլֆյանը, Գևորգ Գյուղեցյանը և Արամ Բասմաջյանը:

Թեև առաջին իսկ ընդհարման ժամանակ նրանցից երկուսը՝ Վազգենը ու Հակոբը, վիրավորվեցին, սակայն առաջադրված խնդիրն իրագործվեց: Հյուպատոսարանի պահակախումբը չեղորացվեց, անձնակազմն ու ներկաները պատանդ վերցվեցին: Հյուպատոսարանն ամբողջությամբ հսկողության տակ էր:

Գործողության նպատակն անտեղի արյուն թափելը չէր և ոչ էլ ավելորդ բռնություն գործադրելը: Դա էր պատճառը, որ պատանդների նկատմամբ ցուցաբերվեց ընդգծված հարգալից վերաբերմունք: Հարկավոր էր շեշտել, որ պայքարը հայությանը պարտադրել էին իրենք՝ Հայկական հարցի արդարացի լուծման հակառակորդները: Խումբը պատրաստ էր հնարավոր հարձակման դեպում դիմադրել մինչև վերջ, բայց գործողության իսկական նպատակը ՁԱՅՆ-ների միջոցով՝ Հայ դատի վերածարծում էր Եվրոպայում, տարագիր սփյուռքահայության քաղաքական խնդիրների վրա ուշադրություն հրավիրելը, իսկ երիտասարդության բողոքի ու արդարության ձայնը միջազգային ատյաններին հասցնելը, վաճառ և Արևմտահայաստանը որպես բռնագրավված տարածք ներկայացնելը: Տեղական իրավապահ մարմնների հետ սկսվեցին բանակցություններ, առաջադրվեցին քաղաքական պահանջներ, իսկ Ֆրանսիայի իշխանություններից պահանջվեց ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բանակցությունների շնորհիվ Վազգենը ուղարկվեց հիվանդանոց, իսկ հյուպատոսարանը 15 ժամ իրենց վերահսկողությունը մերժվեցին տեղական իշխանություններին: Արջնում պայքարի նոր, պատասխանառու փուլը էր: հարկավոր էր պատրաստվել քաղաքական դատավարության:

Դատավարությունն սկսվեց 28 ամիս անց՝ 1984 թ. հունվարի 24-ին, տևեց յոթ օր և վերածվեց թուրքական ցեղասպանությունը ահարեւիչ պետության քննադատության ու դատապարտման մի իսկական ատյանի: Դատավարության ընթացքում մարտիկները բազմից մեղադրյալներից վերածվում էին մեղադրողների. չէ՞ որ տեղի ունեցած ահարեւությունը չէր, այլ իրավագրկված ժողովորդի պայքարի ելած երիտասարդության արդարացի բողոքի ժիշը: Մեծ էր սփյուռքահայության, մասնավորաբար ֆրանսահայության աջակցությունը: Մարտիկների շահերը հաջողությամբ պաշտպանում էին փաստաբաններ՝ Պատրիկ Ղևջյանը, Ռաֆֆի Պեշտիմալզյանը, Յանիկ Լըկլերը և ուրիշներ:

Այնուհետեւ, երիտասարդ մարտիկները դատապարտվեցին 7-ական տարի ազատազրկման: Ազատվելուց հետո Վազգենը, Հակոբը և Գևորգը հաստատվեցին Մայր Հայրենիքում, թեև վերջինս հետագայում տեղափոխվեց ԱՄՆ, իսկ Արամը, ֆրանսահական իշխանությունների հետևողական հոգեքանական ճնշման տակ, չբացահայտված պայմաններում ինքնասպանություն գործեց բանտում, 1985 թ. ապրիլի 12-ին:

1982 թվականի օգոստոսի 7-ին ՀԱՐԳԲ-ի ցոկատներից մեկի մարտիկներ՝ Զոհրապ Սարգսյանը ու Լևոն Էքմեքյանը գրոհեցին Անկարայի «Էսենբրոդ» միջազգա-

յին օդանավակայանը: Շուրջ երեք ժամ տևած մարտի ընթացքում, երբ զինամբերը սպառվեց, Զոհրասան ինքնասպան եղավ, իսկ Լևոնը ծանր վիրավորվեց ու գերի ընկավ: Թուրքական դատարանը նրան դատապարտեց մահվան: Լևոնը թուրքական բանտում կախաղան հանվեց 1983 թ. հունվարի 23-ի առավոտյան ժամը 6-ին:

Ի հարգանս Զոհրապի ու Լլոնի անօրինակ խիզախության օգոստոսի 7-ն այդուհետ ընդունվեց որպես Նորագույն զինյալ ազատագրական պայքարի նահատակների օր:

1983 թվականի հունիսի 16-ին ԿԱՐԳԲ-ի մեկ ուրիշ մարտիկ՝ Սկրտիչ Սատարյանը, մի քանի ժամ շարունակ դադարեցրել էր Ստամբուլի առևտուրական ամենազգայում երակի «քարախումներ»: Քաղաքի առևտուրական խոշոր կենտրոնը՝ ծածկած շուկան, տակնուլվար էր եղել: Գործողության ավարտին Մկրտիչը նոյնպես ինքնասպանություն գործեց. աջ ձեռքով պահել էր ձեռնառումքի օղակը, իսկ ձախ ձեռքի երկու մատուռով կազմել էր հաղթանակի նշանը՝ V-ն (victory / հաղթանակ):

Նորագոյն զինյալ ազատագրական պայքարն ունեցավ նաև նահատակներ՝ 39 հոգի, և ինչպես նկատեց մեր հոգևորականներից մեկը՝ «Ճիշտ մեր այբուբենի տառերի քանակով»:

39 անուն Գոլդբեն Յանիկյան, Յակոր Տարագծյան,  
Կարապետ Փաշարեզյան, Վարդան Շիրվանյան, Մկրտիչ  
Մատարյան, Լևոն Էքմերջյան, Զոհրաբ Սարգսյան, Պի-  
եռ Գյուլումյան, Սուրեն Գրիգորյան, Զավեն Աբերյան,  
Եղիա Քեշիշյան, Արամ Բասմաջյան, Սարգիս Գյուլխանց-  
յան, Անդրանիկ Պարույրյան, Ժան Խովյան, Գառնիկ Վահ-  
րայշյան, Խաչատոր Խուրշուտյան, Սիլվա Զիլինեկիր-  
յան, Յրազ Թթորյան, Յրազ Լուսինյան, Սովուս Բեքար-  
յան, Սարգիս Դերձակյան, Անդրանիկ Սասունյան, Սինաս  
Սիմոնյան, Րաֆֆի Բալյան, Զավեն Գագանճյան, Յարու-  
թյուն Վարդանյան, Յարություն Թագուշյան, Նուպար Յա-  
լոմյան, Խաչիկ Յավարյան, Վիգեն Այվազյան, Վաչե

Տաղյան, Արշակ Տեր-Սահակյան, Զորյ Վարդանյան, Հարություն Խաչերյան, Հարություն Գյուլուզյան, Արամայիս Օհանյան, Լևոն Երկար, Գևորգ Աճեմյան: Նրանց հիշատակը հավերժացնելու համար «Եռարլույ» պանթեոնում կառուցվեց հուշարձան, դրվեց 39 շիրմաքար, որոնք սպասում են բանկազին մատունքների վերադարձին հայրենի հող... Ինչպես նաև ուրիշներ՝ Նախկին քաղաքանարկյալներ ու ԱՄՀԲ-ի ազատամարտիկներ, ովքեր երբեք չըթեցին պայքարի դիրքերը և հավատացին, որ «Դաղբանակը մերն է...»:

Հայր Անդրանիկ Կռանյանի դիպուլվ արտահայտության՝ այս երիտասարդների շնորհիվ ծովեցեղքին լրված ու ժանգոտված Հայկական հարցի նավը դուրս եկավ բաց ծով՝ նոր նավարկության և միջազգային դիվանագի-

տության ոլորտում նպաստեց

Հայկական հարցի լուրջ ու  
գործնական քննարկմա-  
նը, ծավալմանն ու հաս-  
տատմանը: Դրա վեռ  
ապացույցը Հայոց  
ցեղասպանության  
մասին՝ 1987 թ.

սամսի 1987 թ.  
Եվրախորհրդա-  
րանի և մի շաք  
տերություննե-  
րի խորհրդա-  
րանների ըն-  
դունած օրի-  
նագծերն են...  
Մինչ...

Սակ այլ  
հանգամանք,  
որ պակաս  
կարևոր չէ:  
ՅԱՅԳԲ-ի պայ-  
քարը ոգեշնչան  
ու նվիրումի օրի-  
նակ դարձավ Ար-  
ցախյան ազատա-  
մարտի համար:

1977 թ. զինյալ պայքարի ասպարեզ մտավ «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՑԱՄ) կազմակերպությունը, որն իր ձևունոր հասարակության համար առաջ է գալիք կազմակերպությունը:

սապագությունը, որը լրի օսկելը և հայրեց Վատիկանի թուրք դեսպանի սպանությամբ: Այնուհետև նույն կազմակերպությունն ստանձնեց Սիրիայի և Բելղրադի թուրք դեսպանների ու Լոս Անջելոսի թուրք հյուպատոսի սպանությունները: Բելղրադի գործողությունն իրականացնողներից մեկի՝ Անդրանիկ Պողոսյանին հայրենի ժողովուրդն ավելի լավ ճանաչեց, երբ նա եկավ Երևան՝ բուժելու ողնաշարի ծանր վնասվածքը և հաստատվեց Հայրենիքում:

ՀՅԴ-ի հովանավորած ՀՅԱՄ-ի հաջորդ՝ «Նայ հեղափոխական բանակի» ամենահանդուգն գործողությունը 1983 թ. հուլիսի 27-ի Լիսարոնի բուլղարական նեսպանատան գրավումն էր։ Գործողությանը նաև նաև կացած բոլոր հինգ մարտիկները զոհվեցին՝ նեսպանատունը պայթեցելիս։

«Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» և «Հայ հեղափոխական բանակ» կազմակերպությունները չեն ունեցել մամուլի իրենց սեփական օրգանները, սակայն հանդես են եկել մեծ կամ փոքր հաղորդագրություններով, որոնք տպագրվել են սփյուռքի պարբերական մամուլում, հատկապես դաշնակցությանը պատկանող կամ հարող թերթերում։ Նրանց մասին առա-



# «ՀՈՒՍՎԱՎՏՈՒԹՅՈՒՆ ՇԱՏ ԳԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԳՈՒՌ ԿԲԱՆԱ...»

**Կ Ա Բ Է Լ Ի Կ Ա Բ Ա Մ Ա Զ Յ Ա Ն Ի (1960-1985) Մ Ա Կ Վ Ա Ն 20-ր դ**

Վել շատ իրապարակուներ կան ԴՅԴ Լիբանանի երիտասարդական միության «Ռազմիկ» պարերականում:

Դայլիկական այս գինյալ գաղտնի կազմակերպությունների վերջնական նպատակը՝ թուրքիայի բռնագրաված հայկական հողերի ազատագրումը, չիրականացավ: Դայ հաջորդ սերունդների սրբազն պարտքն է շարունակել նրանց պայքարը՝ հաղթանակով պասկելու կիսավարտ գործը:

## Տիգրան Փաշարեցյամ

1985 թ. ապրիլի էր: 25-ամյա երիտասարդը, սակայն, չէր ուզում ապրել...

«Կան» գործողության տպավորությունը դեռ շատ թարմ էր աշխարհում: Սասնակիցները՝ Վազգեն Սիսյան, Դակոր Չուլֆայան, Արամ Բասմաջյան և Գևորգ Գյուղելյան, ֆրանսիական բանտում էին, սակայն, ինչպես իրենք էին ասում, գոհ էին ու երջանիկ, որովհետև կատարել էին իրենց խնդիրը՝ գրավել էին Փարիզի թուրքական հյուպատոսարանը և բարեբախտաբար բոլորն էլ ողջ էին: Մնացյալը նրանց համար երկրորդական էր: Սա՝ առաջին հայացքից:

Ֆրանսիական իշխանությունները չբավարարվեցին նրանց ազատազրկմամբ (յուրաքանչյուրին յոթ տարի ժամկետով): «Դեմոկրատական» Ֆրանսիայի «դեմոկրատական» իշխանությունները շատ «դեմոկրատական» էին իրենց գործողություններում, մասնավորապես հատուկ ծառայություններն անչափ «ուշադիր» էին հայ քաղբանտարկյալների նկատմամբ: Այնքան «քաղաքավարի» էր նրանց վարմուճքը, գործողությունները՝ այնքան քաղաքակիրք, որ ոչ մի հետք չէին թողնում: Սակայն տղաներն ամեն վայրկյան գգում էին ոչ միայն նրանց ներկայությունը, այլև ճնշումները: Տարբեր առիթներով գորեթե նույն բառերով են ներկայացրել տեղեղված իրավիճակը՝ բանտից ազատվելուց հետո Դայաստանի Դանրապետությունում հաստատված «Կան» գործողության անդամներից երեքը:

«Կան»-ը ՀԱՐԳԲ-ի մինչ այդ իրականացված թերևա ամենահաջող գործողությունն էր նի շարք առումներով: Նախ՝ մտահղացման տեսանկյունից նպատակն իրականացել էր, երկրորդ՝ դատավարությունը վերածվեց համահայկական ցույցի՝ անկախ կուսակցական կողմնորոշումներից, երրորդ՝ նորագույն ազատագրական պայքարում դարձավ շրջադարձային:

Ավանդ, տղաները չկարողացան լիովին վայելել հաղթանակի բերկրանքը. 1985 թ. ապրիլի 12-ին բանտում Արամն ինքնասպան եղավ, իսկ ընկերոջ կորստի ցավը դարձավ անբաժան...

«Կան»-ի մասին նրանք խոսում են այնպես, ասես 1981 թ. սեպտեմբերի 24-ը երեկ էր, և Արամը մշտապես ներկա է այդ գրույցներում: Իսկ դրանք այնքան վար են, այնքան տպավորիչ, որ ինչ-որ տեղ դժվարանում են հուշեր անվանել...

Դակորն Արամի հետ ծանոթացել է ՀԱՐԳԲ-ի ռազմակայանում, երբ արդեն որոշվել էր «Կան»-ի ծրագիրը: Իմացել է, որ նա Բեյրութում խաղում է ՀԱՐԳԲ-ի բասկետբոլի խմբում: Արտաքին հրաշալի տվյալներ է ունեցել դրա համար՝ 1,90 մ հասակ: Ազնիվ է եղել և բավական



տաքարյուն: Այդ մասին ավելին է պատմում Վազգենը, քանի որ նրան ավելի վաղ է ճանաչել: Ինքն էլ ֆուտբոլ է խաղացել, բայց՝ ՀԱՐԳԲ-ի խմբում:

- Մրցումների ժամանակ հաճախակի ծագած վեճերում և կրիվներում, - իիշում է Վազգենը, - Արամը միշտ ներկա էր և... «գլխավոր դերում»: Մրցակցությունն այնքան ուժեղ էր հայկական թիմերի միջև, ասես ծակատագրական՝ ազգային հարց էին լուծում...

ՀԱՐԳԲ-ում ծանոթանալուց հետո Կազգեմն ու Արամն այնքան են մտերմանում, որ հետագայում նման կրիվների ժամանակ դահլիճում Վազգենի ներկայությամբ Արամն անմիջապես խաղաղվում էր, եթե անգամ Վազգենը հակառակորդ թիմի երկրպագու էր...

«Կան» գործողության ժամանակ Վազգենն ու Դակորը ծանոթական վիրավորվում են և տեղափոխվում հիվանդանոց: Դատու են միայն տեղեկանում, որ Արամը գերազանց է կատարել իր հանձնարարությունը: Վազգենն ու Գևորգը զինված են եղել ատրճանակներով, Դակորը՝ «Կալաշնիկով» ավտոմատով, իսկ Արամը՝ ռումբերով: Ջուպատոսարանը գրավելուց հետո Արամն է հսկել պատանդներին:

...Գործողությունից հետո տղաներից երեքն իրար հանդիպում են 1981 թ. հոկտեմբերի 29-ին՝ Վազգենի ծննդյան օրը, երբ նրանց շղայակապ տեղափոխում են «Ֆրեն» բանտը և հավաքում նեկ սենյակում:

- Արամինը բերեցին Արամին, - պատմում է Վազգենը: - Զգիտեմ՝ ինչ ուրախություն էր դա ինձ համար... Մի քանի ռոպե անց հայտնվեց Դակորը:

Այստեղից նրանց տեղափոխում են «Ֆլորի-Մերուժիս» բանտը, որտեղ հանդիպում են Գևորգին:

- Այսպիսի տրամադրության մեջ էինք, - շարունակում է Վազգենը, - ասես «դրախտում» էինք հայտնվել: Բոլորս էինք ողջ-առողջ...

Տղաների համար հոգեբանական ծանր վիճակն սկսվում է, երբ ֆրանսիական հատուկ ծառայությունները, ինչպես արդեն ասացինք, սկսում են իրենց քայլայիշ գործունեությունը: Այստեղ էր, որ Արամի նյարդերը չոփացան... Ֆրանսիական իշխանությունները եղած որակեցին ինքնասպանություն, սակայն, ընկերների կարծիքով, հենց նրանք Արամին հասցրին այդ վիճակին...

- Դժվար է կուհել, թե ատամի ցավի, գլխացավի կամ այլ անհանգստության դեպքում նեզ ինչ դեղեր էին տալիս, - իր կասկածներն է հայտնում Վազգենը: - Դրաց էլ որոշ մարդիկ, նույնիսկ՝ հարազատներ, նպաստեցին այդ բանին: Դա սկսվեց 1983 թ. ամռանը կազմակերպությունում ստեղծված իրավիճակից հետո... Արամի մահից հետո մենք մեր մի



Արամ Բասմաջյանը թուրք պատանդի հետ՝ «Կան» գործողության ըմբացքում

աչքը բաց էմբում, որովհետև այդ «աշխատանքը» շարունակվում էր մեզ հետ: ճիշտ է, ֆրանսիական դատարանը մեզ ահարեկիչներ չհայտարարեց, բայց փորձում էին ներկայացնել աշխարհին որպես թույլ, հիվանդ, ծախողակ, հոգեպես անկայուն մարդիկ, որ ընդունակ են անգամ ինքնասպանության... Եկող սերունդների մեջ մեր ոգին կոտրելու համար էր դա արվում: Ֆրանսիական արդեն ճանաչեել է Հայոց ցեղասպանությունը, բայց չէ՞ որ այդ երկրի հշխանությունների մեջքով Արամն ինքնասպանության հասցեց ֆրանսիական բանտում...»:

Մի անգամ Դարաբաղում արտասահմանցի մի լրագրող հարցում է Լեռնիդ Ազգալյանին. «Ի՞նչ գույնի եք դուք, այսինքն՝ ո՞ր կուսակցության եք պատկանում»: Լեռնիդը ծնկաչոր մի բուռ հող է վերցնում ու ասում. «Ահա իմ գույնը...»:

1992 թ. հունիսի 21-ին Մարտակերտի շրջանի Տոնաշեն գյուղի մերձակայքում գոհկեց «Ազատագրական բանակի» հրամանատար Լեռնիդ Ազգալյանը:

88-ին շատ-շատերի կարծիքով՝ Ղարաբաղի համար պայքարը նշանակում էր գնալ Թատերական հրապարակ՝ միտինգի, ոմանց համար՝ ճառեր արտասանել: Եթե այն ժամանակ Լեռնիդն ընկերներին ասում էր. «Այս պայքարը զինված պայքար է դառնալու: Պետք է պատրաստվել»: Ու պատրաստվում էր... Պատրաստվում էր համախոնների հետ: Լեռնիդի բնակարանը «փորձարան» էր դարձել. զենք էին պատրաստում: Նետո հավաքեց համախոններին, ավելի ճիշտ՝ ընտրյալների ու սկսեց զինվոր դաստիարակել, կանոնավոր բանակի զինվոր:

Լեռնիդ Ռուբենի Ազգալյան: Ծնվել է 1942 թ., Թիֆլիսում: 1959 թ. Երևանում ավարտել է միջնակարգ դպրոցը: 1960 թ. ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, հետագայում տեղափոխվել Երևան և ավարտել ԵՊՀ նույն ֆակուլտետը: Աշխատել է ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում՝ Պետականի լազերային տեխնիկայի հաշվողական կենտրոնում, Լազերային տեխնիկայի գիտարտադրական միավորում: Աստոնային Ելեկտրակայանների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում զբաղեցրել է տարբեր պաշտոններ: Արցախյան շարժման սկզբնավորման առաջին օրից Լեռնիդ Ազգալյանը պայքարի առաջանարդիկը և գաղափարակիր լինել, այս ժամանակ համար մեջ է թաքնված նրա մահվան առեղջվածքը:

«Նահատակներ...»

Այդ մեծ մերեները ամենից քիչ իրենց և իրենց կուսակցության կպատկանեն, ամբողջն՝ իրենց ցեղին և պատմության:

«Կամ կուսակցական նահատակներ ու հերոսներ,

կառ ու կմնա ազգային մարտիրոսագրությունը և հերոսականը» (Գ. Նժդեհ):

Արցախյան հերոսամարտը, Լեռնիդը և բազում այլ նահատակներ իրենց կյանքով և խենթացնող նահատակությանք եկան մեկ անգամ և ապացուցելու Ամենայն Հայոց Սպարապետ Գարեգին Նժդեհի այս խոսքերի անժամանցելիությունը:

Ամենահզոր ու ամենաազգային կուսակցությունն անգամ անկարող է իր մեջ պարփակել այնպիսի մեծություն, ինչպիսին Լեռնիդն է: Իրոք, կուսակցական նահատակներն ազգայնանում են, դառնում սրբազն մարտիրոսները ողջ ազգի...»

Լեռնիդն ապացուցեց, որ կարելի է և ավելի ճիշտ է նայել ազգային խնդիրներին ու գաղափարախոսությանը ոչ կուսակցական պրիգանյով: Ազգային անեղծ տեսակով է, որ հնարավոր է ոչ միայն պահպանել, հղորացնել Հայրենիքը, այլև վերագտնել այն սրբազնը, որը բանի օտարացվել է իրական տիրությունց:

Դեռևս ազատագրական շարժման սկզբում մարգարեաբար կանխատեսելով, որ այն զինված պայքարի է վերածվելու, սկսեց նախապատրաստվել արդեն հասունացող պատերազմին՝ երբեւ չհայտնվելով տարբեր հարթակներից կուրքք ծեծող ճառասացների կողքին:

Զուր չէ, որ Լեռնիդը մերժում էր կուսակցականությունը: Միգուց մեղանչեմ ճշմարտության դեմ, բայց գուցեն հենց նրա կուսակցականության մերժման մեջ է թաքնված նրա մահվան առեղջվածքը:

«Դրամայողաբար պիտի հոգեփոխվեն կուսակցությունները: Մեր մերժին հակամարտությունները զինվորում են արտաքին քշնամում՝ ընդդեմ մեր ժողովրդին և երկրին:

Կույր ատելությամբ հիվանդ՝ մեր կուսակցություններից ոմանք մոռացել են հայ ժողովրդի իմքնապաշտպանության սրբազն գործը, հանուն որի իր թե կյանքի են կոչված» (Գ. Նժդեհ):

Բարձունքի վրա չգտնվեց նաև, ցավոք, մեր մտավորականությունը, որը կորպորական իր կեցվածքով ոչ միայն չելավ պայքարի (ընայած կոչված է այդ պայքարի առաջանարդիկը և գաղափարակիր լինել), այլև սուրբ նահատակաց արյամբ վաստակած խաղաղությունն է տանուլ տալիս...

Լեռնիդը (Չահումյանի վեհ լեռների վրա Արծվի հայացքը Հայոց երկրի մի մասունքին հառած) ասում էր. «Մենք մինչև իհնա համձեւ ենք հողերը թշնամուն: Դիմադրության ոգին շատ է թուլացել մեր մեջ: Այդ պատճառով էլ մեր մեջ գտնվում են մարդիկ, նույնիսկ՝ բարձրաստիճան, ովքեր կարծում են, թե մենք պետք է հրաժարվենք Հայ դատից: Դրա պատճառն այն է, որ մեր ազգի «ինտելիգենցիան»՝ հիմնականում ցածր ոգու տեր ամձինք, զգիտեն մարտնչելու ծկը: Գետաշենը, Արցախը, Չահումյանը, Զանգեզուրը մեր ֆորպուտն են (առաջապահ դիրքերը - խմբ.): Դրանք գտնվում են անմիջական ոչնչացնան վտանգի տակ: Մի փոքր կազմակերպված ուժ ամեն պահի կարող է հարձակվել և կրկնել 15 բվականը: Դրա համար մեր ազգի տարբեր գաղափարների մարդիկ իհնա հավաքվել են և կազմում են զինված ջոկատներ: Այս ընթացքում տեղի ունեցավ սելեկցիա՝ ընտրում. մնացին

նրանք, ովքեր իրոք վեր էին կացել պաշտպանելու իրենց հողը, իրոք հասկանում էին, որ չի կարելի հանձնել ոչ մի կտոր հող, իրոք, որ սա Յայաստան է: Ի՞նչ է ասեն կենտրոնական կամ ոչ կենտրոնական, միջազգային կամ ազգային գործիչները, սա Յայաստան է և... վերջ»:

\*\*\*

Քանի՛ սրբավայր և Պատմական Յայաստանի քանի՛ նահանգ մնացին կարոտ իրատես և իրապես ազգային գորավարի այս վճռական խոսքին...

Նա հաճախ սիրում էր կրկնել. «Երբ կդան կասեն, որ ես զոհվել եմ, չի ավատաք, ես Ստամբուլի պատերի տակ եմ զոհվելու»: Նա համոզված էր իրեն բաժին հասած առաքելության իրատեսությանը և երևի թե համոզված է եղել, որ իրենից հետո դեռ գալու են այդ առաքելության շարունակողներն ու փառավոր ավարտին հասցնողները...

«Ի՞նչ երջանկություն - մեռնել այն լուսակառ հավատքով, որ քո անյունից շանթանման հերոսներ պիտի ծնին...»

ԶԵ, չի՛ մեռնում հերոսը, նա իր անունն ու անորն է փոխում...» (Գ. Նժենի):

... Յազարամյակների խորքից եկող ինչպիսի՝ ոգե-դենություն, վերլուծական, ռազմավարական միտք ունեցող հանճարների ինչպիսի՝ համադրում:

Բազմաբեռ էր նրա հանճարը...

Իր առաքինությունների բազմաքետո մազմիսով բոլորին ձգում էր դեռ իրեն. մի մասին՝ գաղափարախոսության վեհությամբ, այլոց՝ հայրենասիրության խորությամբ, մյուսներին՝ մարդկային բարձր հատկանիշներով, չորորդներին...

Յամոզված էր, որ իրենից հետո եկողներն ավարտին են հասցնելու սրբազն առաքելությունը:

Նա համոզված էր...

Իսկ ա՞յժմ... Առաջմն հայկական շատ բնօրրաններ մնացել են այնտեղ, մնացել են որպես կորսված Յայրենիքի մի մաս...

ԹԵ՞, դեռ կվերադարձնենք...

Լեռնիդն ասում էր. «Մենք կդնանք, կդնանք մեր բոլոր ծանապարհներով: Մենք պիտի քայլենք մեր ծանապարհներով...»:

«Մշուշի միջից տեսիլ դյուքսական,  
Բացվում է կրկին Նախրին տրտում...»:



Լեռնիդը (աջից՝ առաջինը) Գյուլիստան-Բուլղուս ճանապարհին:

Դիշո՞ւմ եք Տերյանին...

«Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան...»:

\*\*\*

Որպես իսկական առաջնորդ՝ հայտնվեց նա, երբ իր կարիքն էր զգացվում, երբ Յայրենիքն էր վտանգված: Նա ընտրյալ էր, իսկ նրա բանակը կազմված էր ընտրյալներից: Նա չէր փնտրում մարտիկներ: Վերջիններս էին փնտրում գորավար, նման առաջնորդ:

«Արաքյալի սիրտ, ինաստասեր գլուխ, աղամանդ ծակատ - ահա՛ կատարյալ առաջնորդը» (Գ. Նժենի):

Ահա՛ Լեռնիդ՝ գիտնական-գորավարը...

Նա այն եզակի մտավորականներից էր, ով հանդգեց նետվել մարտի: Նա ապացուցեց, որ մտավորականությունն է ժողովորի ճակատագրի դարբինը, և որ այսօր որ է, իսկ մտավորականությունը երբեւ չի ունեցել ավելի մեծ և պատասխանառու դեր:

Նա պետք է կառուցեր այսօրվա՝ Յայաստանը: Պետք է դաստիարակեր իր երազանքի զինվորներին: Նրանք պետք է տարրերվեին Մամիկոնյանների և Անդրանիկի զինվորներից: Չա դարի պահանջն էր: Ավա՞դ...

Ես զգիտեմ՝ ով է մեղավոր, որ Լեռնիդը զոհվեց, բայց մի պահ խենթանում եմ, և ասում՝ Երանի՛... Երանի՛, քանի որ զոհվեց ռազմի դաշտում, դարանակալ գնդակից և ո՛չ դարանակալ դեղահաբից: Միևնույն է: Նա պիտի զոհվեր, որովհետև նրան չէին ների: Տէին ների հատկապես իր բարոյական հանճարի համար: Բայց Լեռնիդը մահից հետո էլ առավել կենդանի է, քան բազում պաշտոնյաներ, ովքեր իրենց չեզոք ու անտարբեր կեցվածքով նման են կավե անդրիի՝ դրված ոսկե պատվանդանի վրա:

Նա համոզված էր, որ ժողովուրդը մարտականորեն է տրամադրված, և որ Ղարաբաղի հարցը ճակատագրական է մեր ժողովորի համար:


Ոչ մի պարագայում, ոչ որ իրավունք չունի Արցախի հարցին տալ այլ լուծում, քան Լեռնիդի և մեր մյուս նահատակների արյան և ռազմական հանճարի տված լուծումն է...

Յայոց գերեվարված մյուս նահանգներն իրենց խնդրի այսպիսի՝ հանգուցալուծում են աղերսում...

Լեռնիդը վստահ էր. «Ժողովուրդը շատ մարտական է տրամադրված, ժողովուրդը պատրաստ է պատերազմի, պատրաստ է անհրաժեշտ ջանքեր դնել: Մեր ռազմական մարզումները շատ ծանր են, բայց մարդիկ գալիս և պատրաստ են ամեն ինչ անել, միայն կարողանան իրենց երկիրը պահել»:

Նա համոզված էր. «Այն ազգը, որը կկորցնի Ղարաբաղը, կտապալվի լրիվ: Թո՞ւրք կկորցնի՝ ուրեմն թուրքը, Յա՞յլ՝ ուրեմն Յայը: Դրա համար այստեղ (Արցախում - խնդր.) շատ կարևոր հարցեր են լուծվում, սա միայն մի փոքր կտոր հողի հարց չէ»:

\*\*\*



Լուսաբաղձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ծեռքին: Նա գործել ու ստեղծագործել է միտքը երկնքում, ծեռքը՝ երկի վրա. այսի ասեր Ալիշանը:

«Սեր երկրագնդի վրա երկու ուժեր չեն հոգնում - ժամանակն ու հայը՝ մեկը կործանելով, մյուսը վերաշննելով:»



Այս տղաներից շատերը զոհվել են...

**Ժողովուրդն է մեր ժամանակների աստվածությունը: Ժողովուրդն ավելին է, քան իր պետությունը, իր իշխանությունը, անգամ իր մշակույթը:**

Թեև նրա մասին և նրա անունից խոսում են իր բոլոր զավակները, քչերը, սակայն, շատ քչերն են էարանորեն ճանաչում նրան:

Կան գերագույն պահեր և ժողովրդի գոյության ու ճակատագրին սպառնացող արտաքին վտանգի ժամեր:

Եվ իրենց դիրքերի վրա վտանգի պահին մնում են զորավորները միայն:

Նման վայրկյաններին նա զորավարների մեջ փնտրում է զորավորագույնին և նրա ափի մեջ դնում իր ճակատագրը:

Այսպես է աշխարհ գալիս ծշմարիտ առաջնորդը» (Գ. Նժդեհ):

Արդյո՞ք հասկացանք մենք, որ Արցախի պայքարը մի փոքրիկ հողակտորի համար նվազող պայքար չէ, այլ ազգի լինելության հիմնախնդիրը...

Արդյո՞ք հասկացանք, որ այս պայքարին մենք զոհաբերեցինք մեր ազգի լավագույն զավակներին, որ Հայոց Բագինին վաղուց այսպիսի մատաղ չէր մատուցվել...

Երանի՛ հասկանայինք...

1992 թ. հունիսի 6-ին Չայլու գյուղի պաշտպանության մարտերում զոհվեց Վլադիմիր Բալայանը՝ «Ազատագրական բանակի» «Արցախ» ճակատի հրամանատարը:

Ահա Լեռնիդի հրաժեշտի խոսքը. «Ինչո՞վ են տարբերվում անցյալ տարվա նույն այս ժամանակն ու այսօրը: Ընկճած ժողովուրդը ուոքի կանգնեց, վերցրեց գենքը և ազատագրեց իր աշխարհը: Դա Վլադիմիրի ծեռքբուրումն է: Դա ամենամեծ գործն է, որ կարող է անել զորավարը:»

Նա ցույց տվեց մեզ՝ բոլորին, որ միայն գենքով կարող ենք մեր երկիրը պահել: Նման մարդիկ ծնվում են երեք-չորս դարը մեկը: Այս, ինչ արել է այս մարդը, ամեն ոք չի կարող անել: Իրոք նա բոլորին ցույց է տվել օրինակ, Զինվորի մակարդակ: Նա զոհվել է, գնացել դեպի աստվածները. Նրա կարիքն այնտեղ էլ կա: Եթե ուզում եք, որ նրա հոգին կրկին վերածնվի, ուրեմն պետք է այս երկիրը պահենք: Մենք պետք է ամեն մեկս մեր հանդեպ վերաբերվենք նույնպիսի պահանջկուսությամբ, ինչպես նա: Այդ մարդը ոչինչ չի ափսոսացել՝ ոչ ընտանիք, ոչ առողջություն, ոչ միտք, ոչ էներգիա, ոչ ժամանակ: Ոչինչ չի խնայել ծեղ համար, այս հողի համար:»

...Զինվորներն առաջին և վերջին անգամ տեսան, որ իրենց հրամանատարը երեխայի նման լալիս էր: Նա Զինվոր էր կորցրել: Եվ զինվորները տեսնում են ինչպես

իրենց հրամանատարը մի օրվա մեջ ծերացավ...

Վլադիմիրի բաղումից հետո երկու ժամ ոչ մեկի հետ չի խոսում: Կանգնում է մենակ, հետո զղայնացած ծեռքն օդի մեջ թափ է տախու ու ասում. «Պիտի գնամ ու հանդիպեմ Վլադիմիրին այնտեղ՝ երկնքում»:

Տասներկու օր անց Լեռնիդը զոհվում է...

\*\*\*

Նա Զինվոր էր կորցրել, Զինվոր, որին շատ զորավարներ կնախանձեին: Նրա շահած բազում մարտեր շատ բանակներ կիափագեին:

Քանի՞-քանի բնակավայր չարժանացավ Սումգայիթի ճակատագրին՝ շնորհիվ նաև Զինվորների: Զինված պայքարի չորս տարվա ընթացքում նա ընդամենը վեց գինվոր է կորցրել (պարզվում է, ինարավոր է և այդպես մարտավարել):

«Զինվորն ավելին է, քան քաղաքացին, որն իր պարտկանություններից ավելի իրավունք է փնտրում» (Գ. Նժդեհ):

Լեռնիդը գիտեր, որ ամենաանգին այն կամավորներն են, ովքեր մի ամբողջ ազգի ճակատագրին էին իրենց ուսերին տանում՝ որպես ճակատագրով շնորհված սրբազն բեռ:

«Ամենասրբազնը խաչերից, միաժամանակ և ամենածանրը՝ դա ճակատագրին է հարազատ ժողովրդի:»

Այս կրողին և վայ, և պատիվ յոթնիցս...

...Նրանց, որոնք գոռ մարտերի բոցերում իրենց ոգին են պղղապատում, և զարնվում իրու պարտականության ջահել Աստվածներ, երանի՝:

Արծվին, բարձրունքներում՝ բիբերն աստղերին, հոգևարող արծվին էլ երանի՛:

Եվ առյուծին արքայական, որ մեռնելուց առաջ՝ անապատների հավերժության իր վերջին մոնչյունն է խառնում, երիցս երանի՛» (Գ. Նժդեհ):

Նա գնաց դեպի Աստվածներ, դեպի... Հայոց Աստվածներ: Նա գնաց հանդիպելու, միանալու իր նահատակ զինվորներին: Գիտակցում էր, որ անկախ Հայութնիքը նահատակների սրբազն աճյունից է բարձրանում:

Նա գնաց՝ մեզ ավանդելով իր երազած Ազգային բանակ ստեղծումը: Եվ Ստամբուլի պատերի տակ գրիվելու փառքն ու սրբազն պարտականությունները մեզ շնորհեց...

Նրա հիմնադրած և մինչև կյանքի վերջը հրամանատարած «Ազատագրական բանակը» հայկական առաջին բանակն էր՝ անկախ ՀՀ բանակից և Ամենայն Հայոց Սպարապետի կազմավորած Լեռնահայաստանի բանակներից հետո, որը դարերին միտված Հայաստանի բանակի հիմնաքարն էր դառնալու:

Լեռնիդի երազանքն Ազգային բանակի, իսկ բանակի թիկունքում հզոր Հայաստանի պետության ստեղծումն էր: Իսկ բանակը չկար:

Նա այդպես էլ չտեսավ Հայոց բանակը:

Վերջին անգամ Լաշինի ճանապարհը բացելուց հետո էր, ասաց. «Այս հաղթանակները հավասարվելու են զրոյի, որովհետև այս հաղթանակների թիկունքում կամունավոր բանակ չկա»:

\*\*\*

Արդեն իրականություն է Լեռնիդի երազանքը՝ Հայոց ազգային կանոնավոր բանակը: Բայց արդյո՞ք սա էր Լեռնիդի երազանքը: Այն ավելին պիտի լիներ: Հայոց բանակի գաղափարաբանության հիմքում Ազգային գաղափարախոսությունը պիտի լիներ:

«Դամազգեստը, սպառագինությունը, իմացես և զորանցային կյանքը դեռ բանական չեն, որպեսզի զիմ-

ված զանգվածն արդիական իմաստով համարվի զորք: Այդ արտաքին կճայից՝ կեղևից զատ կա հոգեբանական շաղախը, գիտակցական կարգապահությունը, մարտունակությունը, սերմ ասած՝ ոգին, առանց որի զինված զանգվածն ամեն ինչ է, միայն ոչ զորք» (Գ. Նժենի):

Այլ էր Լեռնիդի բանակը, քանզի այլ էր Զորավարը:

**Լեռնիդը** (հունարեն առյուծ է նշանակում) ոչ միայն զիտեր նարտերում առյուծանալ իր անվանը վայել, այլ նաև հարյուրներին առյուծացնել ու մարտի մղել: Յեթանու էր եռթյանք, զորեղ՝ ոգով, ազնիվ՝ հոգով:

**«Մահք չունի ավելի մեծ թշնամի, քան մարդը, մարտիկը՝ անմահության թեկնածող»** (Գ. Նժենի):

Նույնիսկ մահք պարտվեց՝ հասկանալով, որ շատ է շտապել կամ անհուսալիորեն ուշացել է, որպեսզի կարողանար խել նրանից անմահությունը: Նա մնաց անպարտելի, որովհետև նրան մահն էր առաջնորդ ընտրել:

Անընդհատ Սարոյանի խոսքերն են ալեկոծում հոգիս և սղոցում ուղեղու: «Ես ոչ մեկին չեմ դիմում, պարզապես ինչ-որ տեղ ինչ-որ բան սիսալ եմ»:

Լեռնիդը նույնիսկ հերոսի կոչման չարժանացավ, նա, ով ավելի է իմաստավորում մեր գոյք, քան մենք՝ ողջերս: Բայց իշխանավորները չեն, որ պետք է Յերոսին հերոսի կոչում շնորհեն: Ժողովուրդը վաղուց է Լեռնիդին հերոս անվանել, և համոզված են, որ ժողովուրդը նաև կերպարներով է դաստիարակելու նոր սերունդներին: Այդ կերպ է հնարավոր միայն նոր առյուծներ՝ նոր Լեռնիդներ ծնել, որպիսիք ազգը դարձ մեկ անգամ է լույս աշխարհ բերում...

Պալատական որոշումներով չեն որ ժողովուրդը նրան պիտի հերոս կոչի:

**Յերոսի կոչման որոշումը բոլոր ժամանակներում ժողովուրդը է կայացնում, իսկ կնիքը որոշման տակ դնում է ժամանակը:**

Փա՛ռ այն «խենթերին», ովքեր ապրում են այնպես, ասես անմահ և անմահանում են իրենց խենթացնող մահով:

Ուզում եմ մտովի ծնելել նրա շիրմին, նրա հիշատակի առջև և երդվել, որ կձգտենք ոչ մի կտոր հայրենի հող չքողնել կարոտ Լեռնիդի վճռական խոսքին. «Սա Յայատան է և.... վերջ»:

Մենք պարտավոր ենք ծնելու նոր Լեռնիդներ, եթե ուզում ենք, որ համաշխարհային հերկի ակոսներում մեր ազգային հետքը երեւէ չանհետանա և կրել ազգային հավերժության շղթայի մեր բաժին օդակը, որը նրա կռած օդակի օրգանական շարունակությունը պետք է լինի:

Այժմ, երբ նրա նահատակության տասնամյակը բոլորել և



## «ՀՈՒՍՎԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԱՏ ԳՄՔԱԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԴՐՈՒՅԱԿԱՆ ՎՐԱՎԱՐՈՒՄ...»

20



Յատուկ ծառայությունների ճնշումներին Արամը չեր դիմանում դեռ նախադատավարական փուլում: Այդ ժամանակ նա արդեն մեկ անգամ նման փորձ կատարել էր, որը կանխվել է հատկապես ընկերների շնորհիվ: Իսկ երկրորդ անգամ...

Դատավարությունից հետո Վազգենին և Արամին արգելավակել են կից խցերում: Նրանք կարողացել են խոսել իրար հետ պատուհանից կամ պատի մեջ փորված անցքից: Այդ անցքով էլ Վազգենը նրան գրելու թղթեր է փոխանցել, որոնք Արամը փակցրել է իր խոհ պատրիկ «Յայատան», «Կեցը» հայ ժողովուրդը» և այլ գրություններով:

Բարոյահոգեբանական ճնշումները տղաների վրա ինքնանպատակ չեն:

- Թուրքական հյուպատոսարամի գրավումից հետո հայերը միասնության եզակի օրինակ ցույց տվեցին վաղուց արդեն խիղճը մեռած աշխարհին: Աշխարհը սարսափեց մեր կամքից, - իհշում եմ տարիներ առաջ Գևորգի հետ իմ գրույցից:

Ցավոք, Գևորգն այսօր ՀՀ-ում չէ: «Վան»-ից հետո նա երկրորդ անգամ գենք վերցրեց Արցախի ազատագրական մարտերում: Նույն հավանաբար կաներ Արամը: Նա գաղափարական մարտիկ էր և առաքելություն ուներ:

Այդ գաղափարը հավատք է ազատագրական պայքարի նվիրյալների համար:

- Զինյալ ազատագրական պայքարի գաղափարը միշտ մեր մեջ է, և աղիկա կփոխանցենք մեր զավակներում, - իրենց ուխտը հաստատում է սակավախոս Յակոբը: - Ամբողջ ժողովուրդը պետք է զինված ըլլա այդ գաղափարով: Ազատագրական շարժման գաղափարը պետք է միշտ վար պահել, որ մարդիկ չիուսալքին, չընկրկին: Արամը համբերություն չուներ: Անոր մեջ հուսահատություն կնկատէինք բանտին մեջ, որն ալ այդ դոբրդության պատճառը դարձավ: Յուսահատությունը շատ դժբախտություններու դրւ կրանա: Մենք պետք է միշտ պատրաստ ըլլանք պայքարի...

Յազար ափսոս, որ Արամն այսօրան վահ հեռացավ կյանքից: Յազար ափսոս, որ նա չտեսավ մեր անկախությունը: Յազար ափսոս, որ նա մեզ հետ այսօր չի պայքարում նորանկախ ՀՀ ազգային բանակի կայացման, հայոց պետականության ամրապնդման և հայոց ազգային հարցերի լուծման համար: Անասելի կարծ էր նրա կյանքը, անցած ճանապարհը՝ պատմական: Անավարտ մնացին նրա գործն ու երազանքը, իսկ մենք այնքան անելիք ունենք...

Յասմիկ Գուլակյան



# ԻՐԱՆԱԿԱՆ ԿԻՍԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

անցել է, իսկ հրաժեշտին հնչած «Կրակ...» հրամանն ու համազարկերը վաղուց լրել են, դեռ լսելի նրա խոսքերի արձագանքը, որ առավել քան արդիական է.

«...Ես ուզում եմ ընդօթել՝ այս ազգը, որը կկորցնի Դարաբաղը, կտապալվի լրիվ: Թո՞ւքը կկորցնի՝ ուրեմն թուրքը, Չա՞յը՝ ուրեմն Չայը: Դրա համար այստեղ շատ կարևոր հարցեր են լուծվում, սա միայն մի փոքր կտոր հոդի հարց չէ:»

**Գագիկ Գինույան  
«Մահապարտների» գումարտակի  
X կործանիչ ջոկատի անդամ**

Չայոց Մեծ եղենի հարցում Իրանն սկզբից և եթ ընթանումով է վերաբերվել իրանահայությանը: Ապրիլի 24-ն իրանահայերի համար եղել է և է ոչ աշխատանքային օր, սակայն մինչև անցյալ դարի 70-ական թթ. սկիզբը նշվել է գլխավորապես սգո և կրոնական արարողություններով: 1975 թ. Մեծ եղենի 60-րդ տարելիցի առթիվ, երբ առաջին անգամ փոքր է արվել նշել այդ օրը նաև ցույցերով ու երերով՝ դեպի Թուրքիայի դեսպանատուն, իրավապահ ուժերը ցրել են այն. իշխանություններն ընդհանրապես արգելել են այդ արնչությամբ բողոքի ցույցերը: Ըստ ամենայնի այդ քայլը պետք է մեկնարանել տվյալ ժամանակահատվածում Իրան-Թուրքիա առնվազն առերևույթ սերտ, բարեկամական փոխհարաբերություններով: Երկուսն էլ նույն ճամբարում էին ՍԵԼ-SO ռազմաքաղաքական և Շրջանային բարեկարգման համագործակցություն (RCD) տնտեսական դաշինքների անդամ: Մինչդեռ Իրանում հայական հեղափոխությունից հետո, իրանահայությունն ապրիլի 24-ն անարգել նշել է նաև տարաբնույթ բողոքի ցույցերով, որոնց որակական հատկանիշները դարձյալ որոշ չափով պայմանավորված են եղել իրանա-թուրքական փոխհարաբերություններով: Դրանք տեղի են ունեցել եղենի գործերի հիշտափական կառուցված հուշարձանի տարածքում, երբեմն նաև Թեհրանում՝ Թուրքիայի դեսպանության և ՍԱԿ-ի գրասենյակի առջև: Այսուհենդեռ, 2004 թ. նշյալ դրդապատճառներով ապրիլ 24-ի կապակցությամբ փողոցային երթերը և ցույցերը թեև չեն արգելվել, քայլ այնպիսի պայմանաներ էին առաջադրել, որոնք անհնարին դարձին դրանց իրականացումը: Ավելին, Ադրբեջանի և Թուրքիայի քարոզչության հետևանքով գրգռված մի խումբ ԻԻՀ ադրբեջանցիներ հարձակվել են հայ ցուցարարների վրա՝ փակ տարածքում:

Մեծ եղենի 90-րդ տարելիցի կապակցությամբ ներկայացնում ենք Չայաստանի հարեւան և բարեկան երկիր Իրանում եղենին վերաբերյալ առկա կիսապաշտոնական տեսակետները:

Օսմանյան կայսրությունն Արևմտյան Չայաստանում, ինչպես հայտնի է, հայերի ցեղասպանությունն սկսել է դեռևս սուլթան Աբրուլ Չամիդ II-ի գահակալության տարիներին: Այդ մասին վկայություններ կան «Կարք սուլթան Աբրուլ Չամիդի և Օսմանյան կայսրության իրավիճակը նոր օրոք» (Biography of Sultan Abdul Hamid and the Situation of the Ottoman Empire During His Reign) գրքում: Բնագիրը ֆրանսերեն է, և, ինչպես բովանդակությունից է պարզվում, հեղինակը ֆրանսիացի է, Աբրուլ Չամիդի ժամանակակիցը: «Պետք չէ, որ մենք՝ ֆրանսիացիներս, - գրել է նա, - այժմ մտածենք, թե օսմանցինե-

րը որքան վատ են վերաբերվել մեզ, ինչպես են գործել մեր դեմ, քանզի Սեդանի և Մեցի (Sedan, Metz) դեպքերից հետո, որոնցում Ֆրանսիան պարտություն է կրել, նրանք, թողնելով մեզ, կայել են Վիլիելմ Առաջինի (Պրուսիայի թագավոր և Գերմանիայի առաջին կայսրը - Է. Բ.) պոչից: Սակայն մենք մարդկայնորեն պետք է ի սրտե կարեկցենք Օսմանյահին և սիրով ու գորովով վերաբերվենք նրան» (էջ 38): Գրքի՝ մեզ անհայտ հեղինակն այս նվիրել է սուլթան Մուրադ V-ին՝ Աբրուլ Չամիդի եղբօրը, որն ընդամենք երեք ամիս է իշխել, ապա գահընկեց է արվել՝ հոգեկան հիվանդ լինելու պատճառաբանությամբ, որից հետո 1876 թ. օգոստոսի 31-ին Օսմանյան կայսրության գահակալ է դարձել Աբրուլ Չամիդ II-ը: Նա ևս հարկադրաբար է հետաքել զահից, 1909 թ.:

Գիրքն սկսվում է հետևյալ տողերով. «Գրվածքս ամենայն հարգանքով նվիրում եմ նորին կայսերական մեծություն սուլթան Մուրադ խան V-ին, ի հիշտափակ...., որպես բարի կամքի դրսնորում օսմանցիների նկատմամբ...» (էջ 1): Նեղինակը նաև համոզմունք է հայտնում, որ եթե Մուրադ V-րդը մնար զահին, օսմանյան մեծ ազգը չէր կրի այն վնասներն ու հարվածները, որոնք ներկայացվել են գրքում:

Աբրուլ Չամիդի արտաքինի, բնավորության ու խառնվածքի խիստ մանրակրկիտ նկարագրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը արքունիքին նոտ կանգնած մարդ է եղել, չփակ միհապետի հետ:

Գրքի նախաբանում նա նշում է, որ բնութագրել է սուլթանի անկայուն, հակասական բնավորությունը և դրանից քաղաքական երկու կարևոր հետևություն արել՝ ա) Օսմանյան պետությունը հյու հնազանդ է դարձել Գերմանիային, բ) իսլամական ուժն ու կարողությունը տարրալուծվել են երկրի ներսում և իսլամական այլ երկրներում: Նա ընդգծում է նաև, որ Աբրուլ Չամիդի սխալներից ու վրհպուներից շահել են երկու երկիր՝ Գերմանիան՝ Եվրոպայում ու Ասիայում, իսկ Անգլիան՝ Աֆրիկայում ու Արաբիայում:

«Կարք սուլթան Աբրուլ Չամիդի և Օսմանյան կայսրության իրավիճակը նոր օրոք» գիրքը պարսկերեն թրագմանել և 1895 թ. Ղաջարների հարստության միապետ Նասրեդդին շահին է նվիրել իրանցի հայտնի թարգմանիչ Մոհամմադ Չասան խան Եթեմադ-օլ-Սալթանեն, ձեռագիր, որի վրա կա նաև հիշյալ միհապետի մակագրությունը (հետագայում այն հանձնվել է նախ պետական, ապա ԻԻՀ ԱԳ նախարարության փաստաթղթերի արխիվ): 1998 թ. գիրքը մշակվել և խնճագրել է ԱԳ նախարարության Քաղաքական և միջազգային հետազոտությունների գրասենյակի Փաստաթղթերի հրատարակման վարչության տնօրեն Մոհամմադ Չասան Քավուսին՝ նույն գերատեսչության Փաստաթղթերի մշակումն ու հրատարակումը վերահսկող գերագույն խորհրդի աջակցությամբ, որի նախագահն է ԱԳ նախարար Քամալ Խարագին: Վերջինս, առաջարանում խիստ կարևորելով երկրի դեկավարի դերը նրա ճակատագրում, շեշտել է. «Այլ կերպ ասած ուստիմասիրելով այսօրինակ կենսագրությունները հասկանալի է դառնում, թե մի երկիր, հասարակության ճակատագրի տնօրինությունը խառնվածքը, անհատականությունը, նրա ընդունակության ու ուշիմության չափն ու խելամտությունը կարող են որոշիչ դեր ունենալ տվյալ երկրի, ազգի և հասա-

րակության երջանկության կամ դժբախտության ու մոլորության հարցում»:

Գրքի բավական ընդարձակ ներածությունում, որի հեղինակն է կազմող-խմբագիրը, համառոտակի ներկայացվում է Օսմանյան պետության պատմությունը՝ մինչ Մուստաֆա Աքարուրի՝ հշխանության «օլիմպոսին» հայտնվելը:

Քավուսին, անդրադառնալով հանրապետական թուրքիայի տարածքին, որն անվանում է Անատոլիա կամ Փոքր Ասիա (ՓԱ) գրում է, որ այն պատմական քաղաքակրությունների բնօրին է Եղել, որ մեր թվականությունից երկու հազարամյակ առաջ, դրան տիրելու նպատակով, տարածաշրջանի աշխարհակալները մշտապես պատերազմել են: Ս. թ. ա. II-րդ հազարամյակի ընթացքում ՓԱ-ի գգալի հատվածը հայտնվել է հիթիր (Hittit) ցեղերի գերիշխանության տակ (այդտեղ իշխել են մինչև մ. թ. ա. 1180 թ.):

Այնուհետև կարդում ենք, որ հիթիրների կայսրության անկումից հետո ՓԱ-ն բաժանվել է ասորիների և լիդիացիների միջև, իսկ մ. թ. ա. 7-րդ դարում ՓԱ-ի արևատյան հատվածը գրավել են հույները՝ գրեթե հարևան դաշնակության մեջ հրանդին: Հույներն այստեղ հիմնադրել են գլխավոր քաղաքները, այդ թվում՝ Բյուզանդիայի մայրաքաղաքն էր: Հռոմեացիները 196 թ. գրավեցին ՓԱ-ն, որը հետագայում՝ 395-1453 թթ. Բյուզանդական կայսրության մաս կազմեց: Այլ խոսքով՝ իրանցի գիտնականը, միանգամայն անտեսելով Պատմական Հայաստանի գոյությունը այդ տարածքում, որևէ ակնարկ չի արել այդ մասին, փաստ, որն այլ կերպ, քան պատմական ճշնարտության խեղաքյուրում, չես անվանի: Իսկ այդօրինակ խեղաքյուրումներն առավել կարևոր բնույթ են կրում, երբ դա անում է տվյալ երկրի ԱԳ ճախարարությանը կից հիմնարկությունը, իսկ դրա միտունը պայմանավորված է Թեհրան-Անկարա փոխառնչություններով՝ ի վեհական հայերի: Այդ փաստի խեղաքյուրման համար մեղքի առյուծի բաժինը մերն է. դրան նպաստել ենք մեր անտարբերությամբ, մեր լրությամբ: Հավելենք, որ այդ տեսակետը պահպանվում և կրկնվում է ողջ ներածությունում: Օրինակ՝ «... հայերը, որոնք ապրում էին Օսմանյան պետության հողի վրա...» (էջ 28):

Հեղինակը գրում է նաև 6-րդ դարում Միջին Ասիայում թուրքական ցեղերի երևան գալու և 14-րդ դարում Օսմանյան կայսրության ծևավորման մասին, ապա ամփոփ ներկայացնում օսմանյան սուլթաններին ու նրանց գործունեությունը: Խոսելով սուլթան Աբդուլազիզի մասին (Վերջին Աբդուլ Համիդի հորեղբայրն էր, քրիստոնյա հպատակների ապստամբություններին վերջ դնելու նպատակով մշակել և ընդունել է հարկադրված քարեփոխումների ծրագիր), նշում է, որ նա գահընկեց է արքել Միդիաք փաշայի գլխավորած հեղաշրջման հետևանքով: Նրան հաջորդել է սուլթան Մուլրադ V-ը: Սակայն ինչպես նշվել է, Վերջինս ևս հեռացվել է հշխանությունից, որից հետո գահը հանձնվել է նրա եղբարը Աբդուլ Համիդ II-ին: Քայլությին հանգամանորեն ներկայացնում է Վերջինին գահակալության տարիներին աշխարհում տեղի ունեցած իրադարձությունները՝ Եվրոպական պետությունների միջև առկա տարածայնությունները, Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց որդեգրած քաղաքականությունը, ինչպես նաև Աբդուլ Համիդի ներքին և արտաքին քաղաքականությունը:


«Աբդուլ Համիդի հշխանության օրոք երկրում տիրող

էր դարձել ահ ու սարսափի մթնոլորտուր: Միապետն ինքը կյանքի, ունեցվածքի կրոստյան և վիլայեթներում ապստամբությունների վախից երկրի ողջ հշխանությունը կենտրոնացրել էր իր ձեռքուն: Երկրի ողջ անցուդարձը լիովին վերահսկելու նպատակով ընդլայնել էր լրտեսական ու կաշառակերության համակարգերը, հաստատել քացարձակ բռնապետություն: Հշխանությունն արժանացել էր երկրի բնակչության ատելությանը, Օսմանյան պետությունն ավելացրեց էր կերպարը էր ին համընդհանուր վստահությունն ու անվտանգությունը:

Եվրոպական պետությունների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի միջև տարածայնությունների և Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց որդեգրած քաղաքականության առաջին զոհը հայ ժողովուրդն էր, որը տարիներ ի վեր ձգտում և սպասում էր անկախության: Սուլթան Աբդուլազիզը 1863 թ. նրանց սահմանափակ ազատություն էր շնորհել: Աբդուլ Համիդը ևս իր հշխանության սկզբում հայերին նշանակել էր պետական բազմաթիվ բարձր պաշտոնների, այնպես որ 1890 թ. արդեն հայերը մեծ հեղինակություն և ազդեցություն ունեին Օսմանյան պետությունուն, մանավանդ, որ Սամ Ստեֆանովի և Բեռլինի պայմանագրերն է սուլթանին պարտավորեցնում էին բարելավել հայերի վիճակը: Սա այն դեպքում, եթե Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան, առանձնահատուկ վերաբերմունք չունենալով հայերի նկատմամբ, պատրաստ էին հանուն սեփական քաղաքական շահերի ընդարձակել իրենց ազդեցության ոլորտները, ոտնահարել նրանց շահերը: Ահա թե ինչու Բեռլինի և Յասիի պայմանագրերից հետո Ռուսաստանը, իր ազդեցությունը Փոքր Ասիայում տարածելու և հայերին ռուսացնելու նպատակով, նրանց վրա խստ ճնշում էր գործադրություն: Սակայն, քանի որ հայերի ազգային զգացումները շատ ուժեղ էին, սկսեցին պայքարել նրանց դեմ քարոզչական լուրջ գործունեությամբ և գաղտնի հավաքներով: Ռուսաստանն էլ ավելի ուժեղացրեց հայերի ճնշումը: Մյուս կողմից, քանի որ վերջին չէր կարող իր նպատակներն իրականացնել հայերին հովանավորելու պատրավակով, ուստի գործեց օսմանյան պետությանը և խրախուսեց նրա հակահայկական գործունեությունը: Օսմանյան կայսրության հայերը, հույս ունենալով, որ Մեծ Բրիտանիան իրենց կիովանավորի, նպատականիվել էին ազգային շարժումները և այդ նպատակով ձեռնամուխ էին եղել ահարեւկչական գործողությունների: Իսկ Օսմանյան պետությունը, որը մինչ այդ լավ էր վերաբերվում հայերին, վերջիններին բնաճնշման ծրագիր մշակեց՝ վերացնելու համար Եվրոպական պետությունների միջամտության պատճաները Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, այդ ծրագրերն իրականացնելու նպատակով, օսմանյան բանակում ծառայող քրոներին հանձնարարել էր կենեքեթ, տանջել հայերին: Բացի այդ քարոզչական լուրջ աշխատանքով հասարակական կարծիքը նախապատրաստել էր հայերին ոչ ճաշացնելու, բնաճնշելու համար: 1894 թ. հոկտեմբերին արդեն Սաստնի, Բիթլիսի և Դիարբերիի հայերի եղենը իրականություն դարձավ: Եվրոպական երկրները բողոքեցին կատարվածի դեմ: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, ջարդերի պատասխանատվությունից խուսափելու նպատակով, համաձայնեց, որ Եվրոպական երկրներն ստեղծեն ջարդերին համաձայնեցին միջամտության պատճաները Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, այդ ծրագրերն իրականացնելու նպատակով, օսմանյան բանակում ծառայող քրոներին հանձնարարել էր կենեքեթ, տանջել հայերին: Բացի այդ քարոզչական լուրջ աշխատանքով հասարակական կարծիքը նախապատրաստել էր հայերին ոչ ճաշացնելու, բնաճնշելու համար: 1894 թ. հոկտեմբերին արդեն Սաստնի, Բիթլիսի և Դիարբերիի հայերը եղենը իրականություն դարձավ: Եվրոպական երկրները բողոքեցին կատարվածի դեմ: Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, ջարդերի պատասխանատվությունից խուսափելու նպատակով, համաձայնեց, որ Եվրոպական երկրներն ստեղծեն ջարդերին համաձայնեցին միջամտության պատճաները Օսմանյան կայսրության ներքին գործերին:



նը, ուստի Օսմանյան պետության ցանկությամբ այդ քուղու այնպէս էին ներկայացրել, որ իրեն թե հայերն իրենք են մեղավոր ջարդերի համար: Իսկ Անգլիան, Ռուսաստանի հետ Արևելյան հարցում նախկին տարածայն ուժությունների բորբոքումից խուսափելու նկատառությունվ, լրել է ջարդերի մասին: Այլ կերպ ասած՝ Արդուլ Յամիդ Ա-ի օրոք հայոց ջարդերի պատասխանատվությունը, ըստ Քավուսիի, Եվրոպական մեջ տերություններին է, մասնավորապես՝ Ռուսաստանինը (էջ 28-29):

1895 թ. ջարդերի համար Քավուսին կրկին մեծ մեղք է վերագրում Ռուսաստանին. «Անգլիայի վարչապետ Գլաստոնի գլխավորած կառավարության նոր ԱԳ նախարար Ռուսերին (Rosebery), շարունակելով իր նախորդի քաղաքականությունը, ջանքեր էր գործադրում, որպեսզի Միջերկրականում հավանական բախտումներում Ֆրանսիան չեղող մնա: Բայց և այնպէս Անգլիան չէր կարող նաև լիովին լրել հայերի դեմ քուլքերի գործադրած ճնշումների առնչությամբ, ուստի Ռուսերին առաջարկությամբ որոշել էր ինչ-որ գործողություններ սկսել նեղուցներում՝ ցանկանալով Օսմանյան կառավարությանը հարկադրել պաշտպանելու հայերի իրավունքները: Գերմանիան, որ ռուս-անգլիական պատերազմի սկիզբ էր համարում անգլիական ռազմանավերի մուտքը Սև ծով, նախապատրաստվում էր օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից: Սակայն Ֆրանսիան դեմ էր զարգացումների այդօրինակ ընթացքին: Դա էր պատճառը, որ Եվրոպական տերություններին առաջարկել էր, որ վերջիններս Արդուլ Յամիդից պահանջեն հայերի նկատմամբ որոշ բարեփոխումներ իրականացնել:

1895 թ. մայիսի 16-ին Եվրոպական տերությունները համաձայնության եկան այդ հարցի շուրջ, սակայն Արդուլ Յամիդ Ա-ը, քաջատեղյակ Եվրոպացիների միջև առկա տարածայնություններին, հակառակ նրանց առաջարկությունների խրախուսուն էր հայերի բնաջնությունը, որի հետևածքով 1895 թ. հոկտեմբերի 16-ին և 18-ին սկսվեցին Կոստանդնուպոլիսի, Տրապիզոնի ու Դիարբեքիրի ջարդերը և շարունակվեցին մինչև նոյեմբեր: Ստեղծված իրավիճակում Եվրոպական պետությունները, որոնք իրենց երկրների հասարակական կարծիքը գրգիռ էր իր օւնանակ էր 18-ին 18 ռազմանավ էր նույնական պահանջմանը նաև ՓԱ-ում, հայերի նկատմամբ Օսմանյան պետության որդեգրած քաղաքականության մեջ որևէ փոփոխություն տեղի չունեցավ, ջարդերը շարունակվեցին» (էջ 30):

Քավուսին շեշտում է, որ Անգլիան ի վերջո Եվրոպական պետություններին առաջարկել էր օսմանցիների դեմ գործել համատեղ և վերջիններիս հարկադրել, որ հարգեն հայերի իրավունքները: Սակայն Ռուսաստանը դա չէր ողջունում, մյուսներն էլ տարբեր դրդապատճառներով լուրջ չեն վերաբերել առաջարկին, արդյունքում հայոց շահերը զոհ դարձան Եվրոպացիների տարածայնություններին:

Դեղինակը շարունակում է. «1896 թ., երբ հայերն զգացին, որ իրենց վիճակն առավել ծանրացել է, «Դրոշակ» ապստամբ խմբերն սկսեցին հարձակվել Օսմանյան բանակի վրա: Այլ քայլը պատճառ դարձավ, որ հայերի դեմ Արդուլ Յամիդ Ա-ի գործողությունները նոր թափ ստանան: 1896 թ. օգոստոսի Վերջին վերսկսվեցին հայկական ջարդերը: Անգլիայի վարչապետ Լորդ Սոլիսբերին (Salisbury) օսմանցիներից պահանջեց լուրջ քայլեր կատարել այդ հոգումներին վերջ տալու համար, իսկ Ֆրանսիան միջազգային նավատորմին տեղակայել Դարդանելի նեղուցում: Ուստինք դեմ էր նեղուցներում որևէ այլ երկրի ներթափանցմանը և հայտարարել էր ին, որ այլապես կզրակեն նեղուցներին հարող տարածքները և Օդեսայում ու Սևաստոպոլում ռազմածովային ուժերը մարտական վիճակի էր բերվել: Ի հետևանս քաղաքական իրադարձությունների այդօրինակ զարգացումների հայերի շահերն այս անգամ և զոհաբերվեցին Եվրոպական երկրների միջև խաղաղության պահպանմանը: Սակայն Արդուլ Յամիդը խոստացավ բարեփոխումների ծրագիրը տարածել նաև ՓԱ-ում, հայկական վիլայեթներում» (էջ 31):

Ծեշտելով, որ Արդուլ Յամիդ Ա-ի ոչ ճիշտ քաղաքականությունն անկման հասցեց Օսմանյան կայսրությունը, Քավուսին ներկայացնում է նաև երիտրուրքերին, որոնք սուլթանին հարկադրեցին հեռանալ զահից: Ապա գորում է թուրքերի՝ 1912-13 թթ.՝ Եվրոպայից դուրս շարութվելու մասին: Քավուսին խոսում է նաև Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունում Գերմանիայի հզոր ազդեցության և 1914 թ. օգոստոսին նրանց միջև կնքված գաղտնի պայմանագրի մասին, որով ձևադրվեց օսմանա-գերմանական ռազմաքաղաքական դաշինքը: Ըստ նշյալ պայմանագրի՝ օսմանցիներին պետք է վերադարձվեն Կիպրոսը, Եգիպտոսը, Լիբիան, Թունիսը, Ալժիրը և նրանց հանձնվեն Ռուսաստանի իսլամադավան շրջանները՝ կովկասն ու Միջին Ասիան:

Ներածության հեղինակն այնուհետև ամփոփ ներկայացնում է պատերազմի ընթացքը, դրական երանգով՝ Արաբուրքի իշխանության գալը և Թուրքիայի Յանրապետության շեմանական մուտքերում:

## 12

❖ Ապրիլի 19-ին Արգենտինայի խորհրդարանը կազմակերպել է հուշ-երեկոն և ցուցահանդես՝ «Հայոց ցեղասպանությունը» խորագրով, իսկ Բոււենոս-Այրեսի հոչակավոր «Կլրն» օպերային թատրոնում տեղի է ունեցել:

❖ Ապրիլի 20-ին Վաշինգտոնում ԱՄՆ կոնգրեսի «Քեննոն» մասնաշենքի մեջ դահլիճում, տեղի է ունեցել հիշատակի երեկոն նվիրված Հայոց Սեծ երեսն 90-րդ տարեկանին: Ելույթ են ունեցել շուրջ 25 կոնգրեսականներ, ներայալ 2004 թ. նախագահական ընտրություններում նախագահի թեկնածու Զոն Բերրին, նաև 1915 թ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Քենրի Սորգենթառի թոռը՝ Քենրի Սորգե-

## թառ 3-րդը:

❖ Ապրիլի 20-ին Յառնի Ամերիկյան համալսարանում տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանությունը՝ 90 տարի անց» խորագրով համաժողովը:

❖ Ապրիլի 21-ին «Արմենիա-Մարիոր» հյուրանոցում սկսվել է «Ծանրագույն հանցանք, ծանրագույն մարտահրավեր» մարդկային իրավունքներն ու ցեղասպանությունը» միջազգային երկօրյա գիտաժողովը, որին մասնակցել են 50 մասնագետներ երկրներից:

❖ Ապրիլի 22-ին Բոււենոս-Այրեսի «Ազգային թատրոնի» ցուցարանում բացվել է «Հայեր Ռումինիայում. վկայություններ և ճակատագրեր» ցուցահանդեսը:

❖ Ապրիլի 23-ին ժամը 20:30-ին ՀՅԴ «Նիկոլ Արբայան» միության նա-

խաձեռնությամբ Յանրապետության հրապարակի մեկնարկել է զահերով երթը՝ դեպի Ծիծեռնակաբերդ:

1500 զահակիներին հետևել է շուրջ 10 հազար երիտասարդ՝ վաշվող մոմերով:

Մայրաքաղաքի բնակչությունը միացել է այդ ակցիային՝ յուրաքանչյուրն իր բնակարանի լուսամւտի գոգին վառելով մեկական մոմ:


Արարողության պատճեն էր քաղաքական Արագուստի և Երգիչ Դեմքի (ԱՄՆ) «Արման» օրիներգն իր անմարդ կուսակի մոտ՝ աշխարհական զահերության մասին:

ԱՄՆ գումարության պատճեն էր կայսերական Արագուստի և Երգիչ Դեմքի (ԱՄՆ) «Արման» օրիներգն իր անմարդ կուսակի մոտ՝ աշխարհական զահերության մասին:

«Արման» օրիներգն իր անմարդ կուսակի մոտ՝ աշխարհական զահերության մասին:

## «ԱՔՍՈՐԻ ՕՐԵՆՔԸ ԷԹԱԿ ԶՏՈՒ Ե»

«Աքսորի հրահանգի թիրախը Կայսրության բոլոր հայ հպատակներն էին: 1915 թվականը սահմանափակած չէ (Թուրքիայի - բարգմանից) արևելքով: Եթե անզամ չլինեին հայերի սպանությունները, նրանց աքսորն ինքնին մտնում է «ցեղասպանություն» հասկացության մեջ»:



Թարգմանաբար  
ներկայացնում ենք  
բուրգական «Միլիեր»  
(Թուրքիա) օրաթերթի  
2005 թ. մարտի 7-ի հա-  
մարում հրապարակ-  
ված Դերյա Սազակի  
գրույցը՝ պատճառն  
Հայի Բերքայի հետ:

Պրոֆ. Բերքայը ծնվել է 1947 թ.: Բարձրագույն կրթու-  
թյունն ստացել է 1960-ական թթ. Յեյլ համալսարանում  
(ԱՄՆ): Թեկնածուական աստենախոսությունը պաշտպանել է  
«Քիրմինգհամ» համալսարանում (Անգլիա): Դասախոսել է  
Ամերիկայի, Միջին արևելյան տեխնիկական (ՕԻՏՕՒ) և  
«Բո-  
ղոքիչի» համալսարաններում: Այժմ դասավանդում է  
Ստոմուլի «Սարամզի» համալսարանի արվեստի և հումա-  
նիտար գիտությունների ֆակուլտետում:

Ստուգյան հիմնադրումը: Սակայն 1915 թ. Յայոց եղենին  
մասին քավուսին բացարձակապես լուսն է և ընդամենը  
մեկ նախադասությամբ նշում, որ կայսրության հայերն ու  
քրդերն ապստամբել էին: Սա ևս չի խոսում հայերի օգ-  
տին, քանզի հակառակ դեպքում կիարվածեր բուրգ-ի-  
րանական փոխհարաբերություններին: Այլ կերպ ասած  
մշտապես բոլորն իրավացիորեն գրում և քաղաքակա-  
նություն են վարում հօգուտ սեփական շահերի, ասել է  
թե՝ հայերը սեփական ուժից զատ և ոչ մեկի վրա չպետք  
է հույս դնեն:

### Եմնա Բեգիջանյան

**- Ինչպե՞ս եք զնահատում Օսմանյան վերջին շրջա-  
մի՝ 1915 թ. դեպքերը իրու պատճառաբան: Ինչպիսի՞ն էր  
Օսմանյան կայսրության «հոգեվիճակը» Առաջին հա-  
մաշխարհային պատերազմի նախօրեին:**



Բավական անհանգիստ՝ արտաքին  
աշխարհի նկատմամբ: 1912-13 թթ. Բալ-  
կանյան պատերազմները շրջադարձային  
եղան իրեն հալածված և զոհ համարող,  
խիստ ծայրահեղ բուրգ ազգայնականու-  
թյուն ձևավորելու գործում: Մինչ հունա-  
կան և բուլղարական բանակներն առաջա-  
նում էին, փոքրամասնությունները Բերա-  
յում տոնում էին (նրանց - բարգմանից)  
հաղթանակը: Առաջին համաշխարհային  
պատերազմը չպայթած սկսվեց հունաս-  
տանցիների և հույների էթնիկ գտումը: Իր  
հուշերում այս մասին պատճում է Օսման-  
յան խորհրդարանի նախագահ Հայի Սեն-  
թեշեն:

**- Բալկանյան պատերազմում միջոց-  
ներ են ծերնարկվել ընդեմ օսմանցիներին  
դավաճանողների...**

- Օրինակ՝ Թուրքիայի հույների գտումը: Հույներին  
անհանգստացնելու հրահանգի շրջանակներում «Կազ-  
մակերպության կառույցի» (Թեշքիլաթ-ը մահուսա-  
հատուկ կազմակերպություն) միջոցով շարժում է սկս-  
վում: Հայի Մենթեշեն իր հուշերում գրում է, թե մոտ 100  
հազար հույն, առանց քիրն անզամ արյունոտելու, տե-  
ղափոխվել է Հույնը՝ նաև հզմիրում (Զնյուռ-  
նիա): Կիսաբաց, կիսաբարում քաղաքականությամբ եր-  
թիկ գտում է կատարվել: Այս դեպքերը հայկական կոտո-  
րածների անզեն նախափորձերն էին: Չեմ ասում, թե հայ-  
կական տեղահանությունը ծրագրվեց այդ ժամանակ,  
բայց ի վերջո նման փորձառություն արդեն կար:

1912 թ. Ստամբուլի անկան վտանգ առաջացավ:  
Ենվեր փաշան այնպիսի կացության մեջ էր հայտնվել, որ  
պատրաստվում էր հրահանգել Ռազմական նախարա-  
րությունը տեղափոխվել (Էվակուացնել) Անատոլիա: Առ-  
վագն հարկավոր էր Անատոլիան մաքրել հավանական  
դավաճան տարրերից ու անվտանգ դարձնել: Աքսորի  
որոշումը կայացվել է այսպիսի հոգեվիճակում:

**- Ո՞վ է արձակել հայերի աքսորի հրամանը: Ենվեր  
փաշա՞ն...**

- Ըստ իւ Թալեաթը շատ ավելի կարևոր դեմք է, քան  
Ենվերը: Իբրիհատականների հիմնական ուղեղն էր: Նա-  
պուենի շրջանում կար գաղտնի ոստիկանության մի  
պետ՝ Ֆուշե: Թալեաթը փոքր-ինչ նման է նրան: Անեն ին-  
չի նայում էր «պետական ինաստոնության» պրիզմայով:  
Թալեաթը Ենվերին և Զեմալին տրամադրում է ընդդեմ  
հայերի: Յայերն էլ իրենց հաշվարկներում մեծ սխալ են  
բույլ տալիս: Ասում են. «Ուշադրություն չդարձնենք,  
սրանք «բլեֆ» են»:

Աքսորի հրամանի թիրախը կայսրության բոլոր հայ  
հպատակներն էին՝ միմիայն իրենց ազգային պատկանե-  
լության պատճառով: Այսինքն՝ աքսորի օրենքը չէր սահ-  
մանում, թե դատարկելու ենք միայն Արևելյան Անա-  
տոլիայի՝ ռազմական գործողությունների շրջաններով:  
Աքսորի օրենքը նախ և առաջ էրնիկ գտում էր:

**- Ինչպե՞ս է իրագործվում օրենքը:**

- Պետության օրինական մէխանիզմի միջոցով, ան-  
միջապես ներքին գործերի նախարարությունից ուղարկ-  
ված իրահանգներով, որոնցում ասվում է. «Անհապա-  
համախմբե՛ք ձեր շրջանի հայերին», «Շարասյուներով  
ուղարկե՛ք դեպի հարավ-արևելք, այնտեղից՝ Սիրիայի,  
Իրաքի որոշ քաղաքներ, որտեղ և կվերաբնակվեն»: Օրենքը  
սահմանափակված չէր Արևելյան նահանգնե-  
րով: Տեղահանումներ եղան հզմիրիկ (Սիկիա), հզմիրից,  
Չոլուկից: Աքսորվում էին, որովհետև հայ էին: Եթե ան-  
գամ չլինեին հայերի սպանությունները, նրանց աքսորն  
այսօր ինքնին մտնում է «ցեղասպանություն» հասկա-  
ցության մեջ: Չաետք է կարծենք, թե օսմանյան բյուրոկ-  
րատիան անպայման հետևում էր իբրիհատական «սոցի-  
ալ դարվինիզմին»: Դիմադրողներ եղել են:

Հասմուն ենք հարցի ամենամուք կողմին: Այսօր ավել-  
ի պարզ հասկանում ենք, որ, բացի պաշտոնական իրա-

հանգներից, կան երկրորդական և գաղտնի այլ հրահանգներ:

- **Ո՞Վ է արձակել, գաղտնի հրահանգները: «Թեշքիլար-ը մահսուսա»»-ն:**

- Այն ժամանակվա «դերին դևլեթը»:<sup>5</sup> Իբրիհատականներն ունեցել են կիսառազմական զինյալ գաղտնի թև՝ յարուպշենիներ, բահաեդինշաքիներ, դոկտոր ռեշիդներ և նմաններ... «Թեշքիլար-ը մահսուսա»-ում նաև այսպիսի մարդիկ կային: Քենալ Թահիրը «Գուրդ քանունու» (<«Գայլի օրենքը») վեպում պատմում է, որ «Թեշքիլար-ը մահսուսա»-ի ֆիդայիները մտադրություն են ունեցել սպանել «Սարը փաշային», այսինքն՝ Սուստափա Քենալին:

- **«Մյուսի»՝ պատմությունը գրելիս օգտագործվում են գրեթե միայն թուրքական աղյուրներ...**

- Պաշտոնական տեսակետը հետևյալն է. «Դժբախտաբար սովոր են մահացել»: Ի՞նչ պատերազմ է եղել հայերի դեմ: Առաջին կոտորածները ազդանշաններ էին: Տեղական վատագույն տարրերին հասկացնում էին, թե հայերի «որսը ազատ է»: Եվ բարձրանում է կոտորածների երկրորդ ածանցյալ ալիքը: Քերեն ապացույցներ...

- **Ներքին գործերի նախարար Թալեարի հեռագիրը...**

- Այո՛: Կարդում են Թալեար փաշայի Տիգրանակերտի վալիին (կուսակալին) ուղարկած 1915 թ. հունիսի 29-ի (հուլիսի 12) հեռագիրը: Նրան տեղեկացրել են, որ Տիգրանակերտից տարագոված հայ և քրիստոնյա մյուս բնակչությունից ոմանց գիշերով հեռացրել են քաղաքից և սպանել, ուստի վախենում են, որ շրջանի նուսուլման ժողովուրդը զանգվածաբար կոտորող քրիստոնյաներին: Թալեարը գորչացնում է Տիգրանակերտի վալիին, որ «հայերի նկատմամբ կիրավող միջոցները երբեւ չօգտագործվեն մյուս քրիստոնյաների դեմ»: Ի՞նչ նկատի ունի Թալեարը «միջոցներ» ասելով՝ աքսո՞րը, թե՝ կոտորածը: Չի ասում:

- **Հնարավոր չէ՝ հեռագիրն այլ կերպ կարող է:**

- Ենթադրենք՝ Թալեարը ցանկանում էր կանխել բոլոր կոտորածները և շարունակել հայերի աքսորը՝ առանց արյուն հեղելու: Ի՞նչ պետք է ասեր... իսկույն կանխել բոլոր կոտորածները: Թալեարը նման բան չի ասել: Բայց ենթատեքսում Տիգրանակերտի վալիին հասկացրել է. «Ձեռք մի՛ տվեք մյուս քրիստոնյաներին, շարունակե՛ք հայերին վերաբերվել ձեր իմացածի պես»: Կան նաև գաղտնի հրահանգներ: Ասում են, որ պետությունը հայ գաղթականներին պահակախմբեր տրամադրեց: Եթե զինվորական պաշտպանությամբ հանդերձ հարձակում եղել է, ապա որտե՞ղ են այդ բախումների մասին տվյալները: Թող ինձ մի պաշտոնական գրություն ցույց տան Յուսուփ Հալաչօղլուն (Թուրքական պատության ընկերակցության / ԹՊԸ նախագահ), թող ցույց տան սպանների գեկուցմերը:

- **Ինչպե՞ս փակվեց հայկական թրամադրարը՝ հանրապետության հիմնադրումից հետո:**

- Բոլորն էլ հասկանում են դեպքի ահավորությունը: Անտանի պետություններն ենվերի, Թալեարի և Զենալի կառավարությունը 1915-16 թթ. Ինչպես գոյացնելու «պատերազմի հանցագործ»: «Սիսար-ի Սիլլի»-ն ունի հայկական կոտորածների պատասխանատուններին վերաբերող հավելված՝ «Ձեզալանդընա սեղոլ է շեմսի» (<«Պատժի համաձայնագիր»)... Քենալական դեկավարությունը, ճանապարհ ընկնելիս, սկզբում նման խոստումներ էր տալիս: Մուստափա Քենալին վերաքրիստոնացնելու համարի էր և ընթառությունը: Պարզորոշ երևում էր նրա և ենվերի փոխադարձ հակակրանքը: Ինչպես Քենալ Թահիրն է գրում, հավանական է, որ մտադրություն է եղել Մուստափա Քենալին վերացնելու: Չնայած սրան «Իբրիհատ վերաքրիստոնացները»-ն Անաստոլիայի Ազգային պայքարի առաջնորդ նշանակելիս՝ որոշում կայացրեց հօգուտ Մուստափա Քենալին համարությունը էր պատճենագործությունը և պատճենագործության համարը:

Փա Քենալի: Եթե անգամ (<«Իբրիհատ վերաքրիստոնացները»-ն) նրան համարում էր «ավանդապահ», ինչո՞ւ որոշում կայացրեց նրա օգտին: Անհերթելի էին Մուստափա Քենալի շնորհները՝ պատերազմի հերոս էր, ուներ հիանալի խաղաղնահանությունը, հարգանքը էր վայելում: Նրա ձեռքերը «մաքրու» էին. չէր խառնվել հայկական հարցին (Բերքարյ հավաքար նկատի ունի այն փաստը, որ մինչև Առաջին աշխարհամարտ ավարտը Քենալը չի մասնակցել հայերի կոտորածներին - խմբ.):

Մուստափա Քենալի Անատոլիա ուղարկվելու, Ազգային պայքարի ղեկավարությունը ստանձնելու և «Իբրիհատ վերաքրիստոնացները»-ի գաղտնի իշխանության միաձանության գործում, հայկական հարցը ևս անուղղակի ագնեցություն ուներ: Սա ասում եմ որպես պատմաբան: Քենալը շատ էր ջանում, որ 1915 թ. հայկական աղետը ստվեր չէր զարգացնել Ազգային պայքարի վրա: Նա չունի հայերի արսունությունը ու ոչ մի հայտարարությունը:

- **1915 թ. հայկական դեպքերի ժամանակ արձակվե՞լ են քրդերին ուղղված նման հրահանգներ: Ինչո՞ւ միայն հայերն են աքսորվում:**

- Այն ժամանակ դեռ քուրդ ազգայնականություն չկար: Դայերն Անատոլիայի միակ և մեծարիվ քրիստոնյա բնակչությունն էին: Դայերի կեսն ապրում էր Արևելյան Անատոլիայում: Դայ ազգայնականությունը (<Դաշնակցությունը) լուրջ հարց էր: Ինչպես անցյալում օսմանցիները բոլցարների դեմ օգտագործեցին պանաքներին, այնպես էլ հայկական խլրումների դեմ՝ քրդերին: Զայտնի են «համինիե» գնդերը: Սրանց հետևից գալիս էին քրդական ցեղախմբերը: Թուրք ազգայնականներն իրենց ասույթներում ժամանակ առ ժամանակ կրնում էին. «Սենք չսպանեցինք, քրդերն սպանեցին»: Քրդերն օսմանցիների հրամանն էին կատարում:

- **Զեր ենթադրությունները՝ մահացած հայերի քամակի նախ:**

- Դարգարժան դիվանագետ Քյամուրան Գյուրունի գրած կիսապաշտոնական «Էրմենի դրսյասը» (<«Հայկական թրամադրար») գրում ասվում է, թե 1915-16 թթ., դժբախտաբար, մահացել է 400-450 հազար հայ: Աշխարհի առաջնակարգ հանրագործարանային աղբյուրները նշում են նվազագույնը 600 հազար: Ազգերի լիգան ունեցել է Նախսենյան հանձնաժողովը (Գաղթականների հանձնաժողով), որտեղ խոսքը 800 հազար մահացածի մասին է: Դայ սպյուտքի հետազոտողները նահացածների թիվը հայտարարում են 1 մլն:

- **Դայերը ոչ մի մեղք չունեի՞ն:**

- Դայերն ունեին երկու ազգայնական կազմակերպություն՝ Դաշնակցականներ և Դաշնակցություններ: Դաշնակցությունն ավելի աջակողմյան էր: Արևելյան շրջաններում ցարական Ուլսաստանի հովանավորությամբ դուրս են գալիս օսմանցիների դեմ: Թուրքական պաշտոնական շրջանակներու, վերին աստիճանի չափազանցելով, զանացին որպես իրողություն ներկայացնել նրանց անբաստանությունները: Հայերին մեղադրություն էին 500 հազար մուսուլման թուրքերի սպանության, հայ ազգայնական կոմիտեների՝ էրնիկ զուման պատերազմի, իրենց շրջանները թուրք-մուսուլման գյուղերից մաքրելու, ռուսական բանակի հետ համագործակցության համար: Այդիսի բան չկա՞:

- **Ի՞նչ կարելի է ասել այսօր:**

- Թուրքիայի Հանրապետությունը չի կարող համարվել 1915 թ. դեպքերի պա-



# Ա Պ Ր Ի Լ Ի 24

## (ՀԵՂԱԾԵՑ ՇԵԿՐ» ԴՐՅ» • ԾՅ ՍՎ 1 » ՆԸ ՍՎ » ԵԱԾՄԱԱ)

տասխանատու: Վարչապետը կամ ԱԳ նախարարը կարող են ասել հետևյալը. «Բոլոր ազգ-պետությունները ձևավորվելիս ունենում են դաշը և նուր էջեր: «Իբրահատ վե թերաքքի»-ի կառավարությունը օսմանյան ժողովրդի մի հատվածի դեմ ընդունել է արսորի որոշում, որի իրագործման ժամանակ մահացել է նի քանի հարյուր հազար մարդ: Ցավակցում ենք այս պատմական դեպքի համար: Մնացյալը միայն պատմաբանների ազատ երկխոսությունն է և սերունդների հաշտեցումը՝ հաշվի առնելով այս իրողությունը»:

33

Ես ուզում եմ հարցնել այնպես, ինչպես մինչ այժմ ծեղանից ոչ ոք չի հարցրել, նույնիսկ՝ ինքների ծեղ, թեկուզ՝ մտովի:

Ո՞վ է պատասխանատու, ո՞վ է մեղավոր Հայոց ցեղասպանության համար:

Մեծանանությունը կապատասխանի՝ իբրիհատական Թուրքիան, քչերը կասեն՝ կայզերական Գերմանիան, որի հովանու տակ Թուրքիան կատարեց դարի ոճագործությունը, ոմանք՝ քրիստոնյա Եվրոպան, որն աչք փակեց և դրանով իսկ թույլ տվեց իրադարձությունները զարգանան նեզ ոչ ձեռնուու ընթացքու:

Բոլորը՝ բացի մեզանից:

Մեր դժբախտությունների համար մեղավոր են ոչ թե բոլոր՝ բացի մեզանից, այլ նախ և առաջ՝ մենք: Մինչ այժմ երկու առաքինություն ենք ունեցել՝ մեր դժբախտությունները վերագրել արտաքին պայմանների և փոկությունը հուսալ արտաքին ուժերից: Աղետալի ինքնաժնուում, որ մեզ հոգեբանութեն այնքան անարժեք է դարձել, որ անգամ մեր դժբախտության մեզ մերժ դրույթ որոշ բաժին էլ մեզ տալը զլանում ենք: Անեն ինչ լինում է, գուցե մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզանից:

Դարասկզբին, հասկանանք այդ, մեզ պատժողը թուրքը էր, այլ՝ մեր տկարությունը թուրքի միջոցով: Որտեղ հայը կովեց, այնտեղ եղավ հայրանակ կամ պարտություն, բայց ոչ եղեն: Թշնամին ուներ մեզ բնաշնչելու վճիռ, մենք չունենինք ինքնապաշտպանության ծրագիր և ինքնապաշտպանուակ գենք:

Ինքնապաշտպանություն՝ ահա՝ թե ինչ էր թելադրում ժամանակն ու պրոգրեսը: Չո՞րկ է նի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից, նշանակում է նա գուրկ է մենա առաքինությունից, գուրկ գոյության բարոյական իրավունքից:

Ինքնապաշտպանություն՝ դա միակն է արվեստներից, որի թերությունները գրչի, վրձնի, մուրճի փոխարեն սրբադրում է թշնամու արյունու սուրը:

Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդը պատժվում են մահվամբ: Ինքնապաշտպանությունը ոչ թե բնական իրավունքն է յուրաքանչյուր ժողովորդի, այլև պարտականությունը:

Իրավունքը ուժի հասկացողությունն է և ոչ տրամաբանական:

Դատապարտված է մի ժողովուրդ, եթե նա իրավունքը զիարերուում է իր հանցավոր հանգստին և ոչ ընդհակառակը:

Եվ իրավունքը միայն քրտինքով չէ, որ վաստակվում է, այլ նախ և առաջ՝ արյունով: Թուլությունը չէ, որ կոչված է սնուցանելու իրավունքը, այլ ուժը և, իհարկե, ոգու զորեղությունը: Ամեն ոք իրավասու է անել այն ամենը, ինչի համար ի զորու է պատասխանատու լինել:

Ի վերջու ուժն է ծնում իրավունք:

Հաղորդ է ուժեղը և ոչ արդարը: Վայ թույլերին:

Եղին այնքան ուժեղ, խատում է պատմությունը, որ թշ-

նամիդ չիանդանի հարձակվելու: Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ:

Եղիր ուժեղ և ուժիդ ապացույցը տալու համար ցույց տուր երկու բան, արաջինը, որ գիտես մեռնել գիտակորեն՝ կովում, գրոժուն և հիմաստակ մահով, և որ գիտես մեռցնել:

Հարձակվում է նա, ով իրեն ուժեղ և պատրաստ է գոյն հարձակվելու լավագույն պաշտպանողականը համարելով նախահարձակվականը:

Հարձակվում է նա, ով իր դիմաց թուլությունն է տեսնուու:

Եվ պատերազմը գախ է հակառակ մեր ցանկության,

որովհետև հակամարտության օրենքն է կառավարում աշխարհը: Մենք պարտվեցինք, և մեր պարտությունները հոգեբանական էին. պարտվեցինք ոչ թե նրա համար, որ թվական ու տեսնակապես թույլ էինք, տկար, այլ որովհետև այդպիսին էինք հոգեպես:

Հաղթանակում կամ պարտվում է նախուու գիտն, ապա հետո՝ նյութեղեն զենքը:

Մեր դժբախտությունների համար պատասխանատու ենք ազգովի, բայց պատասխանատվության առյուծի բաժինը մտավորականության է:

Ժողովորդի ճակատագրի դարբինը նրա մտավորականությունն է: Միևնույն ժողովուրդը՝ նայած իր դեկավարմերին, կարող է և հրաշագործություններ կատարել, և խայտառակորեն ծնկի գալ հակառակորդի առաջ:

Ցավոք, բարձունքի վրա չգտնվեց մեր մտավորականությունը: Հկարողացավ պայքարի ոգի ներշնչել ժողովորդին, չկարողացավ վճռական մենակի հոգեբանություն ներարկել, այլ ընդհակառակը ժողովորդին, փիկությունը արտաքին ուժերից հուսալու ճանապարհին կանգնեցրեց, ինչով և ներսակից դարձավ ազգային ողբերգությանը՝ շեղելով ժողովորդի ուշադրությունը իր փրկության միակ զենքից՝ ինքնապաշտպանությունից:

Զկարողացան նաև հայրենասիրություն և հայրենապաշտություն ավելացնել ժողովորդի հոգու ծալքերում: Հայրենասիրությանը են ապրում ազգերը և կործանվում նրա պակասից: Ազգերն ապրում են, քանի դեռ նրանց մեջ ապրում երկու բան՝ պայքարի ինաստում բնագործ և զոհաբերվելու ներքին հոգաբանությունը: Հայրենասիրությամբ լցված ազգերը դեպքերի խաղալիքը չեն, այլ նրանց հրամայողը:

Հիրավի արդարացի է մտավորականությունը զարդարական ստամտավորականություն: Որովհետև չկարողացավ հայ մտավորականությունը կատարել իր վրա դրված պատճական առաքելությունը, այլ սերմանեց մեր մեջ լավանությունը և քաղաքական նուրացիկությունը, և մեր դրոշի վրա հայրականմեր զրանցելու փոխարեն մեր թշվառությունն է դժբախտությունը գրանցեցին:

Եվ զոհերից բոլորը չեն, որ անմեր նահատակներ են: Վատություն էր վայել, երբ զորեղ, հարվածող բազուկներ ունենին, բայց թույլական ոգի: Եվ ոչ միայն կորցրեցինք մեր հայրենին, այլև շատերն ընկան պատվազուրկ և անարդ մահով:

Անմեր են միայն նրանք, որոնք ընկան մարտմնելին, գենքը ձեռքին և չանազված, և ընդունեցին մահը որպես վեհագույն պարզի հանում հայրենյաց:

Այժմ ցեղասպանությունը ճանաչելու խնդրանքով աշխարհին դիմելու փոխարեն պետք է կրեժմնորությամբ լցված զոհեղանաբ ամեն օր, ամեն ժամ, որպեսզի մաքրենք մեր որոշի պղծվածությունը և մեր ազգին հասցված անպատվությունը:

Այդ, մեր ազգի խայտառակությունն է ցեղասպանությունը, և ոչ ամբողջ աշխարհին ներկայացվելիք պահանջատիրական իրավունք: Ժամն է, որ այսուհետ մեզ իիշն ոչ որպես դարասկզբին զրանցությունը և խոշտանգված և անարգված, այլ դարավերջին հայրաքանակած, զրեղացած և փառքով պասակված մի ազգ:



**ՄԵԼՔ ՕՏԱՐ ՄԱՍՈՒՆԵՐ**

# ԱՐԱԲԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ

Արար ժողովուրդը մշտապես արժանին է մասուցել հայ ազգին: Դարկ է նշել Յայոց ցեղասպանության տարիներին նրանց ցուցաբերած օգնությունը թուրքական յարադանից մազապուրծ, տարագիր հայերին:

Արար հետազոտողները XXI դարի սկզբում շարունակել են նախորդ դարում դրսուրպած իրենց եղբայրական մոտեցումը հայ ազգի նկատմամբ՝ ուսումնասիրելով և աշխարհին ներկայացնելով հայոց վերաբերյալ պատմական ծշմարտությունը, մերկացնելով Յայոց ցեղասպանությունն իրականացրած թուրք բարբարուներին, վեր հանելով հայոց նպաստը արարական երկրների առաջընթացին և այլն:

Անդրադառնամբ վերջին տարիներին արար հեղինակների լույս ընծայած՝ հայոց մասին նյութերով ինը իրատարակությունների:

- Կահիրենում ՈԱԿ պաշտոնաթերթ «Արև» օրաթերթի համանուն արաբերեն հավելված-ամսագրի 2002 թ. հուլիսի համարից տեղեկանում ենք Կահիրենում նույն թվականին լույս տեսած «Պատմական ուսումնասիրությունների եգիպտական միտուրյան» անդամ, Կահիրենի «Գրքերի և ազգային փաստաթրերի» հրատարակչության «Արդի Եգիպտոս» պարբերականի տնօրեն, սույն հավելվածի գլխավոր խմբագիր Մուհամմեդ Ռիֆաաքը ալ-Իմամի «Յայդատն Օսմանյան կայսրությունում 1878-1923 թթ.» աշխատության մասին: Այս ուսումնասիրությամբ, որը հեղինակի դոկտորական աստենախոսությունն է, եգիպտացի արաբին առաջին անգամ հնարավորություն է ընձեռվում իր մայրենի լեզվով հանգանանորեն ծանոթանալ Յայկական հարցի առաջացման և զարգացման մարդաբանության:

Գիրքը բաղկացած է երեք հիմնական գլուխներից և վերջաբանից: Առաջին գլուխը՝ «Յամիդականներն ու հայերը», ունի հետևյալ ենթախորագրեր՝

ա) Յայ օսմանցիները: Յավատարին համայնքը,

բ) Մտավորական զարթոնքը: Յայկական ինքնությունը,

գ) Յայ դատը: Միջազգային շահարկումը,

դ) 1894-1896 թթ. ջարդերը: Միջազգային ողջականությունը,

ե) Յայկական հեղափոխության ձախողությունը: Յուսերի վիճեցումը:

Երկրորդ գլուխը՝ «Իթթիհատականները և հայերը», ունի հետևյալ ենթավերնագրերով բաժիններ՝

ա) Թուրքականության զարգացումը: Թուրքական ինքնության հզորացումը,

բ) Յայոց ցեղասպանությունը: Ողբերգությունների մայրը,

գ) Անդրկովկաս: Աշխարհագրության անեծքը,

դ) Յայկական հանրապետությունը: Միջ թոշում՝ ձեռքբուն:

«Քեմալականները և հայերը 1919-1923 թթ.» խորագիրը կրող երրորդ գլուխն ընդգրկում է հետևյալ բաժինները՝

ա) Յետպատերազմյան շրջան: Բախումից՝ սակարկություն,

բ) Յայաստանի մանդատը: Բորոտ ուղղողը,

գ) Անատոլիական հեղափոխությունը: Թուրքական ինքնության սրբագրությունը,

դ) Սկրի դաշնագիրը: Անհնարին պատրանքը,

ե) Անատոլիական պատերազմներ: Զրիեների ներխուժումը,

զ) Լոզանի դաշնագիրը: Մի ժողովորդի ահարեկումը:

Գրքի «Յավելված» բաժնում ընդգրկված են քարտեզներ, Յայ դատին առնչվող կարևոր տարեքիր և գրքում հիշատակված հայ անձանց կենսագրական տվյալներ:

- Ըստ նույն աղբյուրի՝ Մուհամմեդ Ռիֆաաքը ալ-Իմամի գրչին է պատկանում նաև 2002 թ. լույս տեսած «Կահիրենի Օննիկը» գրքը՝ նվիրված եգիպտահայ աշխարհահեղակ գոհարավաճառ Օննիկ Ալեքսանյանի հիմնայի բազմաթիվ գործունեությունը:

- Վերոհիշյալ պարբերականի նույն տարվա դեկտեմբերյան համարից տեղեկանում ենք «Թուվեյրի գիտության զարգացման հաստատության» հրատարակած, Թուվեյրի համալսարանի բանասիրական ֆակուլտետում միջնին դարերի պատմության դասախոս Արդ ալ-Ռահման Մուհամմեդ ալ-Արդի «Յայաստանը և նրա քաղաքական հարաբերությունները բյուզանդականների և մահմեդա-

կանների հետ 653-1064 թթ.» աշխատության մասին: Յեղինակն այն բաժանել է նախարանի, վերջաբանի և հինգ գլուխների: Գլուխները վերնագրված են «Յայաստանն Արևելքի և Արևմուտքի միջև», «Յայաստանը և նրա դերը Բյուզանդիա-Օնայյան խալիֆայություն հակամարտության մեջ 653-750 թթ.», «Յայաստանը Արբասյան խալիֆայության միջև 750-884 թթ.», «Յայաստանն Արբասյան խալիֆայության ազդեցության անկման և Բյուզանդական կայսրության ազդեցության տարածման շրջանում» (885-953 թթ.) և «Յայաստանը բյուզանդական գլուխների ու մահմեդականների միջև։ Յայաստանի բուժերային պետության դերը և Բյուզանդիայի զավթողական քաղաքական քաղաքանակությունը նրա նկատմամբ 953-1064 թթ.»: Գրքում Արդ ալ-Ռահման Մուհամմեդ ալ-Արդը բազմակողմանիորեն անդրադառնում է Յայաստանի VII-XI դրադաբական պատմությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին և արաբա-բյուզանդական հարաբերություններում Յայաստանի խաղացած կարևոր դերին:

- Լիբանանյան «Ալ-Մուստակբալ» օրաթերթի 2003 թ. ապրիլի 12-ի համարում կա տեղեկատվություն 2003 թ. Բեյրութի «Ալ-Ռուսուլ» տպարանում հրատարակված հայ Սահիլ Կաշայի աշխատության մասին: «Քրիստոնյա արաբների մշակութային ժառանգությունը» խորագիրը կրող հատորում հեղինակը ներկայացնում է քրիստոնյա արաբի իրական կերպարը՝ կարևորելով նրա դերը փիլիսոփայության, աստվածաբանության և հումանիտար գիտությունների զարգացման գործունեությունը: Յ. Սահիլ Կաշայի, հիշատակելով որոշ ձեռագրեր և արժանին մատուցելով մի շարք նտածողների, բարձր է գնա-

պարբերականի նույն տարվա դեկտեմբերյան համարից տեղեկանում ենք «Թուվեյրի գիտության զարգացման հաստատության» հրատարակած, Թուվեյրի համալսարանի բանասիրական ֆակուլտետում միջնին դարերի պատմության դասախոս Արդ ալ-Արդի «Յայաստանը և նրա քաղաքական հարաբերությունները բյուզանդականների և մահմեդա-

հատում քրիստոնյաների, այդ թվում՝ արաբական Արևելքում ապրող հայերի դերն արաբական մշակութային ժառանգության ծևավորման մեջ:


- Լիբանանյան «Ալ-Ռասրու ալ-արաբի» շաբաթաթերթի և «Ալ-Մուլհարրի ալ-արաբի» օրաթերթի 2003 թ. օգոստոսի 12-ի համարներից տեղեկանում ենք սիրիացի հետազոտող Սամիր Աբդոյի նոր գրքի մասին: Դամասկոսի «Հուսն մալս» տպարանում լույս տեսած «Սիրիացիները մի քանի լեզու ունեն» խորագրով գրքում հետազոտողն անդրադարձել է ինը ու նոր ժամանակներում Սիրիայում գործածված լեզուներին, այդ թվում՝ հայերենին, լեզվական փոխառություններին և այլն:

- «Արև» արաբերեն ամսագրի 2003 թ. սեպտեմբերի համարը հայտնում է Սուլամաններ Ռիֆաաթ ալ-իմամի հերթական աշխատության՝ «Հայերը Եգիպտոսում 1896-1961 թթ.» հատորի լույս ընծայման մասին: Յատարակվել է Կահիրեում ՔԲԸ Խովանավորությամբ:

- «Ալ-Ռասրու ալ-արաբի» և «Ալ-Մուլհարրի ալ-արաբի» պարբերականների 2004 թ. տարեսկզբի համարներից տեղեկանում ենք Փարիզի «Ալ-Յաբա» տպարանում լույս տեսած «Ֆրանսիայում արևելյան ժողովուրդների ներկայացուցիչների պատմությունը» վերնագրով աշխատության մասին: Դա հեղինակի փարիզական դրվագություն է, որում գիտական անդրադարձ է կատարվում (Քրիստոսի ծննդից մինչև մեր օրերը) արևելյան ժողովուրդների ներկայացուցիչների՝ ֆրանսիա շարունակական ներգաղթին: Օգտագործելով մինչ այդ շրջանառության մեջ չեղած ձեռագրեր և բանավոր զրույցներ՝ հեղինակը տեղեկություններ է հաղորդում մոտ իննու հայրություններ ֆրանսաբնակ լիբանանցի, սիրիացի, պաղեստինցի, իրաքցի, հորդանացի, եգիպտացի, հայ և բուրջ ընտանիքների մասին:

- Ներևս Երիտասարդ Մուլհամներ Ռիֆաաթ ալ-իմամի՝ հայագիտության մեջ արդեն ունեցած մեջ ավանդին է անդրադանում Բեյրութի՝ ՀՅԴ «Ազդակ» օրաթերթն իր 2004 թ. մարտի 17-ի համարում: Խովանագիրը՝ օրաթերթի խմբագիրներից ժակ Յակոբյանը, բարձր գնահատելով ալ-ի-

մամի դերն «Արևի» արաբերեն հավելվածի խմբագրությունում, Վկայակոչում է նրա՝ Եգիպտոսի կառավարիչ Սուլամաններ Ալիի (1805-1848) հշխանության կարևորագույն էջերից մեկին նվիրված հոդվածը, որում հեղինակը ներկայացնում է նախկին զմյուռնահայ Պողոս թեկ Յովսեփյանի (1769-1844) կյանքն ու հասարակական-պետական գործունեությունը: Ըստ հեղինակի՝ Պողոս թեկ, 1819-1826 թթ. զբաղեցնելով Սուլամաններ Ալիի քարգմանչապետի, 1826-1837 թթ. Առևտորի պետական վարչության տեսչի, 1837-1844 թթ. Եգիպտական առևտորի և օտար երկրների հետ հարաբերությունների վարչության ղեկավարի պաշտոնները, բավական մեծ ազդեցություն է ունեցել Եգիպտոսում և նպաստել



Երկրի առաջընթացին:

- Այս տարվա հունվարի վերջին օրերին «Լիբանանյան մշակութային կենտրոնը» Բեյրութում լույս է ընծայել լիբանանցի պատմաբան, հայերի մասին վեց մենագրության հեղինակ, դրվագություն Սալեհ Զահր-էդ-դինի հերթական «հայկական» գիրքը՝ «20-րդ դարի հայ նշանավոր անձանց հանրագիտարանը»՝ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության (Լիսաբոն) հովանավորությանը: Սեծ ձևաչափի՝ 710 էջանոց հատորում տեղ են գտել շուրջ 60 հայ գործիչների, այդ թվում՝ Սեծ Եղեռնի նահատակ հայ գրողների ու մտավորականների կենսագրություններ, ինչպես նաև տեղեկություններ՝ հայկական ավանդական երեք կուսակցությունների, «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» և «Հայկական ժողովրդային շարժում», համահայկական և լիբանանահայ ևս ինը կազմակերպություն-

ների մասին:

Ավելացնենք, որ վերջին տարիներին արաբերեն թարգմանությամբ լույս են տեսել հայոց առնչվող և երկու հրատարակություններ:

- «Ալ-Սուստակբալ» պարբերականի 2003 թ. օգոստոսի 1-ի համարը հաղորդում է 2001 թ. Կահիրենում «Սշակույթի բարձրագույն խորհրդի» հրատարակած, ամերիկացի հետազոտող Պիրոց Պիերովիլի «Իրարանցում Սերձավոր Արևելքում (Ինպերիալիզմը, պատերազմը և քաղաքական անկայունությունը)» գրքի մասին (անգլերենից թարգմանել է Ֆախրի Լաբիբը): Յեղինակը Սերձավոր Արևելքում ազդեցության տարածման համար մեծ տերությունների միջև նրագայությունը բաժանում է երեք փուլ՝ 1818-1904 թթ., 1918-1939 թթ., 1945-1999 թթ.:

Աշխատության մեջ Պերոգլուն անդրադանում է Հայոց ցեղասպանությանը: Ըստ հեղինակի՝ թուրքական կառավարության իրականացրած Հայոց ցեղասպանությունը կենտրոնական Ասիայում «Սեծ բուրանական պետություն» ստեղծելու ծրագրի մի մասն էր: Պերոգլուն նշում է, որ հենց Արագին համաշխարհային պատերազմի ժամանակ ստեղծված քաղաքական իրավիճակը թուրքական կառավարությանը հնարավորություն տվեց իրագործելու այդ գազանաբարությունը:

- Լաբարիայում 2003 թ. լույս է տեսել Երևանի Սեսրու Մաշտոցի անվան հին ծեռագրերի հիմսիտուտ-Մատենադարանի փոխտնօրեն, պատմագիտության դոկտոր Վարդան Գրիգորյանի «Մահմեդական ազգային փոքրամասնությունների բռնի ծովումն Աղրեջանում» աշխատությունը՝ Ակմեդ Ֆադելի ռուսերենից արաբերեն թարգմանությամբ (գրքի բնօրինակը հրատարակվել է 1992 թ., Երևանում): Այս ուսումնասիրության արաբերեն հրատարակություն ունի հոլով կարևոր քաղաքական նշանակություն, քանի որ հեղինակը փաստացի հարուստ նյութի հիմնա վրա պապուցում է Աղրեջանի ազգայնամոլ իշխանությունների արտաքսման-ծուլման-ցեղասպանական քաղաքականությունը ոչ միայն հայոց և ընդհանրապես քրիստոնյաների, այլև Երկրի ոչ-թուրքացեղ նուսուլման քաղաքացիների նկատմամբ:

Հաջող Զուրաբյան

29

Այն տեսակետով, ըստ որի՝ «եթե (հարցը - քարգմանիշ) ՍԱԿ տանենք, ի հայտ կամ ցեղասպանության չգոյությունը», համոզված են, ամբողջությամբ խարեւություն է:

### Թուրքերենից թարգմանեց և ծանոթագրեց Պերծ Երգիյանը

<sup>1</sup> Ստամբուլի ամենաեվրոպական քաղանաբար:

<sup>2</sup> Յ. Բերքբայը նկատի ունի համապատասխանաբար Հունաստանի և Օսմանյան կայսրության քաղաքացի հույներին:

<sup>3</sup> Իբրիհատ վե թերաքքի (Միություն և առաջադիմություն) կուսակցությունը:

<sup>4</sup> Բառացի թարգմանվում է «Հատուկ կազմակերպություն»:

<sup>5</sup> Բառացի թարգմանվում է «խորը պետություն»: Այս արտահայտությամբ մինչ օրս նկատի ունեն Թուրքիայի քաղաքական համակարգի՝ երևացող ու չերևացող այն խմբակը, որի ձեռքում է իրական իշխանությունը:

<sup>6</sup> Նշանակում է «Շեկ փաշա»: Քենալը շիկահեր էր:

<sup>7</sup> Թուրքի տեսանկյունից՝ հայերի:

<sup>8</sup> Արածին թվականը բերված է հին, իսկ երկրորդը՝ նոր տոնմարով:

<sup>9</sup> Ազգային ուժություն, որը 1920 թ. հունվարին ընդունել է քենալի կողմնակիցներից կազմված Թուրքիայի Ազգային նեծ ժողովը՝ թուրքական խորհրդարանը:

<sup>10</sup> Սուսուլման բուլղարներ:

27

❖ Ապրիլի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի ձեռամբ և օրինությամբ կատարվել է Ծիծեռնակարերի քարձունքում կառուցվելիք մատուի հիմնարկերը:

❖ Ապրիլի 24-ին հայաշատ երկրներից Դեր Զոր են ժամանել շուրջ 6 հազար ուստավորներ: Դեր Զորի Հայոց ցեղասպանության համալիր են այցելել նաև Սիրիայի մի շարք ցեղախմբերի առաջնորդներ:

❖ Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսն ու Եկեղեցիների համաշխարհային խորհրդուոց ոչ միայն կոչ են արել «Ապրիլի 24-ը հիշատակել որպես Հայոց ցեղասպանության օր», այլև ինենց քարձաստիճան ներկայացուցիչներով մասնակցել են 90-րդ տարեկանի միջոցառումներին:

❖ Եվրոպայի թուրք աշխատավորների համադաշնությունը դատապարտել է 1915 թ. հայերի ցեղասպանությունը և ապրիլի 24-ին Երևանում թուրքական մի շարք պատվիրակությունների հետ այցելել Ծիծեռնակարերի հուշահամալիր: Հաջորդ օրը նրանք Երևանում հրավիրել են մամուլի ասուլիս: Ներողություն խնդրելով հայ ժողովրդից՝ պահանջել են Թուրքիայից Ստամբուլում կառուցել Հայոց ցեղասպանության գոհերի հուշակորող: Միջազգային մշակույթի փոխանական դաշնության (FOICA) թուրք ներկայացուցիչ Յաշար Արիֆը հայտարարել է, որ Թուրքիան ոչ միայն պետք է ընդունի Հայոց ցեղասպանությունը, այլև պետք է հնարավորություն ընձեռի սփյուռքի հայությանը վերադառնալու իր պատճական հայրենիքը, և որ, բացի քարոյական փոխահատուցումից, հայերին պետք է վերադարձվի Արևմտյան Հայաստանը:

❖ Ապրիլի 24-ին Բրատիսլավայի կենտրոնում տեղադրվել է տուֆակերտ, քանդակագործ խաչքար՝ Մեծ Եղեռնի գոհերի հիշատակին:

❖ Գերմանիայում հուշահամեսներ են կազմակերպվել Մայինի Ֆրանկ-

ֆուրտի Ս. Պողոս Եկեղեցում և Բեռլինի պատգամավորների պալատի նիստերի դահլիճում: Բեռլինի Մայր տաճարում կատարվել է հոգեհանգստյան արարողություն: Քյոլնարնակ Գրիգոր Փելիկանն անց է կացրել «Հիշողության առանցքը» ծաղկիներ և անուններ» հուշ-պերֆորմանսը և խորիրդանշական 90 կարմիր կակաչ նետել Քոնսուր:

❖ Ապրիլի 24-ին Թուրքիայի Մարդու իրավունքների գրասենյակը մանուլի ասուլիսում ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը:

❖ Ապրիլի 24-ին իրանահայ և իրանցի լեռնագնացները նվաճել են Արարատի և Սիրիանի գագաթները՝ տեղադրելով այնտեղ Եղեռնի 90-րդ տարեկանիցը խորիրդանշող պաստառ:

❖ Ապրիլի 24-ին Նյու-Յորքի հայկական եկեղեցում մատուցված պատարագից հետո շուրջ 10 հազար հայ հավաքվել է «Թայմ» հրապարակում ՀՀ և ԼՂՀ դրոշներով, ցուցապատառներով: Նոյն օրը Ս. Պատրիկ կաթոլիկ տաճարում տեղի է ունեցել էկումենիկ աղոթք և աշխարհական հայտագիր:

❖ Ապրիլի 24-ին Երուսալեմի Հին քաղաքում հիշատակի արարողություն է կատարվել Ս. Հակոբ վանքում, որին հաջորդել են սգո երթ և մոմավառություն Միոն լեռան հուշահամալիրում:

❖ Ապրիլի 24-ին Վրաստանի խորիրդարանական պատվիրակությունը ծաղկեասսակ է դրել Թբիլիսի Խոհվանքի պանթեոնում, իսկ ոգեկոչման արարողությունը տեղի է ունեցել Հավլաբարի Ս. Էջմիածնի հայկական եկեղեցում:

❖ Ապրիլի 24-ին աննախառեա ցույց է տեղի ունեցել Լոս Անջելոսի Ցոլիկուդ քաղաքում: Ամերիկյան գլխավոր հեռուստաթանկերություններն ուղիղ եթերով հեռարձակել են Հայոց ցեղասպանությունը ճանաչած 16 երկրների դրոշներով առաջնորդվող 100 հազարանց երթը:

❖ Ապրիլի 24-ին Փարիզի կարդինալը Աստվածամոր (Նորդը դամ) հրա-

կավոր տաճարում կատարել է ոգեկոչման արարողություն: Այնուհետև ժողովուրդը բողոքի ցույց է կազմակերպել Չանգ-ելիզե պողոտայում Թուրքիայի դեսպանատան, ինչպես նաև Կոմիտասի արձանի և Հայրական կամարի մոտ:

❖ Ապրիլի 24-ին Բուխարեստի Հայկական եկեղեցու հարևանությամբ բացվել է խաչքար հուշարձան՝ ցեղասպանության զոհերի հիշատակին:

❖ Փարիզի քաղաքապետարանում կազմակերպված միջոցառմանը (որին մասնակցել է շուրջ երեք տասնյակ քաղաքաբարետ), Փարիզի քաղաքապետն իր ելույթում կոչ է արել Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

❖ Ֆրանսիայի 350 հազարանոց հայ հանայնքը Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունների աջև կազմակերպել է զանգվածային ցույցեր:

❖ Ապրիլի 24-ին աշխարհի մեկուկես տասնյակ երկրների խորիրդարանականներ, պետական պաշտոնյաներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչներ, դիվանագետներ, բարձրաստիճան այլ այդեր Երևանում մասնակցեցին դեպի Ծիծեռնակարերով հուշահամալիր սգո երթին:

❖ Աշխարհի (նոյնիւ Թուրքիայի) գլխավոր ռադիոընկերություններն ու հեռուստատեսություններն անդրադել են Հայոց ցեղասպանության 90-րդ տարեկանիցն:

❖ Հայեաի մեկ տասնյակից ավելի երկրների գլխավոր և պատվավոր հյուպատոսներ, ապրիլի 25-ի առավոտյան ծաղկեասսակներ են դրել Հայոց ցեղասպանության հուշակոթողին:

❖ Համացանցի candle.direct.am կայքեցում Հիշատակի մոմ է վարել 1.446.000 մարդ:

❖ Ապրիլի 24-ին Ծիծեռնակարերով հուշահամալիրում, ի հիշատակ մեկուկես միլիոն նահատակների, գլուխ են խոնարհել ավելի քան մեկուկես միլիոն հայեր և հազարավոր այլազգիներ՝ աշխարհի տարբեր երկրներից:

## ՀՀ ԳԱԱ ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՏԱՐԱԿԱՆ - ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ստորև ներկայացված գրքերը տպագրել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակությունը՝ թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:**

«Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.),» ժողովածու, 2004, 219 էջ (A-5):

Ընդգրկում է կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերը, որոնք ուղակիորեն վկայում են 1915-18 թթ. Հայոց ցեղասպանության մասին:

Ժողովածուն կազմել և առաջարանց գրել է ակադ. Վարդգես Միքայելյանը: Նյութերը ուսւերենից թարգմանել է պատմ. գիտ. թեկնածու Վրնեն Մարությանը: Հրատարակել է «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը» մատենաշարով (թիվ 4):




ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկայի պատմաբան Արա Սարաֆյանի կազմած և խմբագրած եռահատոր նույնանուն ժողովածուի նյութերն են, որոնք հրապարակվել են Մասաչուսեթսում (ԱՄՆ), 1993-95 թթ.: Առաջին մասն ընդգրկում է Յալեափի, Բեյրութի, Դամասկոսի և Բաղդադի ամերիկյան հյուպատոսությունների գեկուցումները: Երկրորդ մասը («Սահմանամերձ շրջանները») կազմված է Տրավելոնի, Սամսոնի, Աղրիանապոլսի, Զմյուռնիայի, Մերսինի, Թիֆլիսի և Թերհրանի ամերիկյան ներկայացուցչությունների գեկուցագրերից: Երրորդում («Կենտրոնական երկրամատըրը») ամփոփված են Օսմանյան Թուրքիայի կենտրոնական շրջաններում 1915-17 թթ. տեղի ունեցած դեպքերի առթիվ ամերիկյան դիվանագետների գեկուցագրերը:

Անգլերենից թարգմանել է Հասմիկ Հայրապետյանը, խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Լավրենտի Բարսեղյան: Հրատարակվել է «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը» մատենաշարով (թիվ 5):



ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

1915-1917 թթ.



9

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» (մատենաշար), 2004, 184 էջ, չափս՝ 25,5 x 17 սմ:

Մատենաշարի 9-րդ գրքում ամփոփված են ավելի քան 10 հեղինակների գիտական աշխատություններ (ուսւերեն և անգլերեն հակիրճ ամփոփագրերով) նվիրված Հայոց ցեղասպանության պատմությանը, հայ ազգաբնակչության տեղահանությանը, 1912-14 թթ. Ավատրո-Հունգարիայի դերին Հայկական բարեփոխումների գործընթացում, հայերի ցեղասպանության



ZUSAMMENGESTELLT UND EINGELEITET VON PROF. DR. WARDGES MIKHAELIAN

արձագանքներին Մոսկվայի «Խոկրա» շաբաթաթերթի էջերում, 1914-15 թթ. ասորիների ջարդերին՝ Պարսկաստանի թուղթաբնակ վայրերում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և այլն:

Ժողովածուն հրատարակվել է ՀՀ ԱԺ մեկնասությամբ:


Անուշավան Զաքարյան, «Հայ ժողովորդի ողբերգությունը ռուս գրականագետների գնահատականներում» (ռուսերեն), 2003, 286 էջ (A-5):

Ավելի քան 350 գրավոր աղբյուրների օգտագործմանը գրված այս հասորում հեղինակը ներկայացնում է մի խումբ ռուս գրողների հասարակական-քաղաքական, գրական-մշակութային և ռազմահայրենական գործունեությունը Արևմտյան Հայաստանում 20-րդ դարի երկրորդ տասնամյակում, նրանց գնահատականները՝ հայ ժողովորդի մեծագույն ողբերգությանը:

Հատողորդ խմբագրել է պատմ. գիտ. դոկտոր Ալբերտ Խառատյանը:



ՏՐԱГԵԴԻЯ  
ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ



The Austrian Documents on the Armenian Genocide


The German attitude toward the atrocities aimed towards the Armenians. Our friends relations with Turkey should not be endangered because of these internal Turkish administrative affairs, and they should not even be mentioned in the press. This is our duty to remain temporarily silent. For that reason, if foreign countries accuse us directly by name of the German responsibility, then it will be necessary to approach the question with the greatest care and discreetness. We must not let it appear that the Armenians provoked the Turks.

Արտեմ Օհանջանյան, «1915 թվական. անհերթելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին)» (անգլերեն), 2004, 253 էջ, չափս՝ 23,5 x 17 սմ:

Ավստրիական պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Ա. Օհանջանյանն անաշօրեն ուսումնասիրել է Ավստրիայի պետական արխիվների՝ Հայկական հարցին առնչվող նյութերը և 12 ստվար հատորներով հրատարակել գերմաներեն: 1915 թ. վերաբերող որոշ վավերագրեր, որ գերմաներեն հրատարակել է առանձին գրքով (1995 թ.), տարիներ առաջ թարգմանվել են նաև հայերեն (1997 թ.) և պարսկերեն (1999 թ.): Այդ փաստաթերթը նոր լույս են սփռում Հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրականացման գործում Թարյակ դաշինքի, հատկապես Գերմանիայի մեղսակցության հարցի վրա:

«Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917 թթ. (փաստաթերթի ժողովածու)», 2004, 208 էջ (A-5):

Ժողովածուն ամփոփում է հիշյալ ժամանակաշրջանում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության առնչությանը ռուս դիվանագետների գրագրությունները, հայ և



ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ

ՀԱՅՈՒ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

1915-1917 ԹԱ.

(ՓԱՍՏԱԹԵՐԹԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ուս պատգամավորների ելույթները՝ Պետական Դումայում, Ուսւաստանի երեք կառավարությունների որոշումները, ուսւական գինվորական և կովկասյան իշխանությունների գեկուցագրերը և պաշտոնատար անձանց հարցագրույցներն ու հոդվածները:



«Յայոց ցեղասպանություն. աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու),» 2005, 652 էջ, չափսը՝ 25 x 17 սմ:


Ներկայացված են 1915-2001 թթ. հայտարարություններ, բանաձևեր, արձանագրություններ, հօչքագրեր և այլն, 1914-2004 թթ. Յայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը:

Կազմել և առաջարանը գրել է պատմ. գիտ. դոկտոր Լավրենտի Բարսեղյանը:

Կալերի Թունյան, «Երիտրուրքերը և Յայկական հարցը (1908-1912)» (ռուսերեն), առաջին մաս, 2005, 392 էջ (A-5):

Մենագրության առաջին գրքում քննարկվում է Օսմանյան կայսրության կառավարող՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերաբերմունքը Յայկական հարցի նկատմամբ, փոխադրեցությունները հայկական քաղաքական հաստատությունների՝ Ազգային ժողովի, Կ. Պոլսի պատրիարքարանի, քաղաքական կուսակցությունների հետ, ինչպես նաև՝ հայրության փոխարքերությունները Երիտրուրքերի իշխանության գալու պահից մինչև նրանց առաջին կառավարության անկումը (1908-12 թթ.):

Ուսումնասիրությունը նվիրված է Մեծ Եղեռնի 90-րդ տարելիցին:



Կալերի Թունյան, «Երիտրուրքերը և Յայկական հարցը (1912-1914)» (ռուսերեն), Երկրորդ մաս, 2005, 552 էջ (A-5):

Մենագրության երկրորդ գրքում քննարկվում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերաբերմունքը Յայկական հարցի նկատմամբ՝ 1912 թ. օգոստոս - 1914 թ. նոյեմբեր ժամանակահատվածում, վերլուծվում է աշխարհաքաղաքական իրավիճակը, եթե գերտերությունների նախաձեռնությամբ սկսվում է նախապատրաստվել Ասխական Թուրքիայի բաժանումը՝ Արևելյան հարցի լուծման նպատակով:

Հարադրված են Օսմանյան կայսրությունում հայկական բարեփոխումների շուրջ տեղի ունեցած պայքարի մանրամասները, ցույց է տրված Օսմանյան Թուրքիայում Յայկական հարցի լուծման Երիտրուրքերի տարրերակը՝ հայերի բնաջնջման ուղին:

«Յայ ժողովորդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին» («Յամաշխարհային պատերազմից հայ ժողովորդի կրած վնասների քն-



նից համձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), 2005, 239 էջ (A-5):

Փաստացի նյութը հնարավորություն է տալիս օբյեկտիվ պատկերացում կազմել և անաշարժական տալ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովորդի կրած վնասների հաշվառման և դրանց փոխհատուցման ուղղությամբ՝ Թիֆլիսում 1918 թ. վերջից մինչև 1920 թ. սկիզբ գոյատևած Յամձնաժողովի գործունեության մասին, որը ցայսօր հանդիրավի մոռացության է մատնված:

Կազմել, ծանոթագրել և առաջարանը գրել է բան. գիտ. թեկնածու Անուշավան Զաքարյանը:

Մանուկ Արամեան, «Մեծ Եղեռն», պիես, 2005, 72 էջ (A-5):

Թատերգորթյան գլխավոր գործող անձինք Յայոց ցեղասպանության զոհերից են Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Ուրբեն Սևակը, Սիամանթոն, Կոմիտաս Վարդապետը, ինչպես նաև՝ Վարուժանի և Սևակի տիկինները, Թալեաթը, Լեփսիուսը և ուրիշներ:



Տիգրան Սարուխանյան, «Յայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.)», 2005, 202 էջ (A-5):

Տեղինակն անդրադարձել է Յայկական հարցին՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Յայոց ցեղասպանությանը, Մեծ Բրիտանիայի ռազմադիվանագիտությանը՝ 1915-16 թթ., Անտանտի երեք մեծ տերությունների՝ Ուսւաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի՝ 1915 թ. նախիսի 24-ի համատեղ հայտարարությանը, Յայոց ցեղասպանության իրավականացման պաշտոնական անգիլական գործընթացին, 1915-18 թթ. Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Յայկական հարցի քննարկմանը և այլ հարցերի:

Բենիամին Պողոսյան, «Յայանապատ շարժումը Մեծ Բրիտանիայում 1914-1923 թթ.», 2005, 174 էջ (A-5):

Ներկայացված են հայանպատ շարժման նախադրյաներն ու նախապատմությունը Մեծ Բրիտանիայում, շարժման էվլուսիան, հայանպատ կազմակերպությունների աշխատանքները, լորդ Զեյմս Բրայսի գործունեությունը՝ խնդրո առարկայի ոլորտում և այլն:

Ուսումնասիրությունն ունի նախաբան, վերջաբան, ռուսերեն և անգլերեն անգլոփոխումներ, օգտագործված սկզբանաբրյուրների և գրականության ցանկ: Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Լավրենտի Բարսեղյան:



Արամ Անանյան, «Յայոց ցեղասպանության



Ժխտման նոր փորձ», 2005, 92 էջ (Ա-5):

Անդրադարձ է Թուրքական պատմական ընկերակցության հրատարակած «Հայեր. աքսոր և գաղթ» աշխատությանը, Վերիանված է Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության երեսակներից մեզը՝ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվի վերաբերյալ Անկարայի պաշտոնական պատմագրության հակագիտական մոտեցումը:

Տիգրան Մաքոսյան, «Հայոց ցեղասպանություն և Հրեական Հոլոքոստ. համեմատական փորձ», 2005, 182 էջ (Ա-5):

Մենագրության առաջին մասում հեղինակն անդրադառնում է Հայոց ցեղասպանության և հրեական ողջակիզման հիմնական գործոններին, երկրորդում՝ ցեղասպանության և ողջակիզման իրագործմանը:

Գիրքն ունի ներածություն, անգերեն ամփոփում, օգտագործված գրականության ցանկ:



«Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923 թթ.)», գիրք 1: Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-հիմնարկություն և «Նահապետ» հրատարակչություններ, 2004, 67 էջ (Ա-4):

Մատենաշարի առաջին գիրքն է նվիրված Սեբաստիայի նահանգին: Առաջին անգամ փորձ է արվում ամբողջացնել Օսմանյան թուրքիայի տարածությ երիտրությունից քաղաքականության զոհարձակ հայերի ցուցակը:

Կազմել են Լուսինե Խաչատրյանը և Արփինե Բարլումյանը: Հովանավորել են Գևորգ, Սամվել և Հասմիկ Դավթյանները:



«Ցուցակ Հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923 թթ.)», գիրք 2: Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-հիմնարկություն և «Նահապետ» հրատարակչություններ, 2004, 70 էջ (Ա-4):

Մատենաշարի երկրորդ գիրքը նվիրված է Խարբերդի նահանգին: Գավառ առ գավառ, այբբենական կարգով ներկայացված են զոհերի առաջմն մեզ հայտնի անունները:

Կազմել են Լուսինե Խաչատրյանը և Արփինե Բարլումյանը:

Հրատարակությունը հովանավորել է Գագիկ Գևորգյանը (Մոսկվա) և Երախտագիտությամբ նվիրել այն իր ծնողներին՝ Այսա Զաքինյանին և Գուրգեն Գևորգյանին:

Բյորն Էգգե, «Ֆրիտյոֆ Նանսենի պայքարը հանուն մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության», 2003, 27 էջ (Ա-5):

Յոդվածի հիմքում հեղինակի՝ Նանսենի հիշատակին 1994 թ. հոկտեմբերի 10-ին Նորվեգիայի գիտությունների և գրականության ակադեմիայում կարդացած դասախոսությունն է:

Գրքույկն ունի ներդիր՝ լուսանկարներ: Խմբագրել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր Լավենենի Բարսեղյանը:

Դորա Սաքայան, «Զմյուռնիա, 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը»: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» և «Նահապետ» հրատարակչություններ, 2005, 224 էջ (Ա-5):

Լեզվաբան և լեզվագետ Դորա Սաքայանը (Կանադա) արևելահյ ընթերցողին է ներկայացրել իր պապի օրագիրը, որտեղ մանրամասնորեն նկարագրված են բժիշկ Խաչերյանի և նրա ընտանիքի, ինչպես նաև Զմյուռնիայի հայերի և հույների տառապանքները՝ 1922 թ. սեպտեմբերի աղետի օրերին:

Թեսսա Հոֆմանի նախարանը գերմաներենից, ինչպես նաև օրագրի մասին անգլերեն, հունարեն, գերմաներեն և ֆրանսերեն կարծիքները թարգմանել է Դորա Սաքայանը: Արևմտահյերեն տեքստերը արևելահյերենի է փոխադրել Լարիսա Գևորգյանը, խմբագիր՝ Լառուրա Մանուկյան:

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակությունները կարելի է ձեռք բերել թանգարան-ինստիտուտի գրախանություն:

Դեռ.՝ 39-09-81:

